задевая принципиальных интересов России в этом щепетильном вопросе. Такое компромиссное решение, как представляется, вполне может устроить российскую сторону, учитывая положительную динамику в ее нынешних отношениях с Поднебесной. Расширение грузино-китайского сотрудничества может со временем способствовать участию Тбилиси также в тех международных организациях, в которых весомо представлены интересы Москвы и Пекина. К слову, речь может возникнуть, в частности, об интеграции этой кавказской страны в структуры ШОС³⁰. Это обстоятельство, в свою очередь, поможет нахождению кардинальных развязок тех проблемных узлов, которые лежат тяжелым спудом на российско-грузинских отношениях. Тем более что урегулирование отношений между Грузией и Россией лишь в двустороннем формате становится все менее перспективным. Сближение с Китаем позволит Тбилиси чувствовать себя увереннее, не слишком смутив при этом Кремль. В комплексе такое развитие событий открывает новые возможности для диалога, который на данной стадии не потребует от сторон пересмотра их базовых установок или совершения уступок, неприемлемых по внутривнутриполитическим причинам. Несмотря на понятные объективные трудности, с которыми еще придется столкнуться, в российско-грузинских отношениях в моделируемой нами новой ситуации возникнет окно возможностей, а само обсуждение их перспектив может вестись в более свободном и непредвзятом ключе. Более того, в определенный момент китайская сторона, допуская, не сможет более избегать обсуждения комплекса российско-грузинских отношений, так как будет нуждаться в необходимости принципиальных гарантий своих же немалых инвестиций в Грузию.

Таким образом, можно определить новый способ достижения цели: обоюдное сближение с Китаем Москвы и Тбилиси станет пози-

³⁰ Пекин согласен, чтобы Грузия стала членом Шанхайской Организации Сотрудничества? URL: <https://inosmi.ru/world/20060628/228450.html> (дата обращения: 7.11.2018).

тивным путем для нормализации также отношений Грузии и России. На такой базе допустимо сформулировать приемлемый модус-вивенди, модератором которого, пожалуй, может выступить Пекин, выстраивающий сегодня партнерские отношения по всем азимутам. Китай представляется сегодня как не заикленный исключительно на своих краткосрочных интересах игрок, а как сила, которая вкладывается в долгосрочные и выгодные всем его партнерам отношения.

Рациональная защита своих интересов в Евразии позволяет Китаю проводить позитивную и инклюзивную политику. Из всего этого можно сделать вывод, что и на Южном Кавказе Поднебесной пока удастся следовать приемлемому для всех курсу. И это действительно так. Пекин укрепляет связи с тремя южнокавказскими странами, избегая ловушек классической геополитики. Тем не менее увеличение китайского участия в экономике Южного Кавказа неизбежно повлечет за собой также и усиление здесь его геополитического влияния. Причем, не в отдельно взятой стране, а во всем регионе. Таким образом, можно со всей определенностью сказать, что и в дальнейшем стоит крайне пристально следить за дипломатией «Шелкового пути» Китая, которая впереди, несомненно, обещает еще много интересных новаций.



**АНДРАНИК
ОВАННИСЯН**

*Эксперт
НОФ «Нораванк»*

КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВЫ ДИАСПОРАЛЬНОЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ И КИТАЯ

К настоящему времени концептуальные основы диаспоральной политики Армении и Китая в отношении своих зарубежных общин оформились и приобрели стабильный характер, став важной составной частью для обоих государств. В Армении о роли армянской диаспоры начали активно говорить еще в советское время (1940-1950-ые гг.), когда армянский народ, отправивший на фронты Второй мировой войны более трети населения Армянской ССР (около 500 тысяч человек), нуждался в человеческих ресурсах после окончания войны, которые приняли бы активное участие в становлении и развитии своей родины. В 1970-ые гг. о значимости роли диаспоры в процессе становления и развития исторической родины начали говорить в КНР. Данная идея была представлена в программе экономических реформ («Политика реформ и открытости») Дэн Сяопина, которые начались в 1978г. и продолжают по сей день. В 2007г. экс-генеральный секретарь ЦК КПК Ху Цзиньтао на 4-й Всемирной

дружеской конференции ассоциаций зарубежных китайцев заявил: «Неустанным трудом на протяжении многих поколений в суровых условиях зарубежные китайцы добились выдающихся успехов в целом ряде областей и внесли неоценимый вклад в дело независимости и возрождения китайской нации, в дело реформ, открытости и модернизации Китая, укрепления взаимопонимания и дружбы между китайским народом и народами всего мира»¹. Значительную роль диаспоры в своих выступлениях не раз подчеркивали и главы Республики Армения. В одном из своих выступлений экс-премьер-министр РА Серж Саргсян отметил: «Наша общая цель – иметь развитую, сильную экономику и народ, объединенный идеей строительства хорошей Армении. Диаспора сильна Арменией, а Армения – своей Диаспорой»².

На современном этапе китайская и армянская диаспоры, по мере своих возможностей, делают все, чтобы содействовать развитию и прогрессу не только стран проживания, но и принять активное участие в модернизации своих этнических родин. Более того, они являются некими «мостами», которые соединяют и способствуют установлению доверительных и дружеских отношений между этническими родинами и странами проживания. Тем самым диаспоры вносят неоценимый вклад в дело мира и развития во всем мире. Полагаем, что фундаментом современной диаспоральной политики Китая послужили идеи Дэн Сяопина, внесенные в «Политику реформ и открытости» конца 1970-х гг. В этом контексте особого внимания заслуживает следующий тезис Дэн Сяопина: «Если говорить о Китае, возможностей для значительного развития у него не так уж много. Однако, в отличие от других стран мира, у него есть

¹ Доклад экс-генерального секретаря ЦК КПК Ху Цзиньтао на IV-й Всемирной дружеской конференции ассоциаций зарубежных китайцев, <http://md.china-embassy.org/eng/gdxw/t1507416.htm>, 10.10.2018г.

² Доклад экс-премьер-министра РА на IV-м Всеармянском форуме «Армения-Диаспора», <https://www.mfa.am/ru/paforum/>, 10.10.2018г.

свои особые возможности. Например, у нас есть несколько десятков миллионов патриотов-соотечественников за морем, они уже внесли большой вклад в развитие страны» [2, с. 168]. Когда мы говорим о конкретных направлениях сотрудничества Китая со своей диаспорой (хуацяо), к примеру: политика привлечения инвестиции, обучение китайских студентов за границей, политика репатриации и другое, то необходимо отметить, что Дэн Сяопин, собственно говоря, чего-то принципиально нового не открывал, так как это все уже имело место в истории Китая. Однако принципиальная новизна подхода Дэн Сяопина состояла в том, что он вписал хуацяо с их столь необходимым для КНР финансово-экономическим и интеллектуальным потенциалом в стратегический план возрождения страны. Он поднял сотрудничество с диаспорой на уровень первостепенных государственных задач, объявив важнейшей функцией государства – служение всей китайской нации.

Справедливости ради отметим, что аналогичную политику чуть ранее (1940-1950-ые гг.) в отношении своей диаспоры (спюрк) пытались реализовать в жизнь высшее руководство Советской Армении, однако в диаспоре мнения разошлись. Так, представители социально-демократической партии «Гнчак» (арм. Հնչակ — «колокол») всячески развивали дружеские взаимоотношения с СССР и, соответственно, с Арменией, а представители партии «Дашнакцутюн» (арм. Հայ Յեղափոխական Հանրապետություն — «Армянская революционная федерация») проводили в диаспоре антисоветскую политику. Вследствие этого армянская диаспора была раздроблена и не имела крепких и единых доверительных отношений с Советской Арменией. После того как в 1991 году развалился СССР, и 15 бывших советских республик (в том числе Армения) стали полноправными субъектами международных отношений, спюрк начал активно помогать этнической родине. Армяне диаспоры внесли ощутимый вклад в дело отстаивания народом Арцаха (НКР) своей независимости, а также помогли Республике

Армения в постсоветский период, когда экономика страны находилась на очень низком уровне, а народу элементарно не хватало даже продуктов первой необходимости. Без экономической помощи со стороны диаспоры Армении было бы гораздо труднее преодолеть тяжелейший постсоветский период 1990-ых годов и обеспечить нормальное функционирование экономики.

Армения и КНР охотно и активно выполняют выпавшую им роль, если можно так сказать, покровителей или, по крайней мере, культурных центров всех армян и, соответственно, китайцев планеты. Ежегодно в обоих государствах проходят такие мероприятия, которые способствуют сплочению с диаспорой («Всемирная конференция китайцев» и «Всемирный армянский конгресс»). Каждый год из РА и КНР в те или иные страны направляются делегации с целью ознакомления с историей и современным состоянием находящихся там национальных общин. К примеру, китайские делегации призывают представителей своей диаспоры «способствовать великому делу объединения родины». Как известно, руководители КНР ведут с Тайванем непримиримую борьбу за влияние в диаспоре с тем, чтобы полностью изолировать его от внешнего мира. Армянские же делегации призывают представителей диаспоры активно участвовать в деле признания геноцида армян в Османской империи, а также способствовать признанию независимости второго армянского государства – Республики Арцах (НКР).

Неотъемлемой частью диаспоральной политики Армении и КНР является приобщение представителей своих диаспор к национальной культуре, причем, к культуре в широком смысле этого слова, включая и историю, и знания о современном состоянии родины, и родной язык. Правительства обеих государств считают важным, чтобы собраты диаспоры ощущали постоянную живую связь со своей этнической родиной, гордились великой цивилизацией и новым возвышением этнических родин, стремились внести собственный вклад в дело

его модернизации. Культурные связи с диаспорами Армении и КНР осуществляют в самых разнообразных формах. Ереван и Пекин крупными партиями издают учебную литературу по родному языку, отечественной истории, культуре и географии. При активной помощи официальных представителей своих диаспор они отправляют эти учебные пособия за рубеж. В странах компактного проживания диаспор открываются школы, храмы и центры по изучению родного языка (конфуцианские центры, воскресные школы и др.), а для работающих там преподавателей – курсы усовершенствования, поездки на историческую родину для участия в конференциях и совещаниях по обмену опытом. Для детей же создаются летние лагеря, где они имеют возможность воочию познакомиться с исторической родиной и одновременно изучать родной язык, культуру и историю. Так, специально для обучения молодых людей китайской национальности из-за рубежа в КНР существует несколько вузов, находящихся в ведении эмиграционной службы Госсовета (например, Цзинаньский университет в Гуанчжоу). Аналогичные вузы существуют и в Армении. В частности, к таковым можно отнести Российско-Армянский университет, где более 40% от числа студентов и администрации составляют представители армянской диаспоры³. Помимо научно-образовательной части, существуют и культурно-туристические мероприятия, направленные на сближение представителей диаспоры со своей исторической родиной. Для молодежи из диаспоры организуются различные туристические путешествия по стране. В Китае такие поездки именуется «Приникнем к китайским корням». В 2017 году в них участвовало более 5 тысяч человек, у которых благодаря этому усилилось чувство национальной гордости и интерес к китайской культуре⁴. Армения также проводит аналогичные мероприятия. С 2009г. в стране успешно

³ *Официальный сайт Российско-Армянского университета*, <http://rau.am/rus/>, 14.10.2018г.

⁴ *Туризм в Китае*, <http://www.cnto.org/news/>, 14.10.2018г.

стартовала программа «Ари тун», в которой могут принять участие представители армянской молодежи диаспоры в возрасте от 13 до 17 лет. Основные цели данной программы – знакомство молодых армян диаспоры с историей, культурой и общественной жизнью Армении, семейными и духовными традициями. Содействовать формированию устойчивой связи с родиной и укреплению их национального самосознания, а также установлению тёплых отношений с армянскими сверстниками Армении и диаспоры⁵.

Разумеется, в диаспоральной политике, как и в любой другой, не обходится без путаницы, формализма и негатива. Одной из наиболее заметных негативных реакций является критика от ряда китайских ученых-диаспорологов в отношении диаспоральной политики КНР. В частности, видный китайский деятель Фэ Цзямэн предупреждает, что политика в отношении иностранных граждан китайского происхождения должна быть осмотрительной, корректной, чтобы неосознанно не подставить их под удар. «Некоторые считают так: если в твоих жилах течет китайская кровь – ты обязан быть патриотом. Как складывается судьба зарубежных китайцев, мы, выходит, можем не беспокоиться, да и не беспокоимся: мол, если причиним им ущерб – ничего страшного. Они – дети и внуки «желтых предков», должны любить страну, вносить вклад в четыре модернизации – и так они и будут делать. Подобный образ мыслей является идеалистическим и вредным» [6, с. 265]. В несколько ином плане укреплению связей эмиграции с родиной способствует внимание правительства к реэмигрантам. В КНР оно отнюдь не сводится к коммерческим проектам – привлечению предпринимателей или квалифицированных специалистов. Высшие руководители КНР оказывают покровительство всем реэмигрантам, среди которых есть и немалое число беженцев, вынужденных в свое время спешно вернуться на родину, спасаясь от раз-

⁵ *Официальный сайт программы «Ари тун»,*
<http://aritun.am/ru/about-the-project-2/>, 16.10.2018г.

ного рода неурядиц и опасностей. Для соотечественников, попавших в такое положение, в стране созданы специальные условия⁶. На современном этапе взаимоотношений Республики Армения с диаспорой данная связь очень слаба. Процесс адаптации репатриантов проходит не так просто, так как помощь со стороны государства не так активна, как, к примеру, в КНР. В начале 1990-ых годов Армения приняла сотни тысяч армянских беженцев из Азербайджанской Республики, которые, недолго прожив в Армении, по большей части переселились в иные государства (РФ, США и ЕС). Если это можно было оправдать экономической неспособностью страны на оказание помощи на тот период времени, то по какой причине тысячи армянских беженцев, покинувших Ирак и Сирию за последние несколько лет, также не задерживаются надолго на этнической родине? Полагаем, что причина может быть в том, что за годы независимости в стране так и не было создано «Министерство абсорбции», которое отвечало бы за помощь, оказываемую со стороны государства иммигрантам и репатриантам из диаспоры.

Диаспоры Армении и Китая участвуют в разнообразных и разномасштабных благотворительных акциях. Систематический характер носят пожертвования представителей диаспоры на развитие своих этнических родин. В Китае 70% таких пожертвований приходятся на провинцию Гуандун, где находится множество «цяосян» – мест исхода эмигрантов. В случае же с армянской диаспорой ежегодно проходят телефонные и телевизионные марафоны Всеармянского фонда «Айастан». Собранные средства в обоих случаях идут на строительство, ремонт и реконструкцию школ, библиотек, театров и кинотеатров, домов культуры, а также мостов, дорог, водохранилищ и гидроэлектростанций. Здесь нелишне отметить, что представители армянской и китайской диаспоры вносят серьезный

⁶ *Стратегия национальной безопасности КНР*,
http://www.ciis.org.cn/chinese/2018-02/26/content_40232263.htm, 18.10.2018г.

вклад в благосостояние родины, переводя из-за рубежа своим родственникам денежные средства. По данным ЦБ РА, в целом в Армению за 2016г. приток денежных переводов составил \$1 532,8 млн. В *Таблице 1* представлен список государств, откуда РА больше всего получает денежные переводы (трансферты).

Таблица 1
Приток трансфертов в Армению за 2017г. (в долларах США)⁷

Страна	Сумма перевода (в миллионах)
Российская Федерация	853,1
США	144,7
Казахстан	32, 1
Германия	32
ОАЭ	21,7
Франция	20,5
Другие	273,8

Несомненно, путь к единению диаспоры с этнической родиной лежит также через создание разнообразных и многочисленных общественных организации и землячеств, которые способствуют укреплению связей диаспоры с исторической родиной. Важным инструментом в деле сплочения диаспоры являются местные армяноязычные и китаеязычные СМИ. К примеру, Китай таким СМИ дает следующие рекомендации: «Больше писать, больше говорить, больше сообщать обо всем, что полезно для установления гармонии в китайских общинах; и не писать, не говорить, не сообщать о том, что не приносит пользы для установления гармонии» [4, с. 248]. Необходимо отметить, что крайне тяжело точно установить, в какой мере эти рекомендации выполняются, но сами по себе они уже свидетельствуют о больших возможностях официального Пекина влиять на жизнь диаспоры. Армения также использует данный метод влияния на диаспору, в част-

⁷ *Официальный сайт ЦБ РА, <https://www.cba.am/>, 20.10.2018г.*

ности, через армянские газеты, которые широко распространены в общинах. В наши дни большое внимание уделяется также социальным сетям и интернет-порталам, которые также служат инструментами влияния этнической родины на диаспору.

Одним из главных направлений в работе Армении и Китая со своими диаспорами является привлечение инвестиций и технологий. Дешевая рабочая сила и потенциально безграничный рынок служат здесь сильнейшими козырями Китая, однако для доступа к ним должны быть созданы соответствующие условия, прежде всего, законодательная база. Основопологающим документом здесь является «Постановление Госсовета о поощрении инвестиций хуацяо и соотечественников из Сянган (Гонконга) и Аомэня (Макао) от 19 августа 1999 г.»⁸, а также «Постановление Госсовета о поощрении иностранных инвестиций от 11 октября 1986 г.». Их дополняют и конкретизируют другие постановления центральных и местных органов власти. В случае с Арменией немного иначе. Во-первых, это небольшой рынок (менее 3 миллионов человек), во-вторых, нахождение страны в блокаде со стороны двух (Турция и Азербайджанская Республика) из четырех граничащих с ней государств, в-третьих, это вопрос стабильности и безопасности, а точнее потенциальная военная угроза со стороны Азербайджанской Республики (многолетний статус «ни войны, ни мира»), и, конечно, в-четвертых, высокий уровень коррупции в стране (107 место в 2017г.)⁹. Полагаем, что эти и другие факты являются основополагающими причинами, которые отрицательно влияют на инвестиционную политику страны даже в среде армян диаспоры. В Китае же созданы разнообразные каналы связи с потенциальными инвесторами, практикуются разнообразные формы инвестиций, поощряется ввоз технологий

⁸ *Официальный сайт Государственного совета КНР*, <http://www.gov.cn/>, 22.10.2018г.

⁹ *Индекс восприятия коррупции в 2017г., опубликованный «Transparency International»*, <https://www.transparency.org/>, 27.10.2018г.

и экспорт готовой продукции. При этом эмигранты с иностранным гражданством в вопросах инвестиций фактически приравнены к эмигрантам – китайским гражданам. Однако в отдельных случаях вторые имеют преимущество перед первыми. Приоритетное положение хуацяо закрепляется в ст. 5 «Постановления», где говорится: «Если инвестор – хуацяо или соотечественник из Сянгана или Аомэня вкладывает капитал и создает полностью принадлежащее ему или совместное предприятие, такой инвестор помимо льгот, предоставленных настоящим «Постановлением», пользуется всеми льготами, которые предоставляются предприятиям с иностранным капиталом соответствующими законами и положениями государства»¹⁰. Данная инвестиционная политика властей КНР оправдывает себя. К слову, более 80% от всех инвестиции в страну поступают от представителей китайской диаспоры, в основном Юго-Восточной Азии.

В последнее время, поставив своей задачей освоение западных районов страны (СУАР), руководство КНР уделяет все большее внимание участию в этой работе зарубежных китайских предпринимателей. Ведающая ими Канцелярия Госсовета помогает представителям китайской диаспоры вместе с местными властями создавать совместные структуры в западных провинциях в интересах развития сельского хозяйства и промышленных технологий. Необходимо также отметить, что данный регион КНР станет отправной точкой для одного из крупнейших экономических проектов XXI века «Нового Великого Шелкового пути», который соединит Западную Европу с Западным Китаем. Естественно, немаловажную роль в данном проекте играет и китайская диаспора, которая способствует установлению доверительных и дружеских отношений стран проживания с Китаем. Статус Армении, как транзитной страны в данном проекте, до сих пор не определен, к слову, проект уже функционирует, а первые грузопотоки были доставлены в Европу в обход РА. В рам-

¹⁰ *Официальный сайт Государственного совета КНР*, <http://www.gov.cn/>, 22.10.2018г.

ках проекта может быть реализована железная дорога «Баку-Тбилиси-Карс» (Китай-Казахстан-Азербайджанская Республика-Грузия-Турция-Европа), а железнодорожная магистраль «Иран-Армения», которая имела бы положительную роль в интеграции Армении к данному проекту, так и не построена. Однако есть и положительная динамика. Активно строится автомагистраль «Север-Юг», в реализацию которой определенный вклад внесли и армяне диаспоры. Благодаря усилиям диаспоры, в скором будущем на карте появится третий путь, который будет связывать Арцах с Арменией (по побережью р. Аракс).

Заключение

Подводя итог, необходимо подчеркнуть важность роли, отводимой диаспоре, воспринимая ее как своего рода «продолжение» Армении и Китая. Высшие руководители данных государств неизменно присутствуют на посвященных им общенациональным мероприятиях, а, выезжая за границу, включают в обязательные программы своих визитов встречи с представителями местных общин. Результаты исследования показали, что в решении задач по взаимодействию с армянской и китайской диаспорами задействован широкий круг государственных и общественных институтов, структурных подразделений министерств и ведомств, посольства и другие механизмы воздействия, и взаимодействия РА и КНР. Основные функции по вопросам сотрудничества с диаспорами возложены на МИД РА и КНР. Вопросы правовой защиты этнических армян и китайцев заложены в ряде законодательных актов Республики Армения и КНР, а также в межправительственных соглашениях со странами пребывания по обоюдной защите граждан и о возможности взаимного трудоустройства. Весь этот комплекс стал фундаментом для исторического, политического, юридического и морально-психологического оформления новой государственной политики в отношении армян и ки-

тайцев зарубежья. Вышеописанные мероприятия и законы демонстрируют стремление РА и КНР защищать права и интересы своих соотечественников, а также упрочить социокультурные связи с диаспоральными сообществами по всему миру.

Источники и литература

1. *Hong L.* The Chinese Overseas, N.Y.: ASQ, 2006. Vol. 1 – P. 148
2. *Ma L., Cartier C. Lanham.* The Chinese Diaspora: Space, Place, Mobility, and Identity, N.Y.: ASQ, 2013 – P. 168
3. *Redding G.* The spirit of Chinese capitalism, Berlin: Suhrkamp Verlag, 1990 – P. 364
4. *Purcell V.* The Chinese in Southeast Asia, London: Kelmscott Press, 2003 – P. 248
5. *Wei Z.* Why Is Foreign Investment in China Concentrated in the Coastal Areas? // N.Y.: Harvard Asia Quarterly, 2015. P. 76
6. *Бирюков В.* Китайцы в США и американо-китайские отношения на современном этапе, Москва: Проспект, 1983 – С. 214
7. *Ларин А.* Китай и зарубежные китайцы, Москва: Просвещение, 2014 – С. 255
8. *Доклад экс-генерального секретаря ЦК КПК Ху Цзиньтао на IV-й Всемирной дружеской конференции ассоциаций зарубежных китайцев*, <http://md.china-embassy.org/eng/gdxw/t1507416.htm>, 10.10.2018г.
9. *Доклад экс-премьер-министра РА на IV-м Всеармянском форуме «Армения-Диаспора»*, <https://www.mfa.am/ru/paforum/>, 10.10.2018г.
10. *Индекс восприятия коррупции в 2017г., опубликованный «Transparency International»*, <https://www.transparency.org/>, 27.10.2018г.
11. *Официальный сайт Государственного совета КНР*, <http://www.gov.cn/>, 22.10.2018г.
12. *Официальный сайт программы «Ари тун»*, <http://aritun.am/ru/about-the-project-2/>, 16.10.2018г.
13. *Официальный сайт Российско-Армянского университета*, <http://rau.am/rus/>, 14.10.2018г.
14. *Стратегия национальной безопасности КНР*, http://www.ciis.org.cn/chinese/2018-02/26/content_40232263.htm, 18.10.2018г.
15. *Туризм в Китае*, <http://www.cnto.org/news/>, 14.10.2018г.



ԹԻԱՆ ԷՐԼՈՒՆ

ՀՀ-ում ՉԺՀ

Արտակարգ և լիազոր դեսպան

**Հարգելի հյուրեր, տիկնայք և պարոնայք,
սիրելի բարեկամներ
Բարի առավոտ**

Ուրախ եմ այսօրվա միջազգային գիտաժողովին մասնակցելու հնարավորության համար, որը նվիրված է, ըստ մեզ, մեծ իրադարձության՝ Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականության 40-ամյակին: Փաստը, որ այսօր այստեղ հավաքվել են բազմաթիվ հայ բարեկամներ, գիտնականներ և մասնագետներ՝ թեմայի շուրջ մտքերի խորացված փոխանակման համար, վկայում է այն մասին, որ Հայաստանում մեծ ուշադրությամբ հետևում են արդի Չինաստանի զարգացմանը, բարեփոխումների և բաց քաղաքականության անցկացման ընթացքին, ինչպես նաև ողջ աշխարհի համար այդ քաղաքականության կարևոր նշանակությանն ու հեռուն գնացող ազդեցությանը:

Ինչպես հայտնի է, 1978թ. դեկտեմբերին, ՉԿԿ Կենտկոմի 11-րդ գումարման 3-րդ պլենումում, Չինաստանի ականավոր պետական գործիչ պարոն Դեն Սյաոպինի նախաձեռնությամբ տրվեց պատմական՝ բարեփոխումների և բաց դռների քաղաքականու-

թյան մեկնարկը: Ինչպես նշեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Չինփինը, «բարեփոխումների և բաց քաղաքականության անցկացումը վճռորոշ է Չինաստանի համար: 30 տարվա ընթացքում տեղի են ունեցել Չինաստանի կերպարի վիթխարի փոփոխություններ»: Տեղի է ունեցել պատմական մեծ բեկում երկրի զարգացման մեջ: Խոսքը Չինաստանի և համաշխարհային զարգացման պատմության ֆենոմենի, նախ՝ երկրի շարունակական և դինամիկ զարգացման մասին է: Բավական է ասել, որ 40 տարվա ընթացքում Չինաստանի ՀՆԱ-ն ավելացել է ավելի քան 30 անգամ, իսկ տարեկան միջին աճը կազմել է 9.5%: Այդ ընթացքում զգալիորեն ամրապնդվել է պետության ընդհանուր հզորությունը: Չինաստանը հետամնաց երկրից (այն ժամանակ՝ բարեփոխումների սկզբում, աշխարհի 11-րդ տնտեսությունն էր) վերածվել է աշխարհի երկրորդ տնտեսության: Դարձել է արդյունաբերական ապրանքների խոշորագույն արտադրողը, արտաքին առևտրի ամենամեծ ծավալը և ոսկու-արժույթի ամենամեծ պաշարներն ունեցող երկիրն աշխարհում: Մի քանի տարի շարունակ չինական տնտեսության աճը կազմում է համաշխարհային տնտեսական աճի ավելի քան 30%-ը: Երկրորդ՝ սա նշանակում է ժողովրդի բարեկեցության շարունակական բարելավում: Եթե, ասենք, 1978թ. մեկ շնչին միջինը բաժին ընկնող ՀՆԱ-ն Չինաստանում կազմում էր ընդամենը 381 յուան, ապա 2018թ. այդ ցուցանիշն աճել է մինչև գրեթե 60.000 յուան (մոտ \$8.800), այսինքն՝ ավելացել է 22.5 անգամ, տարեկան միջինը 8.5% աճով: Չինաստանը մտել է աշխարհում միջին կամ միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրների շարքը: Երկրի տնտեսական աճն ապահովում է (սա շատ կարևոր է) բնակչության կենսամակարդակի կայուն բարձրացում և սոցիալական ապահովության համակարգի անընդհատ կատարելագործում, ինչը թույլ է տալիս մեր ժողովրդին ավելի վստահ լինել վաղվա օրվա հանդեպ, ավելի անվտանգ ու անխոցելի և, ի վերջո, ավելի երջանիկ:

40 տարիների ընթացքում Չինաստանում ընդհանուր առմամբ 740 մլն մարդ թոթափել է աղքատությունը, ձևավորվել է, թերևս, աշխարհում միջին եկամուտներ ունեցող մարդկանց ամենաստվար շերտը: Երկրի եռափուլ զարգացման՝ ՉԿԿ 19-րդ համագումարում մշակված ռազմավարական պլանի համաձայն՝ 2020թ., այսինքն՝ երկու տարի հետո Չինաստանում վերջնականապես կառուցված է լինելու այսպես կոչված «միջին ապահովվածության հասարակությունը»՝ ըստ Կոնֆուցիուսի, ի բարօրություն երկրի բնակչության ավելի քան մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն մարդու:

Երրորդ՝ Չինաստանը լիովին ինտեգրված է շրջակա աշխարհին: Չինաստանի և շրջակա աշխարհի փոխհարաբերությունները 40 տարիների ընթացքում պատմական փոփոխությունների են ենթարկվել: Հավատարիմ մնալով բաց դռների քաղաքականությանը՝ Չինաստանն արմատական անցում է կատարել փակ կամ կիսափակ քաղաքականությունից համակողմանի բաց քաղաքականության: Այսպիսով, Չինաստանը սեփական զարգացումը սերտորեն կապում է գլոբալ զարգացումների հետ՝ օտարերկրյա կապիտալի և առաջավոր տեխնոլոգիաների ներգրավումը համադրելով դեպի միջազգային շուկա չինական կապիտալի դուրս գալու և միջազգային ներդրումային համագործակցության ակտիվացման հետ, համատեղ զարգացման շանսերը կիսում է աշխարհի բոլոր երկրների հետ: Չինաստանն ակտիվ մասնակցություն է ունենում գլոբալ այնպիսի բազմակողմանի մեխանիզմների գործունեության մեջ, ինչպիսին են ՄԱԿ-ը և ԱՀԿ-ն, հանդես է գալիս հոգուտ համամարդկային ճակատագրի ընկերակցության կերտման, նախաձեռնել է «Մետաքսի ճանապարհ» և «Շովային մետաքսի ճանապարհ» տնտեսական գոտու համատեղ կառուցումը: Դրանով իսկ Չինաստանը ծանրակշիռ ավանդ է ներդնում գլոբալ զարգացման և գլոբալ կառավարման համակարգի բարեփոխման մեջ:

Ո՞րն է բարեփոխումների և բաց քաղաքականության հաջողության գաղտնիքը: Կարծում եմ, սա էլ հենց կլինի այսօրվա գիտաժողովի հետաքրքիր բանավեճի թեման: Ցանկանում եմ առանձնացնել, ըստ իս, մի քանի կարևոր գործոններ: Առաջինը և ամենագլխավորը, թերևս, այդ զարգացման ճանապարհի որոնումները և ընտրությունն են, ինչն առավելագույնն է համապատասխանում մեր երկրի կոնկրետ իրողություններին, այն է՝ չինական առանձնահատկությամբ սոցիալիզմի ճանապարհը: Միևնույն ժամանակ, Չինաստանը բաց է այլ երկրների առաջավոր փորձը փոխառելու, բայց ոչ երբեք այլ երկրների զարգացման մոդելները կույր պատճենելու հարցում: Ելնելով այն բանից, որ գոյություն չունի բոլոր հիվանդությունները բուժելու դեղամիջոց, ուրեմն՝ չկա նաև բոլոր երկրների խնդիրները լուծելու ունիվերսալ մոդել:

Երկրորդ՝ բարեփոխումների և բաց դռների քաղաքականությունը համապատասխանում է չինացի ժողովրդի՝ ավելի լավ, ավելի երջանիկ կյանքի ակնկալիքներին ու ձգտումներին, վայելում է համընդհանուր սատարում և, որպես արդյունք, դրանում լիովին դրսևորվում է մեր ժողովրդի ստեղծարար ուժը: Ինչպես վերջերս նշեց նախագահ Սի Չինփինը, ժամանակակից Չինաստանի ձեռքբերումներն արդյունք են չինացի ժողովրդի անձնուրաց աշխատանքի: Կարելի է ասել, որ աշխատասեր չինացի ժողովուրդը 40 տարիների ընթացքում հրաշք է գործել: Երրորդ՝ բարեփոխումների և բաց դռների քաղաքականությունը համընթաց է ժամանակին և գլոբալ ինտեգրման ու համատեղ զարգացման ընդհանուր միտմանը:

Պրակտիկան ցույց է տալիս, որ բաց քաղաքականությունը տանում է դեպի առաջընթաց, մինչդեռ փակ լինելը՝ դեպի հետամնացություն: Այս տարի նախագահ Սի Չինփինը կրկին ընդգծեց, որ Չինաստանի դարպասները չեն փակվելու, դրանք էլ ավելի լայն են բացվելու: Այս համատեքստում Չինաստանը հետազայում ևս

կշարունակի զարգացնել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը, խորացնել փոխշահավետ միջազգային համագործակցությունը, ջանքեր գործադրել նոր տիպի միջազգային հարաբերություններ և համամարդկային ճակատագրի ընկերակցություն ձևավորելու ուղղությամբ:

Չին-հայկական բարեկամական կապերը վաղեմի ավանդույթ ունեն, որոնց արմատները գնում են դեպի հնագույն «Մետաքսի ճանապարհի» դարաշրջանի խորքերը: Մեր երկրների միջև 1992թ. դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Չինաստանի և Հայաստանի հարաբերությունները զարգանում են առողջ և կայուն հիմքի վրա: Դրանք բնութագրվում են փոխադարձ վստահության բարձր մակարդակով, տնտեսական համագործակցության և հումանիտար փոխանակումների զարգացման լավ դինամիկայով: Ես համոզված եմ, որ Չինաստանի հետագա քայլերը բարեփոխումների և բաց քաղաքականության ուղղությամբ նոր տարածք, նոր հնարավորություններ կընձեռեն չին-հայկական համագործակցության խորացման համար:

Վերջում ցանկանում եմ մեկ անգամ ևս ողջունել այսօրվա գիտաժողովի բոլոր մասնակիցներին, երախտագիտություն հայտնել «Նորավանք» հիմնադրամին կազմակերպչական մեծ աշխատանքի համար և հաջողություն մաղթել մեր այսօրվա գիտաժողովին:

Շնորհակալություն:

ՀԵՐՄԻՆԵ ՆԱԴԴԱԼՅԱՆ

*ՀՀ 6-րդ գումարման
Ազգային ժողովի
պատգամավոր*



ԴԵՆ ՍՅԱՈՊԻՆԸ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարակեսին և 21-րդ դարասկզբին Չինաստանի արձանագրած հսկայական նվաճումները՝ տնտեսության և ժողովրդի կենսամակարդակի վերելքի, գիտության և տեխնիկայի, կրթության և մշակույթի զարգացման առումներով, անխզելիորեն կապված են Չինաստանի ականավոր պետական գործիչ Դեն Սյաոպինի գործունեության հետ, որը դրեց կայուն սոցիալ-տնտեսական զարգացման հիմքերը՝ աշխարհի ամենաբազմամարդ երկիրը դուրս բերելով քաղաքական քառսի, աղքատության և հետամնացության ճիրաններից և այն կանգնեցնելով զարգացած երկրների շարքում: Դեն Սյաոպինը, երկրի ներսում հռչակելով շուկայական բարեփոխումների, իսկ արտաքին աշխարհի հանդեպ բացության քաղաքականություն, առաջ քաշեց «չինական առանձնահատկությամբ սոցիալիստական արդիականացման» ռազմավարությունը: Նրա ղեկավարությամբ իրականացված բարեփոխումների փորձը վիթ-

խարի հետաքրքրություն է առաջացնում աշխարհում: Այդ հետաքրքրությունը հիմնված է Չինաստանի իրական հաջողությունների (որոնք ձեռք են բերվել պատմական չափանիշներով կարճագույն ժամկետներում) և այն բարեփոխումների հետ չինական փորձի անխուսափելի համադրման վրա, որոնք իրականացվել են տարբեր երկրներում, ԽՍՀՄ-ում (գոյության վերջին տարիներին) և հետխորհրդային տարածքի անկախ պետություններում:

Դեն Սյաոպինն իր երկար քաղաքական կարիերայի ընթացքում քանիցս վերելքներ և անկումներ է ունեցել, շնորհագրովվել է և մեծարվել, նրան ձերբակալել են, քննադատել և անգամ հակահեղափոխական տարր անվանել: Մաո Յզեդունի մահվանից հետո՝ 1976թ. սեպտեմբերին, Դեն Սյաոպինը հերթական անգամ վերականգնվեց իր նախկին պաշտոններում և սկսեց կյանքի կոչել «չորս մոդերնիզացիաների» (գյուղատնտեսության, արդյունաբերության, պաշտպանության, գիտության և տեխնիկայի)՝ ՉՇՀ ղեկավարության ընդունած ուղեգիծը: 1978թ. տեղի ունեցած ՉԿԿ ԿԿ 11-րդ գումարման երրորդ պլենումը սկիզբ դրեց ՉՇՀ զարգացման նոր բարեփոխումների փուլին: Այդ պահից ի վեր Դեն Սյաոպինը դառնում է չինական տնտեսության գլխավոր բարեփոխիչն ու փաստորեն՝ երկրի գլխավոր ղեկավարը: Այդ ժամանակ էլ ձևակերպվում են բարեփոխումների ռազմավարության հիմնական տեսական ու ծրագրային դրույթները:

Ինչպես նշում են հետազոտողները, Դենը ժառանգել էր «բզկտված և «մշակութային հեղափոխությունից» հետո փաստորեն չհայտարարված քաղաքացիական պատերազմի մեջ գտնվող Չինաստան», և նա դարձավ նոր մտածողության հեղինակ, մշակեց «չինական առանձնահատկությամբ սոցիալիզմի» սկզբունքը, դարձավ տնտեսական բարեփոխումների նախաձեռնողն ու իրականացնողը և երկիրը համաշխարհային շուկայի մաս դարձրեց:

Բարեփոխումները երկրի առջև դրեցին չինական տնտեսության արդիականացման ֆինանսավորման համար բավարար հավե-

յլալ արժեքի ստեղծման նպատակ, տնտեսություն, որը գտնվում էր աղետի եզրին՝ «մեծ թռիչքի» քաղաքականության ձախողման և Մառ Յզեդունի կառավարման օրոք ընդունվող վոյունտարիստական որոշումների հետևանքով: Բարեփոխումների առաջնային խնդիրն էր աշխատավորների և գյուղացիների մոտիվացիայի խնդրի լուծումը և տնտեսական անհամամասնությունների վերացումը:

Սոցիալիստական արդիականացման նպատակը դարձավ XXIդ. կեսին Չինաստանը զարգացած պետությունների մակարդակ դուրս բերելը և այդ հիմքի վրա նրա քաղաքացիների համընդհանուր բարեկեցության ապահովումը: Արդիականացման ճանապարհը տանում է դեպի արագացված տնտեսական աճ, տնտեսության որակական թարմացում և դրա արդյունավետության բարձրացում՝ գիտատեխնոլոգիական պոտենցիալի զարգացման հիման վրա: Գիտության և տեխնիկայի զարգացման խնդիրը Դեն Սյաոպինը կապում էր արդիականացման իրականացման գործում մտավոր աշխատանքի և առհասարակ հասարակության մեջ մտավորականության դերի բարձրացման հետ:

Պետական հիմքը՝ սոցիալիզմը, կարգ է, որը թույլ է տալիս ապահովել նյութական և մարդկային ռեսուրսների անհրաժեշտ կուտակում՝ արագացված սոցիալ-տնտեսական զարգացման և համընդհանուր բարեկեցության հասնելու համար՝ թույլ չտալով, որպեսզի հանրային հարստության հիմնական մասը կուտակվի հասարակության փոքր հատվածի ձեռքում: Բայց արդեն արդիականացման ռազմավարության մշակման սկզբում Դեն Սյաոպինը հրաժարվեց հետևել ԽՍՀՄ-ում ընդունված սոցիալիստական շինարարության կանոնների դոգմաներին և սկսեց որոնել սեփական մոդել՝ չինական առանձնահատկությամբ սոցիալիզմի մոդելը:

Այդ մոդելի **տնտեսական հիմքը** արտադրամիջոցների հանրային սեփականությունն է՝ զուգահեռաբար տնտեսության ոչ սոցիալիստական հատվածների (ներառյալ՝ մասնավոր հատվածը) զարգացման խրախուսմամբ: Դեն Սյաոպինը հրաժարվեց պլանի և

շուկայի հակադրումից՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը դիտարկելով լոկ որպես միջոց պետության ձեռքին, որոնք չեն բնորոշում նրա էությունը, բարեփոխումների շրջանում ՉԺՀ ղեկավարությունն աստիճանաբար, միջանկյալ մի շարք փուլերի միջոցով, ընդլայնում էր շուկայական հարաբերությունների դերը՝ որպես տնտեսության զարգացման գլխավոր կարգավորիչ:

Արդիականացման իրականացման **հիմնական միջոցներն** են բարեփոխումները և բաց քաղաքականությունը: Բարեփոխումների նպատակն էր արտադրահարաբերությունները համապատասխանեցնել արտադրաուժերի զարգացման խնդիրներին, որպեսզի արտադրահարաբերությունները չդառնան երկրի զարգացման արգելակիչ գործոն: Իսկ բաց քաղաքականությունը նախատեսված է այն բանի համար, որպեսզի ՉԺՀ-ն ներառվի տնտեսության գլոբալացման գործընթացում և մարդկային ընկերակցության կյանքի այլ ոլորտներում, որպեսզի ակտիվորեն ներգրավվի օտարերկրյա կապիտալը, օգտագործվեն գիտության և տեխնիկայի նվաճումները, կառավարչական փորձը՝ վերջնարդյունքում Չինաստանի մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

Չինական տնտեսական բարեփոխումների փուլերը. Բարեփոխումներն իրականացվում էին մի քանի փուլով: Հաճախ դրանք չեն կազմել տեսական որևէ հայեցակարգի մասը, այլ եղել են պարզապես ամենահանապազօր խնդիրների համարժեք, փորձով ստուգված պատասխանը: Դեն Սյաոպինը, ինչպես և ոչ ոք, չի ունեցել բարեփոխումների իրականացման հետ կապված բարդ հարցերի պատրաստի պատասխաններն այնպիսի վիթխարի երկրում, ինչպիսին Չինաստանն է: Այդ ծրագիրը մշակվում էր «գետն անցնել՝ քարերը շոշափելով» մեթոդով, կարգախոս, որը Չինաստանում կիրառվում է որպես խնդիրների լուծման զգուշավոր մոտեցման հոմանիշ: Վերափոխումների հաջողությունը կանխորոշող գլխավոր գործոններից մեկը բարեփոխումների աստիճանական, էվոլյուցիոն բնույթն էր, ի տարբերություն առկա կարգերի վրա

սրընթաց այն գրոհի, որն իրականացվեց հետխորհրդային որոշ երկրներում, մասնավորապես՝ Հայաստանում:

Տնտեսական բարեփոխումները Չինաստանում շատերի կողմից, հատկապես Արևմուտքում, ընկալվեցին որպես անցում կապիտալիզմին, մանավանդ որ տնտեսական վերափոխումների գործընթացն ուղեկցվում էր Արևմուտքի (ԱՄՆ, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա) հետ հարաբերությունների բարելավմամբ: Սակայն, թերևս, գաղափարախոսական հակասություններից խուսափելու համար չինական կառավարությունը պնդում է, որ այն լույ սոցիալիզմի ձև է: Միննույն ժամանակ, կառավարությունը չի ժխտում, որ օգտագործում է տարբեր տնտեսական միջոցներ, որոնք կիրառվում են կապիտալիստական երկրներում: Դեն Սյաոպինն այդ հակասությունը բացատրում էր Գուանչժոուի կոնֆերանսում արած իր հանրահայտ արտահայտությամբ. «Կարևոր չէ, թե ինչ գույնի է կատուն, գլխավորն այն է, որ նա մուկ բռնի», ինչպես նաև Մարքսից այն մեջբերմամբ, որ պրակտիկան ճշմարտության գլխավոր չափանիշն է:

Բարեփոխումների փուլերը. երկրի սոցիալ-տնտեսական բարեփոխման առաջին փուլը սկսվել է ՉԿԿ ԿԿ 11-րդ գումարման երրորդ պլենումից հետո, որը տեղի է ունեցել 1978թ. դեկտեմբերին: Չինական տնտեսական բարեփոխման առաջին մասը վերաբերում էր գյուղատնտեսությունում ընտանեկան կապալի համակարգի ստեղծմանը, որը փոխարինելու եկավ կազմացրված «կոմունաներին», «մեծ» ու «փոքր» բրիգադներին: Քաղաքներից դուրս հողերը հայտարարվեցին «գյուղացիների կոլեկտիվի» սեփականություն: Այսպիսով, հողի կոլեկտիվ սեփականության պահպանումը թույլ տվեց ծխական կապալը հայտարարել սոցիալիստական տնտեսության մաս: Դա փաստորեն սկիզբ դրեց արդիականացման նոր ուղղությունների ձևավորման համար, բայց ընտանեկան կապալի համակարգի սահմաններից դուրս: Արտադրական և տնտեսական գործունեության ոչ հողագործական ձևերի աճը, որոնք Չինաստանում հայտնի են որպես ավան-գավառակային ձեռնարկություններ,

վկայում էր գյուղում աշխատանքի հանրային բաժանման նոր փուլի մասին:

Այնուհետև, իրավիճակի կայունացման և շուկայի ձևավորման հիմքի ստեղծման միջոցով 80-ականների կեսերին սկսեցին բարեփոխումներ իրականացվել քաղաքում: Դեն նետվեցին համահավասարեցման կարծրատիպերը, հնարավորություն տրվեց, որպեսզի սկզբում մարդկանց և շրջանների որոշ մասը նյութապես ապահովվի՝ արագացնելու համար ընդհանուր տնտեսական զարգացումը, որը թույլ կտար հետագայում օգնության հասնել հետ մնացող շրջաններին, ճյուղերին և այլն:

Տնտեսության այլ հատվածների մեծ մասում կառավարության դերը նվազեցվեց, ղեկավարներին տրվեցին ավելի մեծ վարչարարական լիազորություններ, ձեռնարկություններում խրախուսվում էր եկամտաբեր արտադրությունը, բարձրացավ մասնավոր սեկտորի դերը, սեփականատիրության նոր ձևերով փորձարկումներ սկսվեցին նաև պետական հատվածում: Ճնշումն արտաքին առևտրի վրա թուլացվեց, իսկ ձեռնարկությունների միավորումներն օտարերկրյա ընկերությունների հետ պաշտոնապես խրախուսվում էին որպես նոր տեխնոլոգիաների և դեֆիցիտ արտարժույթի աղբյուրներ:

Բարեփոխման երկրորդ փուլում տեղի ունեցան պլանային համակարգի ապամոնտաժում և անցում շուկայական տնտեսության: Այնուհետև, հաջորդ փուլում նախաձեռնվեց հատուկ տնտեսական գոտիների ստեղծման գործը: Ստեղծվեցին դեպի արտաքին շուկա կողմնորոշված հատուկ տնտեսական շրջաններ (ՇՏԾ), ինչպես նաև բաց տնտեսական գոտիներ ափամերձ շրջաններում, անմաքսատուրք գոտիներ, բաց ափամերձ քաղաքներ, ինչն ապահովում էր օտարերկրյա ներդրումների լայն ներգրավումը:

Արտաքին քաղաքականությունում ներդրվեց «բաց դռների քաղաքականությունը», որի համաձայն՝ ՉԺՀ-ն թույլատրում էր

միջազգային առևտուր իրականացնել և ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ:

Այնուամենայնիվ, դեպի շուկա տանող շարժումը դժվարին էր, և արդեն բարեփոխումների սկսվելուց 10 տարի հետո անցումը դեռ հեռու էր ավարտված համարվելուց: Տնտեսական ակտիվության սահմանափակումների նվազեցումն արագ թեթևացրեց Չինաստանի որոշ, առավել լճացած տնտեսական բարդությունները, բայց և խթան հանդիսացավ որոշ նոր խնդիրների աճի համար: Ինֆլյացիան, որը չինացի սպառողների գլխավոր ահուսարսափն էր, առաջին անգամ խնդրահարույց դարձավ 1950-ականների սկզբին: Շահույթ ստանալու նոր հնարավորությունների հետ միասին ի հայտ եկան եկամուտների աճող անհավասարությունը, նոր գայթակղություններ հանցագործությունների համար, կառույցիա, ինչպես նաև արժեքների արևմտյան համակարգ, որն ավագ սերնդի շատ չինացիներ դիտարկում էին որպես անկում և «հոգևոր պղծում»: Պետությունը նախկինի պես վերահսկում էր ամենամեծ ոչ գյուղատնտեսական ձեռնարկությունները և արդյունաբերության ճյուղերի զգալի մասը և դեռևս շարունակում էր ղեկավարվել կենտրոնական պլանավորմամբ:

Մեփականության ձևերի բազմազանության հաստատումը. *Որոշակի փուլում կարևոր է ոչ թե սեփականության ձևը, այլ ձեռնարկության շահութաբերությունը, այսինքն՝ թույլատրելի է սեփականության ցանկացած ձև, եթե ապահովվում է շահութաբերության որոշակի՝ նվազագույն չափով թույլատրելի մակարդակ:*

Մեկը մյուսի հետևից իրականացնելով Չինաստանի վերափոխմանն ուղղված բարեփոխումները՝ Դեն Սյաոպինը բախվեց սեփականության խնդրին: Բանն այն է, որ գյուղում տնտեսավարման կազմակերպման փոփոխությունը թույլ տվեց նորաթուխ տնային տնտեսություններին վաստակ ունենալ, մեծացավ սեփական գործ բացելու համար անհրաժեշտ կապիտալի չափը: Բացի

այդ, օտարերկրյա գործարարները նույնպես փորձեցին Չինաստանում բացել իրենց ձեռնարկությունների մասնաճյուղերը: Այս գործոնները դարձան սեփականության կոլեկտիվ, մունիցիպալ, անհատական, օտարերկրյա և այլ ձևերի գոյացման պատճառ:

Հետաքրքիր է, որ իշխանությունները չէին ծրագրում նման բազմազանություն մտցնել: Այդ բազմազանության ստեղծման պատճառը սեփական կուտակումներ ունեցող բնակչության՝ ինքնուրույն ստեղծվող ձեռնարկություններ բացելու և ընդլայնելու անձնական նախաձեռնությունն էր: Մարդկանց հետաքրքիր չէր լոկ մասնավորեցված պետսեփականության մասնակից լինելը, նրանք ցանկանում էին սկզբից նեթ ունենալ իրենց գործը: Իսկ բարեփոխիչները, նրանց պոտենցիալը տեսնելով, որոշեցին պաշտոնապես ամրագրել քաղաքացիների՝ մասնավոր սեփականություն ունենալու, անհատական գործարարություն վարելու իրավունքը: Այնուամենայնիվ, «վերնից» ամենամեծ աջակցությունն ստանում էր օտարերկրյա կախիտալը. օտարերկրյա ներդրողներին տրամադրվում էին տարբեր արտոնություններ ՉԺՀ տարածքում սեփական գործ բացելիս:

Այսպիսով, չինական տնտեսությունը 1980-ական թթ. վերջին բավական խառը համակարգ էր ներկայացնում: Այն չէր կարելի բնութագրել ոչ որպես պլանային տնտեսություն, ոչ որպես շուկայական: Ղեկավարությունը հետապնդում էր բարեփոխումների ծրագրի հետագա ընդլայնման նպատակ՝ որպես բավարար չափով տնտեսական աճի անհրաժեշտություն, բայց միևնույն ժամանակ նա ստիպված էր ուշադրությունը կենտրոնացնել տնտեսության առանցքային ուղղությունների, հատկապես գնաճի և հացահատիկի արտադրության վրա: Մի կողմից՝ տնտեսությունն արդեն այնքան էլ ուժեղ չէր վերահսկվում պետական պլանավորմամբ՝ շուկայական ճյուղի մեծ աճի պատճառով: Մյուս կողմից՝ շուկան չէր կարող արդյունավետ աշխատել, քանի որ շատ ապրանքներ դեռ գտնվում էին պետվերահսկողության ներքո և գների մեծ մասը

դեռևս զսպվում կամ սահմանափակվում էր կառավարության կողմից: Դեն Սյառայինի ղեկավարությամբ ողջ երկիրն առաջ էր շարժվում «վագրին հեծած»՝ դեպի բարձր առաջընթաց, բայց առանց տոտալ վերահսկողության, ուստի և արդեն անհնար էր կանգնեցնել գործընթացն առանց ռիսկի:

Ընդհանուր առմամբ, այն ժամանակ Դեն Սյառայինի ձեռնարկած քայլերն իրականացվում էին երկկողմանի կոնֆլիկտների և դիմակայության պայմաններում. մի կողմում նրանք էին, ովքեր մնում էին սոցիալիզմի նախկին մոդելի (սեփականության համընդհանուր պետականացման և համահավասարեցման) դիրքերում, մյուս կողմում նրանք էին, ովքեր պահանջում էին հրաժարվել սոցիալիզմից և փոխ առնել դեմոկրատիայի արևմտյան համակարգը:

Չինական տնտեսությունն, այնուամենայնիվ, կազմակերպվեց որպես կենտրոնական պլանավորմամբ կառավարվող սոցիալիստական համակարգ: Պետության և կոլեկտիվ սեփականության գերիշխանությունը, ընկերությունների կենտրոնական կառավարումը ֆինանսական համակարգի փոխարեն, ռեսուրսների վերաբաշխումը շրջանների միջև, հացահատիկի բաշխումը և բնակարանի սուբսիդավորված հատկացումն իրենց արտացոլումը գտան եկամտունների բաշխման համակարգում, որոնք շատ ավելի սահմանափակ էին, քան գրեթե բոլոր մյուս զարգացող երկրներում: Գյուղատնտեսական վարելահողերը վարձով տրվում էին ֆերմերական ընտանիքներին, բայց ձևականորեն գտնվում էին գյուղերի, փոքր քաղաքների, ավանների (խմբային միավորներ, որոնք փոխարինելու էին եկել կոմունաներին) ենթակայության ներքո:

1980-ական թթ. կեսերին չինացիների մեծ մասն արևմտյան չափանիշներով մնում էր աղքատության մեջ, բայց նրանց կյանքի որակը զգալիորեն ավելի բարձր էր, ինչի մասին խոսում էին մի շարք ցուցանիշներ. բնակչության մեկ շնչին ընկնող օրական կերակրաբաժինը, կյանքի տևողությունը, մահացությունը,

էներգիայի միջին սպառումը, որոնք արդեն այն ժամանակ մոտ էին միջին զարգացած երկրների ցուցանիշներին:

Եվ այնուամենայնիվ, շուկայական հարաբերություններին անցումը երկու գլխավոր խնդիր առաջացրեց: Նախ՝ կենտրոնական պլանավորման ավարտը պահանջում էր ստեղծել ֆինանսական քաղաքականության, բանկային համակարգի և կապիտալի շուկաների կայացման մեխանիզմներ: 1990-ականներին հսկայական աշխատանք կատարվեց այդ համակարգերը գործողության մեջ դնելու համար:

Մյուս խնդիրն ի հայտ էր գալիս պետական ձեռնարկությունների հետ կապված: Եկամուտների և ծախսերի՝ շուկայական գների անցման արդյունքում պետական ձեռնարկությունների մեծ մասը սկսեց վնասով աշխատել: Ժամանակի ընթացքում հարցը լուծվեց բանկային վարկերի միջոցով, բայց դա առաջ բերեց պարտքերի չլճարման մեծ քանակություն: 1990-ականների վերջին – 2000-ականների սկզբին այս խնդիրը վերացվեց անշահավետ պետական ֆաբրիկաների փակմամբ և սոցիալական ապահովագրման համակարգերի զարգացմամբ:

Բարելավելով հարաբերություններն արտաքին աշխարհի հետ՝ Դեն Սյաոպինն, այնուամենայնիվ, գերակա էր համարում տնտեսական բարեփոխումների իրականացումը Չինաստանում: Սոցիալական, քաղաքական և տնտեսական համակարգերը երկրի ներսում ենթարկվում էին լուրջ փոփոխությունների: Դեն Սյաոպինը պնդում էր, որ Չինաստանը գտնվում է սոցիալիզմի զարգացման առաջին աստիճանին և որ կուսակցության պարտքն է «զարգացնել չինական առանձնահատկությամբ սոցիալիզմը»: Գաղափարախոսական սկզբունքներն սկսեցին նվազագույն դեր խաղալ տնտեսությունում, ինչը ժամանակի ընթացքում ապացուցեց իր արդյունավետությունը: 1992թ. մարտին Դեն Սյաոպինը ՉԿԿ ԿԿ Քաղբյուրոյի նիստում հայտարարեց. «Չարժե կաշկանդվել գաղա-

փարախոսական և գործնական արտոնարկտ վեճերով, թե ինչ անուն է կրում այս ամենը՝ սոցիալիզմ, թե՞ կապիտալիզմ»:

Տնտեսական բարեփոխումն, ըստ Դեն Սյաոպինի տեսության, անհնար է առանց քաղաքական համակարգի բարեփոխման: Քաղաքական-գաղափարախոսական վերնաշենքը նրա տեսությունում բնութագրվում է որպես պրոլետարիատի դիկտատուրա Չինաստանի Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Երկրի քաղաքական կյանքը կառուցվում է Դեն Սյաոպինի առաջ քաշած «չորս հիմնական սկզբունքներին» համապատասխան՝ ընթանալ սոցիալիստական ուղիով; հավատարիմ մնալ պրոլետարիատի դիկտատուրային; ՉԿԿ ղեկավարությանը և մարքսիզմ-լենինիզմին; Մաո Յզեդունի գաղափարներին՝ հանուն բարեփոխումների բնականոն ընթացքի գլխավոր ներքին պայմանի՝ քաղաքական կայունության ապահովման:

Որևէ շեղում այս գծից դեպի քաղաքական-գաղափարախոսական ազատականացում չէր թույլատրվում: Դեն Սյաոպինը հրաժարվեց փոխ առնել դեմոկրատիայի արևմտյան մոդելը՝ իշխանության երեք ճյուղերի բաժանմամբ և հանուն իշխանության կուսակցությունների պայքարով, այն հարմար չհամարելով չինական պայմանների համար: Իսկ քաղաքական բարեփոխման բովանդակությունը կայանում էր իշխանության ներկայացուցչական մարմինների (Ժողովրդական ներկայացուցիչների ժողովներ և այլն)՝ ներկայում գոյություն ունեցող համակարգի արդյունավետության բարձրացման, նրանց վերահսկող գործառույթի և գործունեության դեմոկրատական սկզբունքների ընդլայնման, վարչարարական ապարատի պարզեցման և կրճատման, կուսակցական և վարչական մարմինների, կենտրոնի և տեղերի միջև լիազորությունների հստակ բաժանման մեջ:

Դեն Սյաոպինի ծրագրի կենսագործումն անխզելիորեն կապվում է այն տեսլականի հետ, որ Չինաստանը վերածվի արդիական

իրավական պետության, որը կառավարվում է օրենքների հիման վրա՝ Կոմկուսի ղեկավար կարգավիճակի և ՉԺՀ-ում գոյություն ունեցող ժողովրդական ներկայացուցիչների ժողովների ու ՉԿԿ ղեկավարության ներքո բազմակուսակցական համագործակցության պահպանմամբ:

Թե՛ քաղաքական համակարգի բարեփոխման անցկացման հարցում, թե՛ ընդհանրապես արդիականացման գործընթացում հատուկ նշանակություն է տրվում իշխող կառավարությանը՝ որպես սոցիալ-քաղաքական կայունության երաշխավորի, առանց որի անհնար է հաջողությամբ անցկացնել արդիականացման ուղեգիծը, ուստի կուսակցաշինության, կուսակցական կարգապահության ամրապնդման և ներկուսակցական վերահսկողության ուժեղացման հարցերը մշտապես գտնվում են ՉԿԿ ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Չինաստանի արդիականացման ռազմավարության մշակման գործընթացում Դեն Սյաոպինը հեռացավ արդի աշխարհի զարգացման նախկին հայեցակարգից, որը հանգեցվում էր նրան, որ դրա հիմքը կազմում էին համաշխարհային պատերազմն ու հեղափոխությունը: Դեն Սյաոպինի տեսության համաձայն՝ ՉԺՀ արդիականացման հաջող իրականացումը բնորոշող և երաշխավորող հիմնական պայմաններն են զարգացումը և խաղաղությունը:

Վերջապես, Դեն Սյաոպինի արդիականացման ծրագրի անքակտելի մասն է կազմում երկրի միավորման գործընթացի ավարտումը՝ «մեկ պետություն՝ երկու կարգ» բանաձևով, որը նախատեսում է, ՉԺՀ-ի հետ վերամիավորումից հետո, Սյանգանում, Աոմենում և Թայվանում գոյություն ունեցող կապիտալիստական կարգի պահպանում:

Տնտեսական բարեփոխումները Չինաստանում բնավ նման չէին ԽՍՀՄ-ում Միխայիլ Գորբաչովի նախաձեռնած վերակառուցմանը, որտեղ գրեթե բոլոր վերափոխումները պարտադրվում էին վերևից տրվող հրահանգով և Գորբաչովի անձնական գաղափարն

էին: Իսկ Չինաստանում, ընդհակառակը, բարեփոխումները նախաձեռնվեցին ներքևից և քաջալերվեցին վերևի կողմից:

Դենը մահացավ 1997թ., 92 տարեկան հասակում: Նա պաշտոնապես հռչակվել է «մեծ մարքսիստ, պրոլետարական մեծ հեղափոխական, պետական գործիչ, գորահրամանատար և դիվանագետ; Չինաստանի Կոմունիստական կուսակցության, Չինաստանի Ժողովրդա-ազատագրական բանակի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գլխավոր ղեկավարներից մեկը; չինական տնտեսական բարեփոխումների և սոցիալիստական արդիականացման մեծ ճարտարապետ»: Նրան հաճախ անվանում էին պարզապես «ընկեր Դեն», առանց որևէ տիտղոսի, ինչպես հիմա հաճախ անվանում են նաև նախագահ Սիին:

Դեն Սյաոպինի հուշարձանը Շենչժենում. Ես չեմ եղել Շենչժենում և միայն կարդացել եմ այդ հուշարձանի մասին: Բայց կարծում եմ, որ բոլոր նրանք, ովքեր եղել են Չինաստանում, Դենի բազմաթիվ հուշարձաններ են տեսել: Ասեմ միայն Պուդունում գտնվող հանրահայտ հուշարձանի մասին: Իր զարգացումը 90-ականներին սկսելով բրնձի դաշտերի մշակմամբ՝ Պուդունը 15 տարվա ընթացքում վերածվեց ողջ Չինաստանի ֆինանսական և գործարար կենտրոնի: Շրջանի մակերեսը է 523 կմ² է, բնակչությունը՝ 1,5 մլն մարդ: 1990թ. Պուդունում հիմնականում դաշտեր և գյուղեր էին, երբ 1992թ. Դենի այսպես կոչված «հարավային շրջագայությունից» հետո Չինաստանի կառավարությունը որոշում ընդունեց նրա տարածքում հիմնել հատուկ տնտեսական գոտի: Պուդուն շրջանի արևմտյան ծայրամասը հատկացվեց ֆինանսական նոր կենտրոնի կառուցմանը: 1990-ական թթ. գոտում կառուցվեց մի քանի շենք, որոնք ճարտարապետական առումով նորարարություն էին և կոչված էին բարձրացնել Պուդունի գրավչությունը: Դրանց թվում էին «Արևելյան մարգարիտ» հեռուստաաշտարակը, Չին Մաո, Շանհայի համաշխարհային ֆինանսական կենտրոնի երկնաքերները, Շանհայի աշտարակը: Պուդունի հյուսիս-արևել-

քում է գտնվում ազատ առևտրի խոշորագույն գոտին մայրցամաքային Չինաստանում, ինչպես նաև արտահանվող ապրանքների մշակման գոտին, որը մեծությամբ երկրորդ արդյունաբերական գոտին է շրջանում: Պուդունի կենտրոնում է տեղակայված բարձր տեխնոլոգիաների պարկը, որտեղ զբաղվում են բարձրտեխնոլոգիական արտադրությամբ:

Պուդունի տարեկան համախառն ներքին արդյունքը կազմում է մոտ \$60 մլրդ: 40 տարի առաջ այստեղ դաշտեր էին շաքարեղեգի մացառներով և երկայնքով ու լայնքով փոված արահետներով: Բարեփոխումների և բաց քաղաքականության անցկացմանը զուգընթաց՝ այն դարձավ բարեփոխումների և բաց քաղաքականության նոր կողմնորոշիչը Չինաստանում, համաշխարհային մակարդակի ֆինանսական կենտրոն, ջրային հար և գիտական քաղաք, որը համապատասխանում է միջազգային բարձրագույն չափորոշիչներին:

Ներկայիս Պուդունը բարեփոխումների և բաց քաղաքականության պատուհանից վերածվում է բարեփոխումների համակողմանի խորացման փորձառու դաշտի: Բարենորոգչական միջոցները մեկը մյուսի հետևից պատճենվում են այստեղից և տարածվում ողջ երկրում:

Նույնը կարելի է ասել նաև Գուանչժոուի մասին: Օրինակներ էլի շատ կան:

Մի թե սա լավագույն հուշարձանը չէ Դեն Սյաոպինին:

Նշանակությունը. Անշուշտ, Դեն Սյաոպինն իր համախոհների հետ երկիրը խոր տնտեսական ճգնաժամից դուրս բերելու հսկայական աշխատանք կատարեց: Նրանց բարեփոխումների շնորհիվ Չինաստանն այսօր զգալի կշիռ ունի համաշխարհային տնտեսությունում և, որպես հետևանք, քաղաքականությունում: Երկրում ստեղծվել է «երկարահետ տնտեսական զարգացման» ուրույն հայեցակարգ, խորիմաստորեն համակցվում են հրամանատարա-վարչարարական կառավարումն ու շուկայական տնտեսվարումը: Նոր կոմունիստական առաջնորդները կայուն

շարունակում են Դեն Սյաոպինի գաղափարները, մինչև 2050թ. «միջին ունևորության հասարակության» կառուցման և անհավասարության վերացման նպատակները:

Բարեփոխումների և բաց քաղաքականության հաջողությունը Չինաստանի առջև նոր հորիզոններ է բացել: Պետության համար, որն ապահովում է զլոբալ ՀՆԱ մեկ վեցերորդը և համաշխարհային տնտեսական աճի մոտ 30%-ը, արդեն նեղ է գալիս ստեղծված համաշխարհային տնտեսակարգի պրոկրուստյան մահիճը: Բայց Չինաստանը չզնաց տնտեսական պատժամիջոցների, անառողջ մրցակցության ճանապարհով: Չինաստանն ընթացավ փոխշահավետ տնտեսական համագործակցության ուղիով: 2013թ. ՉԺՀ նախագահ Սի Չինփինը հանդես եկավ 21-րդ դարի Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտու և Ծովային մետաքսի ճանապարհի կառուցման նախաձեռնությամբ: Այդ հայեցակարգը զլոբալ կառավարման և «մարդկության ընդհանուր ճակատագրի ընկերակցության» ձևավորման գործին Չինաստանի մասնակցության կարևոր գործիք դարձավ: Այսպիսով, կարելի է վստահաբար ասել, որ 40 տարին Չինաստանի ճանապարհին է Դեն Սյաոպինի բարեփոխումներից և բաց քաղաքականությունից մինչև Սի Չինփինի «ճանապարհ և գոտի» մեզանախագիծ, մինչև «հաղթության միություն» և «մարդկության ընդհանուր ճակատագրի ընկերակցություն»: Սրանք են այն բարեփոխումներն ու նախաձեռնությունները, որոնք օգուտ են բերել և շարունակում են բերել բոլոր երկրներին, ողջ մարդկությանը:



ՍՈՒՆ ՀՈՒՆ

*ՉԺՀ Հասարակական գիտությունների
ակադեմիայի համաշխարհային
տնտեսության և քաղաքականության
ինստիտուտի պրոֆեսոր*

**ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԱՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 40 ՏԱՐԻ. ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ
ՄԵՆՔ ԱՅՂՔԱՆ ԱՐԱԳ ՉԱՐԳԱՆՈՒՄ**

Գլուխ առաջին.

Թանկարժեք ժառանգություն և անմոռանալի դասեր

Բարեփոխումների և բաց քաղաքականությունն այն մեծ գործն է, որը նախաձեռնվեց 1978թ. դեկտեմբերին, ՉԿԿ Կենտկոմի տասնամեկերորդ գումարման երրորդ պլենումի ընթացքում: Երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի նորարարություններն սկսվեցին ոչ թե մաքուր էջից, այլ նոր Չինաստանի կառուցման քսանինամյա դասերի ժառանգությունն էին:

Առաջին բանը, որ արվեց, սեփական ուժերին և ինքնուրույն զարգացմանն ապավինելն էր: Մաո Ցզեդունը երեք կարևոր միտք էր առաջադրել: «Պետության հիմնադրումից ի վեր պատմական որոշ հարցերի վերաբերյալ բանաձևում» ասվում է. «Այնպիսի մեծ երկրում, ինչպիսին մերն է, մենք պետք է ապավինենք սեփական ուժերին՝ հեղափոխության և սոցիալիստական շինարարության

զարգացման համար: Մենք պետք է ինքներս վճռականորեն պայքարենք մինչև վերջ՝ վստահելով և հենվելով հարյուր միլիոնավոր մեր հայրենակիցների իմաստնությանն ու ուժին, քանզի հակառակ պարագայում ոչ մի հեղափոխություն կամ սոցիալիստական շինարարություն չի կարողանա հաղթանակել, իսկ ձեռք բերված հաղթանակը ամուր չի լինի»:

Տնտեսական տեսակետից զարգացման այս ճանապարհը ոչ ներմուծման փոխարինման, ոչ էլ արտահանական կողմնորոշում ունեցող ուղի է, այլ ինքնաբավ է կամ անկախ, որը բավարարում է ներքին պահանջարկը և զարգացնում ներքին արտադրությունը: Հիմնական մոտեցումը հետևյալն է. օտարերկրյա առաջավոր տեխնոլոգիաների, սարքավորումների և արտադրագծերի և անգամ համալրող գործարանների լայն ներդրում: Նոր Չինաստանի հիմնադրումից հետո մենք քանիցս իրականացրել ենք մի քանի նման նորամուծություններ՝ ներքին առաջարկի զարգացման և ներքին պահանջարկի բավարարման նպատակով:

Սկզբում՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրումից հետո, արևմտյան աշխարհի կողմից մտցված շրջափակման պայմաններում, մենք հաջողությամբ ավարտեցինք առաջին հնգամյակը՝ իրագործելով 156 նախագիծ Խորհրդային Միության, ինչպես նաև Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների (250 նախագիծ) աջակցությամբ: Մետալուրգիական, քիմիական և մեքենաշինական արդյունաբերության ստեղծումը դրեց երկրի հետագա ինդուստրիալացման ամուր հիմքը: Չէր անցել 10 տարի՝ և զգալիորեն կրճատվեց խզումը տեխնոլոգիաների համաշխարհային մակարդակի համեմատ, և ձևավորվեց ժողովրդական տնտեսության համեմատաբար ամբողջական համակարգը:

1960-ական թվականները համեմատաբար դժվարին էին նոր Չինաստանի արտաքին կապերի զարգացման առումով. մի կողմից՝ վատթարացան մեր հարաբերությունները Խորհրդային Միության, մյուս կողմից՝ չբարելավվեցին հարաբերություններն արևմտյան

երկրների հետ: Անգամ այդպիսի պայմաններում մենք նախկինի պես ջանում էինք, որպեսզի գոնե փոքր քանակությամբ սարքավորումներ ներմուծենք արևմտյան երկրներից՝ համալրելու համար առկա տեխնոլոգիաները: Օրինակ, սարքավորումներ վինայոնի արտադրության համար, որոնք ներմուծեցինք Ճապոնիայից 1962թ.:

1970-ական թթ., վերականգնելով մեր երկրի օրինական տեղը Միավորված Ազգերի Կազմակերպությունում և բարելավելով հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ՝ որպես արևմտյան երկրների ներկայացուցչի, նոր տեխնոլոգիաների ներդրման մասշտաբներն անշեղորեն ավելացրինք: 1972թ., օգտվելով զարգացած արևմտյան երկրների տնտեսական ճգնաժամից, մենք սարքավորումներ ներդրեցինք քիմիական մանրաթելի 4 տեսակի և պարարտանյութերի 2 տեսակի համար, որպեսզի լուծենք մարդկանց սննդի և հագուստի հանապազօր խնդիրը: Միննույն ժամանակ, մետալուրգիական, մեքենաշինական, հեռահաղորդակցային, քաղաքացիական ավիացիայի, երկաթուղային և այլ ճյուղերում ներդրվեցին մի շարք առաջավոր տեխնոլոգիաներ: Բնորոշ օրինակ է անընդհատ ձուլման գլանահաստոցի 1,7 մետրանոց մեքենան, որը *WISCO*-ն (Ուիսկոնսին մետալուրգիական կորպորացիա) ներմուծվեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունից: 1973թ. առաջարկվեց «չորսերեք պլանը», որի համաձայն՝ երեք-հինգ տարվա ընթացքում նախատեսվում էր ներմուծել համալիր սարքավորման, սարքերի և նոր տեխնոլոգիաների խմբաքանակ գյուղատնտեսության և բազային ու թեթև արդյունաբերության ամրապնդման համար: Ներմուծված ապրանքների մեջ էին՝ 13 խմբաքանակ քիմիական պարարտանյութ և 4 խմբաքանակ քիմիական մանրաթել, 3 խմբաքանակ նավթաքիմիական արտադրանք, 10 ակիլրենոլային գործարան, 43 խմբաքանակ ինտեգրված ածխարդյունահանման ձեռնարկություն և 3 խոշոր էլեկտրակայան՝ \$4,3 մլրդ ընդհանուր արժողությամբ: 1973-77թթ. Չինաստանը ներկայացրեց ավելի քան 250 տեխնոլոգիա և սարքավորումներ՝ ավելի քան \$4 մլրդ գործարքային արժեքով:

Բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման վաղ փուլում զարգացման նման ճանապարհը կրում էր որոշակի սահմանափակումներ ռազմավարական և քաղաքական ընտրության առումով: Օրինակ, մեր նորարարությունը սկզբից ևեթ ուղղված էր այն բանին, որպեսզի հաղթահարվեն «արժույթային սահմանափակումները» և ներդրվեն ավելի առաջավոր տեխնոլոգիաներ: Այդ նպատակով «երեքը մեկին» առևտուրը դարձավ կարևոր տարբերակ: Միևնույն ժամանակ, հնարավոր դարձան օտարերկրյա ուղղակի ներդրումները: Մենք կարծում էինք, որ օտարերկրյա կապիտալի ներկրումը կլինի կամ տեխնոլոգիապես առաջավոր և կկարողանա առաջավոր տեխնոլոգիաներ բերել, կամ կողմնորոշված կլինի օտարերկրյա արժույթի արտահանմանը՝ արտահանման ընդլայնման և արժույթային հասույթի գեներացման համար: Արտասահմանյան երկրների համար, որոնք բացառապես ներքին շուկայի կողմնորոշում և տեխնոլոգիաների ընդհանուր մակարդակ ունեն, դրանք խիստ սահմանափակ են:

Ուստի, Չինաստանի բաց քաղաքականությունն աստիճանաբար սկսում է հենվել հետևյալ տրամաբանությանը. ավելի կատարյալ արտասահմանյան տեխնոլոգիաների ներդրում՝ ներքին արտադրության և մատակարարումների ավելացման ու հարստացման համար¹: Այդ նպատակով մենք պետք է ընդլայնեինք արտահանումը և հավուր պատշաճի կրճատեինք արտաքին կախվածությունը: Մա շատ պարզ և պրագմատիկ մոտեցում էր արտաքին աշխարհի համար:

¹ Անգամ 1990-ականների կեսերին հայրենական և միջազգային տեխնոլոգիաների միջև խզումը շարունակում էր մնալ բարձր մակարդակի: Համաձայն երրորդ արդյունաբերական մարդահամարի տվյալների՝ 1995թ. արտադրական սարքավորումների (այդ թվում և շարքից դուրս բերված) տեխնիկական վիճակը Չինաստանում այսպիսին էր. միջազգային մակարդակով այդ ժամանակ ընդամենը 11,72%, իսկ ներքին մակարդակով՝ 17,31%; ընդհանուր (ներքին) մակարդակին բաժին էր ընկնում 39,57%, իսկ հնացած (ներքին) մակարդակին՝ 31,4%:

Երկրորդ՝ նոր Չինաստանի կառուցման քսանինը տարիները մեզ շատ դասեր են տվել առ այն, թե ինչ գործելակերպ և ինչ ճանապարհներ չի կարելի որդեգրել:

1. Նոր Չինաստանի կառուցման առաջին քսանինը տարիներին գոյություն ուներ որոշակի ներքին «հակասություն», երբ սոցիալիզմի և կապիտալիզմի նպատակն այն էր, որպեսզի տապալվեն կապիտալիզմն ու բուրժուազիան, զարգանա սոցիալական արտադրողականությունն ու սահմանվի «ըստ պահանջի աշխատանքի բաշխման հասարակություն»: Այն թույլ կտար պրոլետարիատի լայն զանգվածներին, բանվոր դասակարգին և գյուղացիներին դառնալ հարուստ և ապրել երջանիկ կյանքով: Սակայն հենց որ բանվոր դասակարգն ու գյուղացիները ձեռք են բերում իրենց սեփականությունը և դառնում հարուստ, նրանք դառնում են «բուրժուազիա»: Մա հատկապես ճիշտ է իշխող Կոմունիստական կուսակցության և նրա բարձր ղեկավարության պարագայում. բարձրաստիճան այդ առաջնորդների մեծ մասը աղքատ միջավայրից էր, իսկ ոմանք՝ անգամ շատ աղքատ ընտանիքներից, բայց հեղափոխության հաջողությունից հետո նրանք ստացան իշխանություն և բուժում ստանալու հնարավորություն, ինչը մինչ այդ հասանելի էր միայն բուրժուական էլիտային: Արդյո՞ք սա նշանակում էր, որ նման մարդիկ «բուրժուազիա» են դարձել:

Նախագահ Մաո Ցզեդունը հեղափոխական առաջնորդ էր, որը դարձավ իսկական պրոլետարական հեղափոխական: Նա այդ մասին մտածել էր հեղափոխության հաղթանակից դեռ շատ առաջ և քանիցս նախազգուշացրել էր կուսակցական բոլոր գործընկերներին: 1944թ. Գո Մոժոյի «Չյաշենի երեք հարյուր տարին» գրքի հրապարակումից հետո նախագահ Մաոն անհապաղ օգտագործեց այդ աշխատանքը որպես ուղղորդիչ նյութ: Նա նախազգուշացնում էր ողջ կուսակցությանը. չվերածվե՛ք գյուղացիական պատերազմի պարագլխի՝ ինչպես հյուսիսային Չինաստանում, որը հանգեցրեց

չինական Մին հարստության տապալմանը: Լին իրեն կայսր հռչակեց, սկսեց իր կողմնակիցներին տիտղոսներ բաժանել և անգամ սեփական դրամ հատեց: Արդյո՞ք շարունակվեցին նման մտայնությունն ու անհանգստությունը հետագայում՝ Մշակութային հեղափոխության շրջանում:

Մշակութային հեղափոխության հիմնական պատճառը նախագահ Մաոն համարում էր այն, որ նման բուրժուազիան ձևավորվեց և դեպի կապիտալիզմ տանող քայլ դարձավ: Այդ մարդիկ անգամ կենտրոնատեղի ունեին և գործակալներ տարբեր տեղերում: Ուստի, հարկավոր էր նրանց կանգնեցնել:

Բայց տարօրինակն այն է, որ այդ մարդկանց պարտությունից հետո իշխանության եկած «պրոլետարները» նույնպես դառնում էին «բուրժուազիա»: Այս շրջափուլը շարունակաբար կրկնվելու էր, ուրեմն՝ ինչպե՞ս լուծել խնդիրը: Նախագահ Մաոն առաջարկեց հետևյալ լուծումը. «Անընդհատ հեղափոխություն պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում», այսինքն՝ Մշակութային հեղափոխություն:

Նման սոցիալիզմն ու կապիտալիզմը, մի կողմից, վերածվում են անվերջ հեղափոխական շարժման: Ամբողջ հասարակությունը հիմնականում դասակարգային պայքարի մեջ է գտնվում և չի կարողանում կենտրոնացնել ջանքերը տնտեսության զարգացման վրա: Վերջնարդյունքում դա կհանգեցնի ոչ միայն քաղաքացիական անկարգությունների, այլև անգամ քաղաքացիական պատերազմի, որը կթուլացնի երկիրը և կդրդի թշնամիներին ներխուժել երկիր: Մյուս կողմից՝ տնտեսությունը և պետության գործունեության մյուս ոլորտները կարող են զարգացման ծայրահեղ ձախ գիծ վերցնել: Օրինակ, տնտեսական գաղափարախոսությունը ձևավորվում է հետևյալ կարգախոսի շուրջ. «Ավելի լավ է սոցիալիզմի խոտը, քան կապիտալիզմի տնկիները»: Նման կարգախոսը «պիտակներ կփակցնի» օտարերկրյա ապրանքներին, ինչն իր հերթին

կարգելակի միջազգային առևտրատնտեսական հարաբերությունները: Իհարկե, սոցիալիզմի և կապիտալիզմի զարգացման այս ճանապարհից մարդկանց կյանքը չի բարելավվի, ընդհակառակը, նրանք դեռ երկար կապրեն աղքատության մեջ:

2. ՉԺՇ առաջնորդների առաջին սերնդի (Մաո Ցզեդունի գլխավորությամբ) մահվանից հետո բարեփոխումների և բաց քաղաքականությունը, որը նախաձեռնվեց Դեն Սյաոպինի գլխավորած պրագմատիկների թիմի կողմից, առաջին անգամ վերանայեց սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման նախկին գաղափարները՝ լիովին հրաժարվելով ձախ սոցիալիզմի և կոմունիզմի ճանապարհից: Հիմնական մտտեցումն այն էր, որ սոցիալիստական հեղափոխությունը կամ կոմունիստական հեղափոխությունը սկսվել է գոյություն ունեցող բուրժուազիան և նրա կառավարումը տապալելու նպատակով, որպեսզի հաստատվի պրոլետարիատի դիկտատուրա, կառավարի կոմունիստական կուսակցությանը և ստիպի աղքատներին ջանադրաբար աշխատել: Դա արվեց նրա համար, որպեսզի ամբողջ երկիրը վերածվի զարգացած ու հզոր երկրի, մարդիկ դառնան ավելի հարուստ, իսկ երկիրը՝ ուժեղ և բարգավաճ:

Այսպիսով, սոցիալիստական հեղափոխության, համենայնդեպս՝ չինական սոցիալիստական հեղափոխության առաքելությունն այն է, որպեսզի ստեղծվի միասնական պետություն հեղափոխության միջոցով, ստեղծվի ուժեղ քաղաքական կուսակցություն և կառավարություն հեղափոխության միջոցով, իսկ հետո ստեղծվի ուժեղ պետություն այդպիսի քաղաքական կուսակցությունների և կառավարությունների օգնությամբ:

Մա² է սոցիալիստական հեղափոխության միջոցով հետամնաց երկրից բարգավաճ պետության վերածվելու այլընտրանքային ճանապարհը: Համենայնդեպս, ուրիշ հաջող երկրների և տարածաշրջանների փորձից ակնհայտ երևում է զարգացման ճանապարհների որոշակի նմանություն:

Գլուխ երկրորդ.
Մեծ հետազոտություն և պրակտիկա

Չախ ճանապարհը տանում է դեպի ոչ մի տեղ, ուրեմն ո՞ր ճանապարհով է պետք ընթանալ: Անկախ, ինքնուրույն զարգացման ճանապարհը նույնպես բախվեց օտարերկրյա դրամական փոխանցումների սահմանափակումների: Ո՞րն է ելքը: Առաջնորդների երկրորդ սերունդը, որը ներկայացնում էր Դեն Սյաոպինը, նախանշեց այն ուղղությունը, որով պետք էր ընթանալ, և այն, թե ինչ կոնկրետ ուղիներ և քաղաքականություն էր պետք ուսումնասիրել:

Նախ՝ երկու հիմնական սկզբունք, որոնց պետք է հետևեր նման քաղաքականությունը: Առաջին սկզբունքը վերաբերում է հետևյալ չորս խնդիրներին. հետևել զարգացման սոցիալիստական ուղուն, պաշտպանել ժողովրդի դեմոկրատական դիկտատուրան, պահպանել Չինաստանի Կոմունիստական կուսակցության առաջնորդությունը, հետևել մարքսիզմ-լենինիզմի և Մաո Յզեդունի գաղափարախոսությանը:

1976թ. իրենց մահկանացուն կնքեցին Մաո Յզեդունը, Չժու Դեն, Չժոու Էնլայը և հին սերնդի այլ առաջնորդներ: Կուսակցության կենտրոնական կոմիտեն՝ հանձինս Հուա Գոֆենի և Ե Չյանինի, կոտրեց «Չորսի ավազակախումբը»: Բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման առաջին օրերը (1978թ.) փոքրինչ մտահոգեցին մարդկանց: 1979թ. մարտի 30-ին Դեն Սյաոպինը հանդես եկավ երկար ճառով՝ «Հետևել չորս հիմնական սկզբունքներին» վերտառությամբ՝ Չինաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի անունից և պաշտոնապես առաջարկեց այդ սկզբունքները: Նա նաև նշեց, որ բոլոր չորս սկզբունքներն էլ պետք է պահպանվեն չորս արդիականացումների հետ միասին, որոնք առաջ քաշվեցին 1978թ., ՉԿԿ ԿԿ տասնմեկերորդ գումարման երրորդ լիագումար նիստի ընթացքում:

Երկրորդ՝ հիմնական գիծը սոցիալիզմի սկզբնական փուլի համար այն էր, որ «առաջնորդեն և միավորեն բոլոր ազգությունների մարդկանց՝ տնտեսական շինարարությունն ընդունելով որպես կենտրոնական; հետևել բարեփոխումների և բաց քաղաքականության չորս սկզբունքներին; ինքնուրույնությունը և աշխատասիրությունը կհանգեցնեն դեմոկրատական և բարգավաճ Չինաստանի կառուցմանը; պայքարել քաղաքակիրթ, ներդաշնակ և հիանալի սոցիալիստական արդիականացման համար, որը կուժեղացնի երկիրը»: 1987թ., Չինաստանի Կոմունիստական կուսակցության 13-րդ Ազգային կոնգրեսում կուսակցության պաշտոնապես հաստատած «հիմնագիծը» սահմանեց Չինաստանի ապագա զարգացման հիմնական ուղղությունները: Ո՞րն է այդ սկզբունքների նշանակությունը: «Ես չգիտեմ Լուչան լեռան իսկական տեսքը, բայց գիտեմ, որ ճշմարտությունը հենց դրա մեջ է»: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վերափոխումների համեմատ՝ այդ հիմնական սկզբունքը լիովին տարբերում է Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականությունը, որը տնտեսական վերափոխումների գործընթաց է՝ այլ երկրների փորձի հիման վրա:

Նախ՝ Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականությունը սոցիալիզմի շարունակությունն է, իսկ տնտեսական վերափոխումները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում հիմնված են քաղաքական հեղափոխության վրա, այսինքն՝ սոցիալիզմից և կուսակցական ղեկավարումից հրաժարման վրա: Ընդ որում՝ այն առաջ բերեց աննպաստ հետևանքների առնվազն երկու ասպեկտ. 1. երկարատև ժամանակաընթացքում հասարակությունը գտնվում էր քառսի վիճակում. ծաղկում էր պատմական նիհիլիզմը, իսկ արժեքները կորսվում էին, 2. պետությունը և կառավարությունը նույնպես գտնվում էին տարբեր ֆրակցիոն վեճերի մեջ և շատ փխրուն էին դարձել, ինչը խանգարում էր նրանց կենտրոնանալ տնտեսական զարգացման վրա:

Երրորդ՝ սույն ճանապարհին տրվեց «սոցիալիզմ չինական առանձնահատկությամբ»² անվանումը: Դրանում կա ուղղություն, բայց չկան ճանապարհային նշաններ, ինչը պահանջում է «հատել գետը՝ շոշափելով քարերը» և ցուցաբերել «ճկունություն»: Հենց այդ պատճառով էլ զարգացման այդ ճանապարհը պահանջում է մեծ ուսումնասիրություն և պրակտիկա:

1) Ընդհանուր փաստերից ճշմարտության որոնման գաղափարախոսական գիծը

Չնայած սոցիալիզմ տանող ճանապարհը դրված էր, բայց աշխարհի շատ երկրներ շարունակում են ուսումնասիրել և գործնականում միաժամանակ կիրառել այդ մեծ նախաձեռնությունը, որը դեռ երբեք չեն տեսել: Եվ Չինաստանի փորձը բացառություն չէ: Չինական նոր պրակտիկայի քսանինը տարիները միայն ավելի զգաստացրին Դեն Սյաոպինին: Ծայրահեղ ձախերի անցած ճանապարհը չպակվեց հաջողությամբ, ինչի համար Դեն Սյաոպինը հայտարարեց. «Աղքատությունը ոչ սոցիալիզմ է, ոչ էլ կոմունիզմ» (Դեն Սյաոպին, հատ. III, «Չինական առանձնահատկությամբ սոցիալիզմի կառուցումը», էջ 63-64): «Սոցիալիզմի էությունը արտադրաուժերի ազատագրման, արտադրաուժերի զարգացման, շահագործման և բնեռացման վերացման մեջ է, ինչը վերջնարդյունքում կհանգեցնի համընդհանուր բարգավաճման» (Դեն Սյաոպին, հատ. III): Մյուս կողմից՝ նա նաև նշել է. «Մենք պետք է հետևենք մարքսիզմին և սոցիալիստական ուղուն: Բայց մարքսիզմը պետք է համադրվի Չինաստանի իրողությունների հետ»: Սոցիալիզմի դոկտրինը պետք է լինի չինական առանձնահատկությամբ սոցիալիզմը, որը համապատասխանում է Չինաստանի իրողություններին» (Դեն Սյաոպին, հատ. III, «Չինական առանձնահատկությամբ սոցիալիզմի կառուցումը», էջ 63):

1992թ. հարավային շրջագայության ժամանակ ունեցած իր ճառում Դեն Սյաոպինն առաջ քաշեց զարգացման նոր ճանապար-

² Այս անվանումը հետագայում աստիճանաբար ընդհանրացվեց:

հի հետևյալ երեք առավելությունները. «Սոցիալիստական հասարակության արտադրամիջոցների զարգացում, սոցիալիստական երկրների համագալխի ուժերի ամրապնդում և մարդկանց կենսամակարդակի բարձրացում»:

2) Փորձարարական նախագիծ, փորձություն, կրկնակի ճշգրտում և աշխատանքի երթուղու աստիճանական առաջընթաց

Բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման ընթացքում կարևոր է նաև գաղափարախոսական գծի և թեստավորման չափորոշիչների աստիճանական վերափոխումը աշխատանքի համաձայնեցված ձևի. փորձարարական նախագիծ, փորձություն, կրկնակի ճշգրտում և աշխատանքի երթուղու աստիճանական առաջընթաց:

Այս գործընթացը ոչ ուսումնական (աստիճանական աճ՝ ուսուցման կուտակմանը համապատասխան), ոչ էլ թոյլից կատարելու գործընթաց չէ բավականաչափ տեղեկատվության պայմաններում: Դա անընդհատ փորձարկումների և հետազոտությունների գործընթաց է՝ ինչպես աստիճանական զարգացման, այնպես էլ անորոշ ռիսկի: Բայց եթե դուք անմիջապես որոշեք ճիշտ ուղին, ապա ոլորտը կամ ճյուղը, որն առաջինը կենթարկվի հետազոտությունների, կստանա առաջինը լինելու առավելություն մյուսների համեմատ: Ի դեպ, Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականության գործընթացում կա ևս մեկ դրական առանձնահատկություն՝ փորձնական նախագծեր, որոնք անցնում են ուսումնասիրություններ, հիմնականում հովանավորվում են կենտրոնական կառավարության կողմից, ուստի ռիսկերն այնքան էլ սարսափելի չեն:

Նման համագործակցությունը և համատեղ աշխատանքը դարձել են Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականության հաջողության միկրոքաղաքական հիմքերից մեկը վերջին 40 տարիներին:

3) Հասնել և անցնել առջևից վազողին

Մարդիկ այս գործընթացում բախվում են մեծ անհավասարության, մանավանդ ժամանակի տեսակետից: Օրինակ, բնակարանային համակարգի բարեփոխումը: Բնակարանի բաշխման նախնական ազգային համակարգը 1990-ական թթ. աստիճանաբար բարեփոխվեց շուկայի միջոցով: Մինչ այդ մարդիկ կարող էին բավարարվել բնակարանի էժան բաշխմամբ, իսկ հետո ստիպված էին բնակարան գնել շուկայում: Այնուամենայնիվ, բնակարանի մարքեթինգի զարգացմանը զուգահեռ՝ մարդիկ, ովքեր կոմերցիոն բնակարաններ են գնում շուկայում, չպետք է տառապեն: Որովհետև որքան ավելի շուտ գնվի տունը, այնքան ավելի ցածր կլինի տան շուկայական գինը, նշանակում է՝ էլ ավելի շատ կլինի դրան հաջորդող աճը: Շատ աշխատողներ, ովքեր օգտվում էին բնակարանի բաշխման քաղաքականությունից, շուկայական բնակարան ձեռք չբերեցին, ինչի արդյունքում շահաբաժիններն անշարժ գույքի գների բարձրացումից չեն վճարվում: Դա հատկապես ակնհայտ է առաջին մակարդակի քաղաքներում, ինչպիսին են Գուանչժոուն, Շենչժենը:

Այսպիսով, բարեփոխումների և բաց քաղաքականության ճանապարհը, որը զգվում է մշտական փորձարկման շնորհիվ, նույնպես շատ անորոշ է, բայց և միաժամանակ լի է ստեղծարարությամբ, հետազոտություններով և փորձություններով, ինչպես նաև ռիսկերով: Լայն հրապարակայնության շնորհիվ, մանավանդ մշտական արագ զարգացման շնորհիվ մարդիկ, նոր հնարավորությունների փնտրտութուններում, ուժեղ հոգեբանական տոկունություն ձեռք բերեցին նաև նման պրակտիկաների հանդեպ: Նաև սա է մեր և շատ այլ երկրների տարբերությունը:

Այս իրավիճակը, մի կողմից, ստիպեց յուրաքանչյուրին «նայել առաջ», որովհետև արագ զարգացման գործընթացում կան շատ հնարավորություններ, մյուս կողմից՝ դա նաև ստիպում է բոլորին որոշակի դժգոհություն զգալ, որը կապված է անարդարության հետ: Այսպիսով, սա իրավիճակ է, որտեղ բոլորը ձգտում են հաջողության՝ մեծ ջանքեր գործադրելով, բայց միևնույն ժամանակ

ումանք վախենում են իրենց սխալներից և անարդար վերաբերմունքից: Յուրաքանչյուր անհատի եկամուտների աճի և կենսամակարդակի բարելավման վիճակագրությունից երևում է, որ երկրի վիթխարի առաջընթացը վերջին 40 տարիներին բարելավել է յուրաքանչյուր մարդու բարեկեցությունը՝ բոլորին էլ ավելի «երջանիկ» դարձնելով:

Գլուխ երրորդ.
Պերմանենտ զարգացում, բարեփոխումների
և բաց քաղաքականություն

Բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման առաջին օրերին՝ իրավիճակը փոխելու ցանկությամբ, տարբեր տարածաշրջաններ և ճյուղեր խոշոր պատվերներ իջեցրին տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրման ուղղությամբ, ինչի արդյունքում 1978թ. ողջ երկրում ձևավորվեց մի մեծ ցանկ ներմուծման 1230 նախագծից, իսկ բորսայական քվոտան հասավ \$7,8 մլրդ-ի³: Ամենամեծ գումարը ՉԺՀ հիմնումից ի վեր: Սա զգալիորեն խորացրեց առանց այդ էլ կոշտ ֆինանսական սահմանափակումները:

Բեկման հասնելու համար Չինաստանն ընդունեց երկու մեթոդ. առաջինը արտահանա-վերամշակման առևտրի եռակողմ առևտրաձևի ընդլայնումն էր, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի ներգրավումը, երկրորդը՝ արտադրության ուղղակի ընդլայնումը՝ տեղի պահանջումները բավարարելու համար:

Տեխնոլոգիաները և ներդրումները, որոնց կարիքն ունի Չինաստանը, վերահսկվում են արևմտյան երկրների կողմից: Ուստի, մեր բաց քաղաքականությունն, ըստ էության, բաց է արևմտյան երկրների համար, համենայն դեպս՝ 1980-ական թթ., մինչև Խորհրդային Միության փլուզումը: Արևմտյան երկրները տիպիկ շուկայա-

³Նույն թվականին Չինաստանի արժույթային պահուստները կազմում էին ընդամենը \$176 մլն:

կան տնտեսության կողմնակիցներ են, ուստի, փորձելով արտահանել ապրանքը, չինական ձեռնարկությունները և ճյուղերը ստիպված են դուրս գալ բաց լինելու առաջին պլան և ուղղակիորեն գործունենալ շուկայական տնտեսությամբ արևմտյան երկրների հետ:

Այսպիսով, Չինաստանի տնտեսությունն աստիճանաբար դարձավ շուկայական կողմնորոշում ունեցող՝ երեք համադրության շնորհիվ (նոր և հին, պլանային տնտեսություն և շուկայական տնտեսություն) և աստիճանաբար ինտեգրվեց տարածաշրջանային ու գլոբալ արտադրական ցանցերում: Վերջապես, ձեռք բերվեց ամբողջ տնտեսության ինտերնացիոնալացումը:

Իսկ ինչպե՞ս է դա անում Չինաստանը:

Նախ՝ բարեփոխումն առաջին անգամ իրականացվեց գյուղում: Վերացնելով աշխատանքի կազմակերպման ավանդական մեթոդները, այնպիսիք, ինչպիսին էին համայնքները և արտադրական բրիգադները և ներդնելով տնային տնտեսությունների հետ ըստ պայմանագրերի աշխատելու պատասխանատվության համակարգը՝ աճեց ֆերմերների նախանձախնդրությունը արտադրության և կառավարման հանդեպ, գյուղական տնտեսությունը դարձավ ակտիվ, իսկ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը զգալիորեն ավելացավ:

Երկրորդ՝ սկսեցին իրագործվել քաղաքներում անցկացվող շուկայական բարեփոխումների փորձնական նախագծերը: Բարեփոխումների սկզբնական փուլում բոլոր ձեռնարկությունները պետական էին և կոլեկտիվ: Այդ ժամանակ քաղաքային բարեփոխման պրակտիկան այն էր, որպեսզի արտադրահզորությունները և գործնական օպերացիաները բաժանվեն երկու մասի յուրաքանչյուր ձեռնարկության ներսում՝ պլանային և ոչ պլանային՝ ոչ պլանային ձեռնարկությունների աստիճանական ավելացմամբ և ընդլայնմամբ: Գործարքների համակարգը, ի վերջո, հանգեցնում է պարտադիր պլանի, ղեկավար պլանի վերացմանը և անկախ որոշումներ ընդու-

նելուն: Մարդկանց թույլ տրվեց զբաղվել մասնավոր բիզնեսով, ինչը հանգեցրեց մասնավոր ձեռներեցության ձևավորմանը:

Մյուս մոտեցումը նոր «հատուկ գոտու» և նոր փորձարկումների ստեղծումն էր գոյություն ունեցող տնտեսական համակարգում: Դա հատկապես նկատելի է սկզբնական փուլում: Օրինակ, 1979թ. Գուանդունում և Ֆուձյանում կառուցվեցին չորս հատուկ տնտեսական գոտիներ, ինչպիսին են Շենչժենը, Չժուխայը, Շանթոուն և Սյամինը: Ավելի ուշ, կուտակված փորձի հիման վրա, դրանք մշտապես ընդլայնվեցին, և ավելացվեցին 14 մերձափնյա բաց քաղաքներ, որոնք, ի վերջո, տարածվեցին ամբողջ երկրում:

Երրորդ՝ սկսեց իրականացվել պահուստային մասի բարեփոխման հետազոտություն 1980-ական թթ. սկզբների գործարքների համակարգի մասով (կարճաժամկետ գործարքների համակարգ, շահույթի և բիզնեսի ցուցանիշների որոշում, շուկայի յուրացում): 1990-ական թթ. կեսերից բաժնետոմսերի սեփականության համակարգի հետագա բարեփոխումն իրականացնելու և պետական ձեռնարկությունների արդիականացումն ապահովելու համար՝ մի կողմից, և խոշոր պետական ձեռնարկություններ (ի դեմս կենտրոնական ձեռնարկությունների, որոնք գտնվում են պետական ակտիվների վերահսկման և կառավարման հանձնաժողովի տիրույթում) ձևավորելու նպատակով՝ մյուս կողմից, այդ խոշոր պետական ձեռնարկություններն աստիճանաբար վերափոխվեցին բազմազգ խմբերի, որոնք «աշխատում են որպես խոշոր արևմտյան վերազգային կորպորացիաներ կամ խոշոր ձեռնարկություններ»:

Վերջապես, շուկայի վերափոխման գործընթացում նույնպես տեղի կունենա ինքնատիպ «մրցակցություն» «պլանայինի» և «ոչ պլանայինի» միջև՝ շահույթի որոնման մոտիվացիայով: Ձեռնարկատերերը հնարավորություն ստացան վերափոխել «պլանային» ապրանքները «ոչ պլանայինի», ինչը թույլ տվեց նրանց այդ ապրանքները վաճառել «ոչ պլանային» գներով՝ դրանով իսկ հսկայա-

կան շահույթ ստանալով: Կամ էլ հնարավորություն ստացան ընդլայնելու «ոչ պլանային արտադրությունը» և դրա մատակարարումները շուկա՝ էլ ավելի մեծ շահույթ ստանալու նպատակով: Նման իրավիճակ գոյություն ունի նաև «պաշարների բարեփոխման» և «աստիճանական բարեփոխումների» պարագայում, այնպես որ՝ շուկայական մասը շարունակում է արագ աճել: Այսպիսով, շուկայական բարեփոխումները կունենան «ինքնակազմակերպվող»՝ արագ և պերմանենտ աճող մեխանիզմ:

Ո՞րն է Չինաստանի մոտեցման եզակիությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համեմատ, որոնք նույնպես տնտեսական վերափոխումներ են իրականացրել:

Պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցումը բարդ և աստիճանական գործընթաց է, որը չի կարող իրականացվել մեկ օրում: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վերափոխումները, ինչպես նաև Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականությունը վկայում են այն մասին, որ շուկային կողմնորոշված «տնկիները հարկ է մանրակրկիտ և դանդաղ աճեցնել: Երկարաժամկետ պլանային տնտեսության ձևավորած հողի վրա դժվար է աճեցնել շուկային կողմնորոշված գեղեցիկ ծաղիկ՝ շուկային թերապիայի միջոցով»:

1. Շուկային թերապիայի պարագայում մասնավորեցման արագ գործընթացը թույլ է տալիս ընդամենը փոքրաթիվ ընտրված մարդկանց ստանձնել նախաձեռնությունը և էժան գնել մյուս մարդկանց բաժնետոմսերը՝ այդպիսով վերածվելով հիմնական բաժնետիրոջ և ընկերության սեփականատիրոջ: Լավագույն դեպքում, դա պատահական հաջողություն կարող է լինել, վատագույն դեպքում՝ սպեկուլյանտի հաջողություն: Գործունեության նման ոճը չի խրախուսում աշխատասեր ձեռնարկատերերին և բանվորներին, բայց թալանի ու շահագործման քողարկված ձև է և տանում է խոշոր սոցիալական և այլ հիմնախնդիրների:

2. Շոկային թերապիայի պարագայում արժույթի փոխարկելիությունը և կապիտալով գործողությունների հաշիվ բացելը հանգեցրել են տեղական արժույթի զգալի արժեզրկման կարճ ժամանակամիջոցում, իսկ ներքին ակտիվները կրճատվել են՝ դրանով իսկ ստեղծելով հիանալի պայմաններ օտարերկրյա միաձուլումների և կլանումների համար, իսկ ազատականացումը նույնպես ողջունում էր օտարերկրյա ներդրումները: Արդյունքում՝ օտարերկրյա կապիտալը վերահսկում է հայրենական տնտեսության կյանքի ուղին կամ շատ փոք է վաստակում:

3. Շոկային թերապիայի պարագայում տեղական շուկայի բացումը կարճ ժամանակամիջոցում հանգեցրեց ներմուծման հոսքի, որը հարված հասցրեց տեղական արդյունաբերությանը: Արդյունքում՝ փակվեցին շատ ձեռնարկություններ, աշխատողները կորցրին իրենց աշխատանքը, մարդկանց կենսամակարդակը կտրուկ ընկավ: Շատ մարդիկ անգամ աղքատության մեջ հայտնվեցին:

4. Միևնույն ժամանակ, շոկային թերապիայի պարագայում կարճ ժամանակամիջոցում անհնար է խթանել տեղական ձեռնարկությունների աճը: Այն կարող է հենվել միայն օտարերկրյա կապիտալի կամ տեղի նորահարուստների վրա: Վերջինները չեն կարող նպաստել տեղական ճյուղերի զարգացմանը, հատկապես միջազգային մրցունակության մակարդակի հասնելու համար: Ուստի, հայրենական արդյունաբերությունը թուլանում է կամ գրեթե չի կարողանում զարգանալ հետագայում: Արդյունքում՝ ողջ երկրի տնտեսությունն արագ փոխակերպվում է անհասկանալի միասեռ տնտեսության, որը հենվում է ավանդական արտադրանքին՝ ռեսուրսների հիմքի վրա:

5. Անցումային շրջանի սկզբում, շոկային թերապիայի զարգացման հետ միասին, շատ երկրներ տնտեսական աղետ ապրեցին կամ տնտեսական ճգնաժամ ունեցան: Այդ ճգնաժամի հետևանքները կարելի է տեսնել Ռուսաստանի կարգավիճակի աս-

տիճանական նվազման օրինակով. մինչ վերափոխումները Ռուսաստանը դեռևս երկիր էր, որը կարող էր դիմակայել Միացյալ Նահանգներին, բայց 1980-ականներից հետո այն աստիճանաբար փոխակերպվեց «ութնյակի» անդամի, իսկ հետո անգամ այդտեղից դուրս մղվեց: Տնտեսական տեսակետից երկիրը կատարյալ արդյունաբերական համակարգ ունեցող տնտեսական գերտերությունից վերածվեց հումքի և էներգիայի արտադրողի:

Ինչո՞ւ, ի տարբերություն մյուս օրինակների, Չինաստանի տնտեսական զարգացումը յուրահատուկ էր և կարողացավ ապահովել արագ աճ 40 տարի շարունակ:

1. Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականությունը ինքնատիպ վերակառուցում է և սոցիալիզմի վերիմաստավորում, այլ ոչ թե հուսահատ նահանջ և հրաժարում դրանից: Ուստի, սոցիալիզմի չորս հիմնական սկզբունքները և առաջնային փուլի հիմնագիծը առանցքային են մեր հաջող զարգացման համար: Առանց այս երկու հիմնավորումների մենք, գուցե, հայտնվեինք շոկային թերապիայի դժվարին վիճակի մեջ, ինչպես պատահեց Ռուսաստանի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ;

2. Բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման գործընթացում հարկավոր է ոչ միայն ապահովել սեփական տնտեսության կայունությունը, այլև զարգացնել արդյունաբերության տեղական ճյուղերը և ձեռնարկությունները, հակառակ դեպքում տեղի տնտեսությունը կրնկնի շրջափուլային ճգնաժամի մեջ: Չինաստանի ուրույն փորձը հետևյալն է. նախ՝ բարեփոխմանը հարմարվելուն, տեղի ձեռնարկությունները և ճյուղերն ուսումնասիրելու կարողությանը համապատասխան, բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման գործընթացն աստիճանաբար առաջ է ընթանում, և տարբեր հետազոտություններ իրականացվում են փորձնականորեն՝ դրանք վաճառելու կամ փակելու

փոխարեն: Երկրորդ՝ կախված հայրենական ձեռնարկությունների և ճյուղերի մրցունակության ընթացիկ մակարդակից և ապագայում հարմարվելու ունակությունից՝ աստիճանաբար խթանել բաց քաղաքականությունը՝ օգտագործելով ինչպես ներմուծման մրցունակությունը՝ բաց շուկայով պայմանավորված, այնպես էլ օտարերկրյա ֆինանսավորմամբ ձեռնարկություններ ստեղծելով: Շուկայական մրցակցության ճնշումը խթանեց տեղական ձեռնարկությունների և ճյուղերի մրցունակությունը՝ բարելավվելու, տեղական ձեռնարկությունների և ճյուղերի պատշաճ պաշտպանության ուղիների նոր որոնումների նպատակով:

Բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման առաջին օրերին մենք օգտագործեցինք պետական ձեռնարկությունների և կոլեկտիվ ձեռնարկությունների՝ պարապուրդի մատնված բազմաթիվ արտադրահզորություններ՝ զբաղվելու համար «երեքը մեկում» առևտրային գործունեությամբ. չինական ընկերությունները տրամադրում են գործարաններ և աշխատուժ, օտարերկրյա ընկերությունները տրամադրում են սարքավորումներ, հումք և պատվերներ, գնում են արտադրանքը, դրա դիմաց ստանում նյութական շահ: Շնորհիվ այս ձևի՝ Չինաստանը ստանում է ոչ միայն առկա ձեռնարկությունների և արտասահմանից ֆինանսավորվող նոր ձեռնարկությունների համադրություն, այլև արժեքավոր դրամական եկամուտ, և որ ավելի կարևոր է՝ շուկային կողմնորոշված անվճար ուսուցում և կրթություն: Նման առևտրային գործունեության մշտական ընդլայնմամբ էլ ավելի շատ թվով ձեռնարկություններ են ձեռք բերում շուկայի կառավարման իրական փորձ՝ այս ձևի օգնությամբ, և աշխատակիցները (շատերն աշխատանքային միզրանսներ են) նույնպես ստանում են շուկային կողմնորոշված կրթություն:

Բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման առաջին օրերին մենք քաջալերում էինք նաև օտարերկրյա

ներդրողներին՝ միջոցներ ներդնել Չինաստանում: Բայց Չինաստանը պահանջում է, որպեսզի արտասահմանից ֆինանսավորվող ձեռնարկությունները ստեղծեն համատեղ ձեռնարկություններ չինական ընկերությունների հետ կամ համատեղ գործողություններ իրականացնեն՝ դրանով իսկ հասնելով չինական և արևմտյան ընկերությունների ինտեգրմանը:

Ընդ որում, երկար ժամանակ օտարերկրյա տարբեր ընկերություններ, որոնք աշխատում են և բիզնես հիմնում Չինաստանում, հիմնականում վերամշակող առևտրային ձեռնարկությունների արտահանման կողմնորոշվածություն ունեն: Այդ ձեռնարկություններն ունեն ոչ մեծ ներդրումային մասշտաբներ (\$2-3 մլն), համեմատաբար պարզ գործունեություն, ինչպես նաև ոչ բարդ տեխնոլոգիաներ և կառավարում, բայց դրանք լիովին կողմնորոշված են դեպի միջազգային շուկան: Մա լավ օրինակ է հայրենական ընկերությունների համար: Հայրենական շատ ձեռնարկություններ, մանավանդ քաղաքային և գյուղական ձեռնարկությունները, բարեփոխումների և բաց քաղաքականության իրականացման առաջին տարիներին, իսկ հետո՝ մասնավոր ձեռնարկությունները, զարգանում էին արտասահմանից ֆինանսավորվող այդ ձեռնարկությունների շուրջ:

3. Կարևոր են կայուն մակրոտնտեսական միջավայրը և քաղաքականությունը, մեծաթիվ, բարձրորակ և ոչ թանկ աշխատուժը, ինչպես նաև դրական ռազմավարությունները և քաղաքականությունը՝ Ասիայի ու Չինաստանի խոշոր զարգացած տնտեսական կենտրոններում մշակութային կապերի համակցմամբ: 1980-ական թթ. վերջերին, օգտվելով «միջազգային մեծ շրջափուլի» ռազմավարությունից, մենք լիովին օգտագործեցինք հնարավորությունները՝ արդյունաբերության մեծ քանակությամբ աշխատատար ճյուղեր տեղափոխելու համար՝ պայմանավորված ասիական վագրերի փոխարժեքի բարձրացմամբ և ճապոնական արժույթի փոխար-

Ժեքի ամրապնդմամբ: Մենք այդ ներդրումներն ընդունեցինք մեծ չափերով և արագ ինտեգրվեցինք Արևելյան Ասիայում: Արտադրական ցանցում այն հասավ զգալի առաջընթացի արտաքին աշխարհի առջև (հատկապես արտաքին առևտրում) բաց լինելու առումով: Չինաստանը ոչ միայն հաղթահարեց օտարերկրյա արժույթի դիլեման, այլև 1994-ից առևտուրն ունի դրական սալդո հետագա տարիների համար, և տնտեսական կապերն արտաքին աշխարհի հետ հաստատվեցին, ինչը մեր տնտեսությունը դարձրեց ավելի ստանդարտացված և ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկային կողմնորոշված:

1990-ական թթ., այն բանից հետո, երբ Դեն Սյաոպինի ելույթը հարավում և 14-րդ Ազգային կոնգրեսում շուկայական տնտեսությունը պաշտոնապես սահմանեց որպես Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականության նպատակ, Չինաստանի դերը գլոբալ ներդրումների և առևտրի առումով ավելի նկատելի դարձավ: Բհարկե, դրան օժանդակեցին նաև այդ ժամանակվա նպաստավոր միջազգային պայմանները. նախ՝ տնտեսական վերափոխումները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում գտնվում էին անցումային փուլում, իսկ տնտեսությունը՝ ճգնաժամի մեջ: Երկրորդ՝ շատ զարգացող երկրներ, ինչպիսին էին Լատինական Ամերիկայի երկրները, նույնպես գտնվում էին պարտքային ճգնաժամում և պահանջում էին փոխել «Վաշինգտոնյան կոնսենսուսը»: Երրորդ՝ միջազգային առևտրի ազատականացման բանակցությունները (բանակցությունների Ուրուգվայի ռաունդ, որոնք ավարտվեցին 1993թ.) հաջողությամբ ավարտվեցին, և Ազատ առևտրի հյուսիսամերիկյան գոտին (1994թ.) սկսեց իր պաշտոնական աշխատանքը: Չորրորդ՝ տեղեկատվական հեղափոխությունն աշխարհում ընթանում էր ամբողջ թափով: Արդյունքում՝ Չինաստանը վերածվեց գլոբալ ներդրումային կետի, և ներդրումների մեծ քանակություն փոխանցվեց Չինաստանի մերձափնյա

շրջաններ՝ ձևավորելով «չինական աշխատուժի, չինական ֆաբրիկաների» և «միջազգային կապիտալի, տեխնոլոգիաների և միջազգային շուկաների» գերհամակցություն: Շատ կարճ ժամանակում Չինաստանը վերածվեց մշակման և արտադրության տարածաշրջանային և անգամ գլոբալ կենտրոնի:

2001թ. Չինաստանի անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) էլ ավելի նպաստեց երկրի տնտեսության ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը, ինչի արդյունքում Չինաստանը դարձավ համաշխարհային տնտեսության կարևոր «բևեռ», հատկապես գլոբալ արտադրական ցանցում:

Կարևոր ենք համարում նշել, որ փոխակերպման գործընթացում Չինաստանը մեծ ուշադրություն է հատկացնում առկա հնարավորությունների օգտագործմանը, պաշտպանությանն ու արդիականացմանը, այն դեպքում, երբ անցումային տնտեսությամբ այլ երկրներ հրաժարվում են այդ հնարավորությունից, հատկապես՝ նախկին ճյուղերի և ձեռնարկությունների հնարավորություններից (համենայն դեպս, դատելով արդյունքներից): Ուստի, այդ երկրներում շուկային թերապիայով ուղեկցվող «անցումային շրջանի դեպրեսիան» տևեց մոտ տասը տարի, ինչը հանգեցրեց ոչ միայն ՀՆԱ-ի նվազման, այլև հայրենական ճյուղերի և ձեռնարկությունների մեծ քանակության կորստի:

Այսպիսով, շնորհիվ ակտիվ բաց քաղաքականության՝ Չինաստանը ոչ միայն հասավ սերտ ինտեգրման տարածաշրջանային և համաշխարհային տնտեսությանը, այլև դարձավ այդ նույն տարածաշրջանային ու համաշխարհային տնտեսության անքակտելի մասը, ինչպես նաև օգտագործեց մեր աշխատուժը ռեսուրսների արդյունավետ բաշխման համար: Եվ որ շատ ավելի կարևոր է՝ հասավ շուկայական վերափոխումների՝ սահուն ինտեգրվելով միջազգային տնտեսությանը և կուտակեց արժույթային պահուստ-

ների մեծ ծավալ⁴ կանխելով և խուսափելով ֆինանսական տարբեր ճգնաժամերի ազդեցությունից:

Գլուխ չորրորդ. Ընդունել մարտահրավերը, միտվել ապագային

40-ամյա հաջող զարգացումը նաև շատ հարցեր է ի հայտ բերել: Առաջ անցնելով՝ նշենք, որ հարցերն արժանի են հատուկ ուշադրության:

Նախ՝ ստեղծել չին-արևմտյան համագործակցության նոր մոդել:

Վերջին չորս տասնամյակում ընդհանուր առմամբ Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականությունը եղել է հետևյալը. պլանային տնտեսությունից անցում շուկայականի, փակ դռների քաղաքականությունից անցում բացի: Այս գործընթացը կազմակերպված է և աստիճանական. փոքրից մեծ՝ մշտապես ընդլայնվելով. ցածրից բարձր՝ մշտապես կատարելագործվելով: Այս գործընթացի կողքին ընթանում է հայրենական ճյուղերի և ձեռնարկությունների անընդհատ զարգացման, ինչպես նաև ՀՆԱ աճի գործընթացը:

Այդ փուլի հաջողությունը երևում է ոչ միայն արդյունաբերության ներքին ճյուղերի և ձեռնարկությունների աճի, այլ նաև ներքին շուկայի պաշտպանվածության, ինչպես նաև հայրենական, հատկապես պետական ձեռնարկությունների հանդեպ արտաքին

⁴ Ինչ վերաբերում է արժույթային սահմանափակումներին, ապա այդ սահմանափակումը հանվեց 1990-ականների կեսերին: Մի քանի պատճառներ հանգեցրին այդ արդյունքին. նախ՝ ներքին առաջարկը հիմնականում բավարարում է ներքին պահանջարկը, ինչը հանգեցնում է տնտեսական դեֆիցիտի նվազման, երկրորդ՝ մեքենաները, սարքավորումները և տեխնոլոգիաները դարձան Չինաստանի զարգացման նոր ուղղությունը, հետևաբար՝ սարքավորումների ներմուծման փուլն ավարտվեց, և Չինաստանը մտավ իր սեփական տեխնոլոգիաների ու սարքավորումների զարգացման նոր փուլ: Երրորդ՝ ներքին արժույթն արդեն բավարար էր: Հենց այս շրջանից էլ Չինաստանի տնտեսական զարգացումը մտավ արդիականացման, փոխակերպման և միջին ու բարձր դասի մեքենասարքավորումների թարմացման փուլ, ինչն աստիճանաբար դուրս է մղում արտասահմանյան երկրներին:

«Էքսպանսիայից» խուսափելու մեջ: «Fortune 500» ցուցակի ընկերությունների մեջ վերջին տարիներին ավելացել է պետական ձեռնարկությունների թիվը, որոնք օտարերկրյա կապիտալով խոշոր նախագծերում հաճախ հանդես են գալիս որպես խոշոր պետական ձեռնարկություններ: Օրինակ, 2018թ. հրապարակված «Fortune Global 500» ցուցակում ընդգրկված են 120 չինական ընկերություններ, այդ թվում՝ 103-ը՝ մայրցամաքային Չինաստանից, 8-ը՝ Հոնկոնգից և 9-ը՝ Թայվանից: 103 թվարկված ընկերություններից 48-ը մայրցամաքային Չինաստանում համարվում են կենտրոնական ձեռնարկություններ, 24-ը՝ տեղական պետական ձեռնարկություններ, իսկ 11-ը՝ ձեռնարկություններ, որոնք ֆինանսավորվում են պետական միջոցներից (ընդամենը 83 ձեռնարկություն): Այլ խոսքերով՝ ընկերությունների ավելի քան 80%-ը (80,6%) այդ ցուցակում պետական է: Այս իրավիճակը մեծ ճնշում գործադրեց արևմտյան աշխարհի վրա:

Ո՞րն է Չինաստանի հաջողության գաղտնիքը:

Չինաստանի զարգացումը և հաջողությունը շատ բանով պայմանավորեցին արևմտյան երկրների զգոնությունը և նրանց արձագանքը: Վերջին չորս տասնամյակում Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականությունն իրականացվում էր բաց շուկայական տնտեսության պայմաններում՝ ստեղծված հետպատերազմյան արևմտյան երկրների կողմից: Կանոնների վրա հիմնված այդ համակարգն օբյեկտիվորեն ապահովում է ուժեղ արտաքին երաշխիք մեր բարեփոխումների և բաց քաղաքականության համար: Հատկապես նկատելի է բազմակողմ առևտրային համակարգի դերը: Այն ոչ միայն ապահովում է միասնական, թափանցիկ և անվտանգ արտաքին շուկա, այլև տրամադրում է բազմաթիվ առավելություններ և հարմարություններ զարգացող երկրների համար, ինչպիսին են արտոնյալ համաձայնագրերը, ինչպես նաև կանոնների հիման վրա առևտրային վեճերի լուծման արժեքավոր մե-

խանիզմը: Բայց 2008թ. ֆինանսական ճգնաժամից հետո արևմտյան երկրները, ըստ երևույթին, էլ չեն կարողանում հանդուրժել Չինաստանի հետագա աճն ու զարգացումը՝ պահանջելով «բաց շուկա» և արդար առևտուր, և անգամ Միացյալ Նահանգներն ու Եվրոպան չեն ուզում կատարել իրենց պարտավորությունները Չինաստանի հանդեպ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոնների համաձայն: Վերջին երկու տարիներին Միացյալ Նահանգները, Եվրոպան և Ճապոնիան համատեղ հանդես են եկել մի շարք հայտարարություններով մեր դեմ՝ մեզ մեղադրելով հայրենական արդյունաբերության համար տեխնոլոգիաների, սուբսիդիաների պարտադիր հանձնման և օտարերկրյա ներդրումների լուրջացման պահանջների մեջ:

Թվում է, թե այս նոր փուլում արևմտյան երկրներն էլ ավելի հաճախ են պահանջում վերիմաստավորել հարաբերությունները Չինաստանի հետ, դա հատկապես վերաբերում է տնտեսական համագործակցությանը: Այս համատեքստում ո՞րն է միջազգային հանրության վերաբերմունքը Չինաստանի նախկին գործելակերպի և ապագա նպատակների հանդեպ: Ի՞նչ կարող է ձեռնարկել «Արևմտյան միությունը», և ո՞րն է «բաց քաղաքականությունը», որին ձգտում է Չինաստանը: Ներկայում Արևմուտքը, որը ներկայացված է Միացյալ Նահանգներով, ըստ երևույթին, մեզ համար մի նոր ոճ է նկարել: Բայց արդյո՞ք Չինաստանը պատրաստ է ընդունել այն: Ինչո՞ւ Չինաստանի զարգացման ուղղությունն ու մոդելը պետք է որոշեն Միացյալ Նահանգները և մյուս արևմտյան երկրները: Չինաստանը վաղ թե ուշ դուրս կգա առաջնային պլան և կաշխատի արևմտյան երկրների հետ՝ նոր, «համաձայնեցված, փոխընդունելի» բաց մոդելի ստեղծման ուղղությամբ:

Երկրորդ՝ կատեղծի երկարաժամկետ մեխանիզմ հավասարակշռված զարգացման և կոռուպցիայի դեմ պայքարի համար:

Արագ տնտեսական աճի և մարդկանց կենսամակարդակի

մշտական բարելավման կողքին՝ ներքին զարգացման հարցերում կուտակված հիմնախնդիրներն էլ ավելի նկատելի են դառնում: Այդ հարցերը նկատելի են երկու ասպեկտներում.

- Չինաստանի բարեփոխումների և բաց քաղաքականության գործընթացը լի է անորոշությամբ և բազմաթիվ անարդար կողմերով: Բացի այդ, եկամուտների անհավասարությունը՝ պայմանավորված տնտեսական զարգացմամբ, անհավասարության խնդիրը դարձնում է խիստ սուր: Բնչպես նշված է 19-րդ Ազգային կոնգրեսի հաշվետվությունում, «զարգացման անհավասարությունը» լուրջ խնդիր է դարձել զարգացման հաջորդ քայլի համար:
- Մի շարք պաշտոնյաների կոռուպացված լինելը: Բարեփոխումների և բաց քաղաքականությունից հետո, թեև մենք հրաժարվել ենք Մշակութային հեղափոխությունից, որի կողմնակիցն էր նախագահ Մաոն, այդ հեղափոխությունը պայմանավորած երևույթներն ու խնդիրները դեռևս առկա են, այսինքն՝ պրոլետարիատը վերածվել է «բուրժուազիայի» և էլ ավելի է հարստանում: Այս համատեքստում մենք պետք է հասկանանք և լուծենք որոշ ղեկավար կադրերի կողմից կոռուպցիայի և նրանց պրոֆեսիոնալիզմի նվազման հիմնախնդիրը: Մա լուրջ խնդիր է, որին բախվել ենք մենք: 18-րդ Ազգային կոնգրեսի ժամանակներից մենք վերահսկում էինք կոռուպցիոն իրավիճակը ներքին հսկողության և պատիժների օգնությամբ (Կարգապահության ստուգման կենտրոնական հանձնաժողով): Բայց երկարաժամկետ հակակոռուպցիոն մեխանիզմի ստեղծումը, որը կապահովեր երկարաժամկետ հակակոռուպցիոն էֆեկտ, առայժմ ստեղծված չէ:



ՀՐԱՆՑ ԲԱԳՐԱՏՅԱՆ

*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վարչապետ 1991,
1993-1996թթ.,
Հայ-ռուսական համալսարան*

ՉԻՆԱՍՏԱՆ. ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՀՐԱՇՔ

Չինական տնտեսական բարեփոխումների սկիզբը 1978 թվականն է, երբ ՉԺՀ փոխվարչապետ (իրականում երկրի փաստացի ղեկավար) Դեն Սյաոպինը, ի դեմս Չինաստանի Կոմունիստական կուսակցության՝ պրագմատիկ թևի կուսակցության, Կենտկոմի ղեկտեմբերյան պլենումում հռչակեց ՉԺՀ սոցիալ-տնտեսական նորացման քաղաքականությունը: Առարկելով կուսակցական հակառակորդներին՝ մոլեռանդ մարքսիստներին՝ Դենն ասում էր. կարևոր չէ՝ ինչ գույնի է կատուն, կարևորը մկներ բռնելն է: Այսինքն՝ երկրի տնտեսական զարգացման համար ՉԿԿ-ն պետք է գնա արմատական քայլերի, անցնի կապիտալիստական տնտեսվարման կանոններին: Այդ ժամանակ նա հանդիպեց ԱՄՆ նախագահ Ջ.Քարթերի, Ճապոնիայի վարչապետ Մ.Օհիրայի, Մեծ Բրիտանիայի վարչապետ Մ.Թետչերի և Պորտուգալիայի կառավարության հետ: Այդ հանդիպումների արդյունքում ԱՄՆ-ը դադարեցրեց դիվանագիտական հարաբերությունները Չինական հանրապետության հետ (Թայվան) և վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները ՉԺՀ-ի հետ: Մեծ

Բրիտանիայի հետ պայմանավորվածությունն ձեռք բերվեց 1999-ից հետո՝ Հոնկոնգը Չինաստանին վերադարձնելու մասով: Նմանատիպ պայմանավորվածությունն ձեռք բերվեց նաև Պորտուգալիայի հետ՝ Մակաոյի մասով: Դենին հաջողվեց համոզել չինացիներին մի կողմ դնել Ճապոնիայի հանդեպ առկա ատելությունն ու հակակրանքը (Չինաստանը Ճապոնիայից պարտություններ էր կրել 1894-1895թթ., տվել էր ահռելի մարդկային կորուստներ 1937-1945թթ. պատերազմների ժամանակ) և բացել երկրի շուկաները ճապոնական ապրանքների համար:

Դեն Սյաոպինը կարողացավ նաև ՉԺՀ քաղաքական ղեկավարության մեջ աջակցություն գտնել՝ հանձնես Հու Յաոբանի, Չյան Չեմինի, Լի Պենի և այլոց ու 1978թ. դեկտեմբերին ՉԺՀ ԿԿ Պլենումի ժամանակ կուսակցության պրագմատիկների թևի անունից հայտարարել բարեփոխումների գծի մասին: Բարեփոխումների առաջին փուլը տևեց 6 տարի (1978-1984թթ.) և լուծեց հետևյալ խնդիրները չինական տնտեսության համար:

Նախևառաջ, գյուղատնտեսական հողերը հանվեցին կոմունանների հաշվեկշռից և հանձնվեցին ընտանեկան ֆերմաներին (կատարվեց քայլ կուլեկտիվ հողատիրության ուղղությամբ): Կոմունանները վերացվեցին: Չինաստանի պատմության մեջ սաչտեսնված քայլ էր: Ընդհանրապես, Չինաստանում գյուղատնտեսական հողերի մասնավոր սեփականություն երբեք չի եղել: Մարդկության տնտեսական քաղաքակրթության 11 հազ. տարիների ընթացքում այս երկրում ապրել է աշխարհի բնակչության 25-50%-ը: Չինաստանը հողի խնդիր միշտ է ունեցել և գերադասել է հողի վարձակալության տարբեր համակարգերի կիրառումը: Ի դեպ, այնուամենայնիվ, դաշտավարության տարբեր համակարգերի կիրառման շնորհիվ, Չինաստանին միշտ էլ հաջողվել է ինքնաբավ լինել գյուղմթերքների առումով և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշով 10800 տարի շարունակ լինել առաջատարն աշ-

խարհում: 20-րդ դարի 90-ական թվականների հայկական բարեփոխումները (անցումը մասնավոր հողատիրության) նույնպես սկսվեցին հողային բարեփոխումներով: Ի դեպ, սա չինական և հայկական տնտեսական բարեփոխումների միակ նմանությունն է:

1978-1984թթ. բարեփոխումների մյուս քայլը Չինաստանում պետական ձեռնարկություններին տնտեսվարման ազատություն տալն էր: Սա նույն քայլն էր, ինչ տնտեսվարկը ԽՍՀՄ-ում (1965թ.) կամ Հարավսլավիայում դրանից 10 տարի առաջ: Միայն թե Չինաստանում հրաժարվեցին ձեռնարկությունների պլանը տնտեսական դիրեկտիվների ձևով հաստատելուց և ստացած շահույթը կամայականորեն վերաբաշխելուց: Վերջիններիս առկայությունը կործանեց խորհրդային տնտեսական համակարգը:


Տնտեսական բարեփոխումների առաջին փուլի վերջին խումբ ազատությունը ձեռնարկությունների համար արտաքին տնտեսական գործունեության լիարժեք պայմանների ստեղծումն էր. արտաքին առևտրի պետական մենաշնորհի վերացումը, անցումը բաց դռների քաղաքականությանը, արտաքին շուկաներում չինական արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության ակտիվացումը:

Առաջին փուլի արդյունքները տպավորիչ էին: 1978-1984թթ. երկրի ՀՆԱ-ն աճեց 2.1 անգամ (տե՛ս Նկ. 1): Չինաստանը բրնձի և ցորենի ռեկորդային բերք ստացավ: Բնակչության պարենային մատակարարման կտրուկ բարելավման ֆոնին երկիրը համարձակ խնդիրներ առաջադրեց:

Բարեփոխումների 2-րդ փուլը (1984-1997թթ.) շուկայական հարաբերություններով պայմանավորված մակրոտնտեսական միջավայրի կայացումն էր: Անցում կատարվեց պետական ձեռնարկությունների և ընկերությունների գործունեության երկարաժամկետ ծրագրավորմանը, լիմիտավորվեցին նման ծրագրերում և պլաններում պետության իրավունքները, պետությունը ներդրեց գնաճը կարգավորելու մեխանիզմներ (ի տարբերություն Հայաս-

Նկար 1

ՀՆԱ դինամիկան Չինաստանում, ԱՄՆ-ում և Աշխարհում
1980-2017թթ. (%): 1980թ.=100%¹



տանի, որտեղ Արժույթի միջազգային հիմնադրամի պնդմամբ՝ գնաճը դիտարկվում է իբրև զուտ մոնետար երևույթ և զուտվում է Կենտրոնական բանկի կողմից փողի բազայի և/կամ զանգվածի կամայական փոփոխությունների միջոցով), մասնավորապես վերահսկելով արտադրական ենթակառուցվածքների, ապրանքների ու ծառայությունների առաջարկի կորը: Բացի այդ, այս փուլում կարգավորվեցին պետական ակտիվների զարգացման ինստիտուցիոնալ հիմքերը, նոր, մասնավոր ընկերություններ ստեղծելու գործում պետության մասնակցության ձևերն ու մեթոդները:

Տնտեսական բարեփոխումների 3-րդ փուլը Չինաստանում սկսվել է 1998թ. և շարունակվում է առ այսօր: 3-րդ փուլին բնորոշ առանձնահատկություններն են. արտահանման ու մասնավոր ընկերությունների (հատկապես փոքր ու միջին) խրախուսումը, վճարման հաշվեկշռի դրական մնացորդով պայմանավորված չինական ձեռնարկությունների արտաքին էքսպանսիայի խրախուսումը,

¹ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?view=chart>.

միջազգային ֆինանսական շուկաներում չինական ընկերությունների համար գերիշխող դիրքեր նվաճելը: Կարելի է պնդել, որ 2017-ի աշնանը կայացած ՉԿԿ համագումարը, որտեղ հիմնականում քննվեցին կառավարության ռազմավարական պլանները, ինչպես նաև երկրում կոռուպցիայի ու կաշառակերության վերացման խնդիրները, ըստ էության, ազդարարեցին չինական բարեփոխումների 4-րդ փուլի սկիզբը:

Չինական տնտեսական բարեփոխումների արդյունքն ապշեցուցիչ է: Ինչպես տեսնում ենք *Նկ. 1*-ում, 1980-2017թթ. Չինաստանի ՀՆԱ-ն աճել է 37.5 անգամ՝ այն դեպքում, երբ ԱՄՆ տնտեսությունն աճել է սուսկ 2.7, իսկ աշխարհինը՝ 3.2 անգամ²: Չինաստանն արդեն 42-րդ տարին անընդմեջ (1977-2018) դրական տնտեսական աճ ունի: Սա համաշխարհային ռեկորդ է:

Որո՞նք են չինական տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունները, ո՞րն է դրանց տարբերությունն, ասենք, Ճապոնիայի, Հվ. Կորեայի կամ Մինգապուրի համեմատ: Չինացի տնտեսագետները, սովորաբար, առաջին հերթին ընդգծում են տնտեսության պլանային բնույթը և կոմունիստական կուսակցության ղեկավար դերը (միակուսակցական համակարգ): Նման մտածելակերպը գալիս է նրանից, որ չինացիները (ինչպես նաև ճապոնացիներն ու կորեացիները) տնտեսական կյանքում առաջնությունը տալիս են կոլեկտիվ, ֆիրմային մտածելակերպին և հեռու են արևմտյան ինդիվիդուալիզմից: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, նշված առանձնահատկություններին պետք է ավելացնել հետևյալը.


- պետական ընկերությունների գերիշխող դերը շինարարության, ենթակառուցվածքների և բանկային ոլորտներում,
- կառավարության կարողությունը գնաճը վերահսկելու հարցում արտադրական ենթակառուցվածքներում ծառայությունների գներ սահմանելու միջոցով,

² <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?view=chart>.

- խնայողությունների բարձր մակարդակը և սպառման ծավալների մշտական սահմանափակումը,
- աշխատողներին արձակուրդներ տալու համատարած համակարգի բացակայությունը,
- պետական կենսաթոշակային համատարած համակարգի բացակայությունը,
- փոքր բիզնեսի բարձր տեսակարար կշիռը,
- չափավոր հարկային համակարգը,
- հողի կոլեկտիվ և ընտանեկան համակարգերի տարածված լինելը,
- առևտրային հաշվեկշռի դրական մնացորդի ստերիլիզացիան (ի տարբերություն Ճապոնիայի, Չինաստանը խրախուսում է հայրենական արտադրության մրցունակությունը աշխատավարձերը ցածր պահելու և արտաքին առևտրի դրական մնացորդը օտարերկրյա արժեթղթերի մեջ ներդնելու միջոցով):

Նկար 2

Համաշխարհային տնտեսական աճին մասնակցությունը 1980-2015թթ., % (կապույտ՝ Չինաստան, կանաչ՝ ԱՄՆ, կարմիր՝ այլ զարգացող երկրներ)³




³The Economist, August 29th – September 4th, p. 19.

Այս ամենի արդյունքում Չինաստանն այսօր աշխարհի թիվ 1 տնտեսական խաղացողն է: Այսպես, ինչպես տեսնում ենք Նկ. 2-ում, այսօր Չինաստանը համաշխարհային տնտեսական աճին նպաստում է 2 անգամ ավելի շատ, քան ԱՄՆ-ը և համարյա այնքան, որքան բոլոր զարգացող երկրները միասին վերցրած:

Նկար 3

Էնթալկառուցվածքների վրա կատարվող ծախսեր: %-ով ՀՆԱ-ի նկատմամբ: 2008-2013թթ. ⁴



Ինչպես նշեցինք վերևում, Չինաստանի կարևոր առանձնահատկություններից մեկը պետական ուշադրությունն է արտադրական ենթակառուցվածքներին. ճանապարհներ, կամուրջներ, տրանսպորտային խաչմերուկներ, թունելներ, երկաթգծեր, օդանավակայաններ, հիդրոհանգույցներ, արևային ու քամու էլեկտրակայաններ, ջրանցքներ և այլն: Չինաստանը 1980-2015թթ. կառուցեց 120 հազ. կմ ավտոմայրուղիներ և այդ ցուցանիշով անցավ ԱՄՆ-ից (90 հազ. կմ): 2017-ին Չինաստանի ներդրումներն արևային և քամու էներգետիկայի ոլորտում ավելին էին, քան մնացած ամբողջ աշխարհը միասին վերցրած: Նկ. 3-ում տեսնում ենք, որ 2008-2013թթ. այս երկիրը ենթակառուցվածքների վրա ծախսել է ՀՆԱ


⁴The Economist, April 22nd – 28th, 2017, p. 65.

9%-ը: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ը կամ Գերմանիան այդ նպատակների համար ծախսել է 4-4.5 անգամ ավելի քիչ:

Չինաստանին անխուսափելիորեն սպասում է աշխատավարձերի բարձրացումը: Այսպես, արդյունաբերության մեջ 1 ժամվա միջին վարձաչափը Չինաստանում 2008-2018թթ. բարձրացել է 1.5 դոլարից մինչև 4 դոլար, այդ նույն թիվը Թաիլանդում 2.5 դոլար է, Վիետնամում՝ 2, Ֆիլիպիններում՝ 1.8 և Կամբոջայում՝ 1.5 դոլար (ԱՄՆ՝ 21 դոլար)⁵: Չինական ընկերությունները արդեն շատ արտադրություններ տեղափոխում են այդ երկրներ:

Նկար 4

Ներդրումները և սպառումը Չինաստանում 2001-2014թթ.,
% ՀՆԱ նկատմամբ



Հետաքրքիր է նաև Չինաստանի կողմից խնայողությունների (ներդրումների) և սպառման կարգավորումը: Չինաստանի՝ մի կողմից, և Ճապոնիայի ու Հվ. Կորեայի՝ մյուս կողմից, տարբերությունն այն է, որ առաջին դեպքում արտաքին առևտրի դրական հաշվեկշիռն ամբողջությամբ ստերիլիզացվել է՝ հոգուտ ներդրում-

⁵ <https://edition.cnn.com/business>

⁶ The Economist, August 29th – September 4th, 2015, p. 19.

ների: Ինչպես տեսնում ենք *Նկ. 4*-ում, 2001-2014թթ. ներդրումները գրեթե մշտապես գերազանցել են սպառումը: Ներկայում դրանց հարաբերությունը կազմում է 53-47՝ հոգուտ ներդրումների: Աշխարհի միջինը կազմում է 23-77, իսկ ԱՄՆ-ում 24-76 է (նկատենք, Հայաստանում այս հարաբերությունը 10-90 է, իսկ առանձին տարիներին սպառումը գերազանցել է ՀՆԱ-ն):

Ինչպես ասացինք, չինական տնտեսական համակարգի կարևոր առանձնահատկություններից է փոքր բիզնեսի բարձր տեսակարար կշիռը մի շարք ծավալային ցուցանիշների մեջ: *Աղյուսակ 1*-ի տվյալներից տեսնում ենք, որ իրականում չինական \$2.5 տրլն արտահանման 60%-ն արվում է փոքր բիզնեսի կողմից:

Աղյուսակ 1
Փոքր բիզնեսի տեսակարար կշիռը արտահանման մեջ, միջինը 1998-2008թթ.⁷

Չինաստան	60%
Հնդկաստան	38-40%
Վիետնամ	20%
Սինգապուր	16%
Մալայզիա	15%
Ինդոնեզիա	18%
Թաիլանդ	46%
Ֆիլիպիններ	22%
Պակիստան	25%

Ի վերջո, չինական տնտեսական հաջողությունների գրավականներից է չինական հարկային համակարգը: Պատմականորեն Չինաստանը միշտ էլ ունեցել է չափավոր (բեռի իմաստով) հարկային համակարգ: Դա են վկայում *Աղյուսակ 2*-ի տվյալները: Մեր օրերում ևս, չինական հարկային համակարգը չափավորներից է: Դա են փաստում *Նկ. 5*-ի տվյալները:

⁷ http://www.edinburgh-group.org/media/2776/edinburgh_group_research_-_growing_the_global_economy_through_smes.pdf, p. 19


Աղյուսակ 2

Հարկերը ՀՆԱ-ի նկատմամբ, %⁸

Երկիր	Շրջան	Բոլոր հարկերը, ներառյալ եկեղեցական
Անգլիա	1285-1688	6
	1689-1800	14
Չինաստան	Մին, 1550	6-8
	Ցին, 1650	4-8
	Ցին, 1750	8
Օսմանյան կայսրություն	1500-1599	3.5
	1600-1699	3.5
	1700-1799	4.5

Նկար 5

Հարկային դրույքաչափերը %-ով Չինաստանում և մի շարք երկրներում 2016թ.⁹



Չնայած տնտեսական անօրինակ հաջողություններին՝ Չինաստանի առջև կանգնած են լուրջ մարտահրավերներ՝ ԱՄՆ տնտեսական պատժամիջոցները, առողջապահության և կրթության ոլորտի հիմնախնդիրները, բնակարանային շինարարությունը, կենսաթոշակային համատարած համակարգի ներդնումը,

⁸ *Кларк Г., Прощай, нищета! Краткая экономическая история мира/ пер. с англ. Н.Эдельмана, 2-е изд., М.: Издательство Института Гайдара, 2013, с. 222.*

⁹ *The Economist, December 17th – 23rd, 2016, p. 60.*

վճարման հաշվեկշռի դրական մնացորդի կառավարումը, տնտեսության ոչ ֆինանսական հատվածի պարտքերը և, վերջապես, ընդամենը մի քանի տարի հետո աշխարհում առաջին տնտեսությունը լինելու անխուսափելի փաստը՝ դրանից բխող պարտականություններով հանդերձ: Սրանք են չինական տնտեսակարգի հիմնախնդիրներն առաջիկա տասնամյակում:

ԱՇՈՏ ԹԱՎԱԴՅԱՆ

*Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր*




ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵԱՏՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չինաստանի տնտեսությունում կարևորագույն նշանակություն ունեն կողմնորոշիչների հստակ առաջադրումն ու տնտեսության կարգավորումը, ինչպես նաև տնտեսության նպատակներին հասնելու փուլային սկզբունքը: Դրան համապատասխան էլ ձևավորվում է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը: Կոմնորոշիչների առաջադրման գործում կարևոր դեր է խաղում տնտեսական կառուցվածքի օպտիմիզացիան ի հաշիվ գիտատար և նորարարական նախագծերի: Չինաստանի տնտեսության աճի դինամիկան ամենաբարձրներից մեկն է աշխարհում, 30 տարվա ընթացքում այն կազմել է տարեկան միջինը 9.9%¹: 2016թ. աճի տեմպը կազմել է 6.7%, իսկ 2017թ.՝ 6.9% (տե՛ս *Գծանկար 1*): Չինաստանի տնտեսության աճի տեմպը 2016թ. ամենացածրն է եղել վերջին տարիներին, թեև Հայաստանի տնտեսության համար, օրինակ, սույն ցուցանիշը կարելի է համարել կողմնորոշիչ:

¹ Հոդվածում օգտագործվել են tradingeconomics.com, imf.org, worldbank.org, armstat.am, bankir.ru ռեսուրսների տվյալները:

Գծապատկեր 1

Չինաստանի տնտեսության աճի տեմպը



ԵԱՏՄ բոլոր երկրները, հաշվի առնելով ՉԺՀ-ի հետ առևտրային և ներդրումային կապերը, խիստ հետաքրքրված են Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտուն (ՄՃՏԳ) միանալու, չինական ներդրումներ ներգրավելու հարցով: ԵԱՏՄ-ին անդամակցությունը ենթադրում է ԵԱՏՄ երկրների տնտեսական պոտենցիալի մեկտեղում, ինչը դրական ազդեցություն կունենա այլ երկրների, այդ թվում և Չինաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման վրա:

Հարկ է ընդգծել, որ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի² 4-րդ հոդվածում («Միության հիմնական նպատակները») նշված է, որ Միության հիմնական նպատակն է ոչ միայն ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորումը, այլև ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացումը, կոոպերացումն ու մրցունակության բարձրացումը: Փաստորեն, պայմանագրում նշված է տնտե-

² «Договор о Евразийском экономическом союзе», http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/

սուրբան զարգացմանը նպաստելու անհրաժեշտության մասին ըստ այս արդյունավետ սցենարի: Սակայն մակրոտնտեսական ցուցանիշների, մասնավորապես՝ գնաճի և ազգային արժույթների փոխարժեքների թույլ համաձայնեցվածությունը չի նպաստում տնտեսական քաղաքականության կոորդինացմանը ոչ միայն ԵԱՏՄ-ում, այլև Չինաստանում (տե՛ս *Աղյուսակ 1*): Չնայած այն բանին, որ մակրոտնտեսական ցուցանիշների համաձայնեցումը ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի կարևոր պահանջն է:

ԵԱՏՄ անդամ պետությունները երկկողմանի պայմանավորվածություններ ունեն Չինաստանի հետ: ԵԱՏՄ-ի և ՄՃՏԳ-ի շաղկապման մասին հայտարարությունը ԵԱՏՄ-ի կողմից ստորագրեց Ռուսաստանի նախագահը: Անհրաժեշտ է կոորդինացում և այս հայտարարությանը ԵԱՏՄ բոլոր երկրների միացում: ԵԱՏՄ-ի և Չինաստանի միջև ապրանքաշրջանառության էական աճի համար անհրաժեշտ է իրականացնել ոչ միայն ԵԱՏՄ երկրների համաձայնեցված մակրոտնտեսական, այլև արտաքին տնտեսական քաղաքականություններ: Այլապես առկա է անհավասար մրցակցության վտանգ այս երկրների ձեռնարկությունների միջև:

ԵԱՏՄ-ի և ՄՃՏԳ-ի շաղկապման հնարավորությունների գնահատման համար ներկայացնենք ԵԱՏՄ երկրների, Չինաստանի, ինչպես նաև ԱՄՆ ՀՆԱ-ն (*Աղյուսակ 2*):

ՀՆԱ-ում ԳՈՒՊ (գնողունակության պարիտետ) հաշվառմամբ Չինաստանն աշխարհում առաջին տեղում է: Հատկանշական է, որ Ռուսաստանն ըստ ՀՆԱ-ում ԳՈՒՊ ցուցանիշի զբաղեցնում է վեցերորդ տեղն աշխարհում: Չինաստանի և Ռուսաստանի պոտենցիալը, նրանց հարևանությունը ԵԱՏՄ-ի և ՄՃՏԳ-ի շաղկապման պարագայում, հնարավորություն է տալիս ավելացնել արտահանումը և ներդրումները ԵԱՏՄ բոլոր երկրների համար:

Զարգացած փոքր երկրներում արտահանման և ՀՆԱ-ի հարաբերակցությունը 30%-ից ցածր չէ, քանի որ ակնհայտ է, որ շու-

Աղյուսակ 1

Գնաճը, ԿԲ տոկոսադրույքը և ազգային արժույթի փոխարժեքը
ԵԱՏՄ պետություններում և Չինաստանում

Երկիրը	Թվականը	Տարեկան գնաճը	ԿԲ տոկոսադրույքը	Փոխարժեքի փոփոխությունը \$-ի համեմատ ³
Չինաստան	2015	1.6 %	5.60 %	- 5.2 %
	2016	2.1 %	4.35 %	- 6.5 %
	2017	1.8 %	4.35 %	-6.2 %
	2018թ. հոկտեմբեր	2.5 %	4.35 %	+ 3.5 %
Ռուսաստան	2015	12.9 %	11.00 %	+ 24.8 %
	2016	5.4 %	10.00 %	- 18.9 %
	2017	2.5 %	7.75 %	- 4.1 %
	2018թ. հոկտեմբեր	3.5 %	7.50 %	+ 10.3 %
Ղազախստան	2015	13.6 %	5.50 %	+ 87.6 %
	2016	8.5 %	12.00 %	- 3.0 %
	2017	7.1 %	10.50 %	- 0.9 %
	2018թ. հոկտեմբեր	5.3 %	9.25 %	+ 5.8 %
Բելառուս	2015	11.4 %	25 %	+ 57.6 %
	2016	10.6 %	18 %	+ 4.7 %
	2017	4.6 %	11 %	+ 1.7 %
	2018թ. հոկտեմբեր	4.9 %	10 %	+ 8.1 %
Հայաստան	2015	-0.1 %	8.75 %	+ 1.3 %
	2016	-1.1 %	6.25 %	+ 0.8 %
	2017	2.6 %	6.00 %	+ 0.0 %
	2018թ. հոկտեմբեր	2.8 %	6.00 %	+ 0.5 %
Ղրղզստան	2015	3.4 %	10.00 %	+ 30.3 %
	2016	-0.5 %	5.00 %	- 9.8 %
	2017	3.7 %	5.00 %	- 0.5 %
	2018թ. հոկտեմբեր	0.8 %	4.75 %	+ 0.5 %

³ «+»-ը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի բարձրացման տոկոսը, «-»-ը իջեցման տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ, Չինաստանի և ԱՄՆ ՀՆԱ-ն (2017թ., ըստ ԱՄՀ ցուցակի)

Երկիրը	Անվանական ՀՆԱ (\$ մլրդ)	ՀՆԱ ԳՈՂ (\$ մլրդ)	Բնակչության մեկ շնչի անվանական ՀՆԱ-ն (\$ հազ.)	Բնակչության մեկ շնչի ԳՈՂ ՀՆԱ-ն (\$ հազ.)
ԱՄՆ	19 391 (1)	19 391 (2)	59.8 (7)	59.8 (11)
Չինաստան	12 015 (2)	23 159 (1)	8.6 (72)	16.6 (79)
Ռուսաստան	1 527 (12)	4 008 (6)	10.9 (62)	27.9 (48)
Ղազախստան	161 (57)	478 (42)	8.8 (71)	26.1 (54)
Բելառուս	54.4 (80)	173 (72)	5.7 (90)	18.6 (70)
Հայաստան	11.0 (132)	27.1 (135)	3.9 (116)	9.1 (111)
Ղրղզստան	7.1 (147)	22.7 (139)	1.1 (158)	3.6 (147)

կան այնտեղ մեծ չէ և արտահանումը դառնում է զարգացման վճռորոշ գործոն: Արտահանման զգալի աճն առաջին հերթին հնարավոր է ԵԱՏՄ-ի՝ զարգացմամբ և ըստ նպատակների մոտ երկրներում, ինչպես նաև ԵԱՏՄ-ի և ՄՃՏԳ-ի կապակցման պարագայում, որտեղ ակնհայտ է դրա գերակայությունը որպես համապետական խնդիր: Սրա գիտակցումը, բնականաբար, ենթադրում է Հայաստանի տնտեսության ինտեգրում ոչ միայն ԵԱՏՄ-ին, այլև Չինաստանի հետ տնտեսական հարաբերությունների ակտիվ զարգացում:

Եթե արտահանումը (տե՛ս Աղյուսակ 3) դեպի Ռուսաստան 2016թ. աճել է 52.9%-ով, իսկ 2017-ին՝ 47.8%-ով, ապա Չինաստանում 2016թ. արտահանումը նվազել է (-41.7%), բայց 2017-ին ավելացել է 28.4%-ով: Ներկրումը Ռուսաստանից Հայաստան 2017-ին աճել է 18.9%-ով, իսկ Չինաստանից ներմուծումն այդ տարի աճել է 32.6%-ով: Ոչ միայն ԵԱՏՄ-ի, այլև Չինաստանի հետ ապրանքաշրջանառության հետագա աճի համար, բնական է՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի հաշվառմամբ, հարկ է ավելի արդյունավետ օգտագործել ԵԱՏՄ հնարավորությունները:

Աղյուսակ 3

ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը

Արտահանում	2015		2016		2017		2018	
	հազ. \$	%	հազ. \$	%	հազ. \$	%	հազ. \$	%
Ընդհանուր	1,485,332	100.0%	1,791,724	100.0%	2,187,472	100.0%	1,759,442	100.0%
ՈւՂ	244,893	16.5%	374,471	20.9%	530,883	24.3%	470,635	26.7%
Բուլղարիա	78,928	5.3%	152,420	8.5%	275,402	12.6%	176,343	10.0%
Շվեյցարիա	38,953	2.6%	74,643	4.2%	262,832	12.0%	236,462	13.4%
Գերմանիա	140,253	9.4%	138,950	7.8%	130,865	6.0%	114,916	6.5%
Իրաք	130,637	8.8%	137,896	7.7%	115,932	5.3%	98,030	5.6%
Վրաստան	125,320	8.4%	146,938	8.2%	151,838	6.9%	46,244	2.6%
Չինաստան	165,318	11.1%	96,384	5.4%	123,767	5.7%	78,445	4.5%
Իրան	81,728	5.5%	75,253	4.2%	83,478	3.8%	73,059	4.2%
Կանադա	108,335	7.3%	139,936	7.8%	12,876	0.6%	25,976	1.5%
Նյութեր/արդյունք	47,314	3.2%	50,836	2.8%	84,927	3.9%	86,116	4.9%

Ներմուծում	2015		2016		2017		2018	
	հազ. \$	%	հազ. \$	%	հազ. ՚ \$	%	հազ. \$	%
Ընդհանուր	3,239,239	100.0%	3,273,469	100.0%	4,137,278	100.0%	3,562,438	100.0%
ՈՂ	942,385	29.1%	983,835	30.1%	1,169,809	28.3%	902,618	25.3%
Չինաստան	316,086	9.8%	357,203	10.9%	473,759	11.5%	484,927	13.6%
Գերմանիա	202,076	6.2%	186,426	5.7%	203,553	4.9%	210,147	5.9%
Իրան	198,361	6.1%	163,998	5.0%	175,528	4.2%	181,905	5.1%
Թուրքիա	136,958	4.2%	163,648	5.0%	223,885	5.4%	173,546	4.9%
Իտալիա	148,490	4.6%	128,772	3.9%	157,549	3.8%	135,629	3.8%
ԱՄՆ	107,646	3.3%	82,949	2.5%	147,981	3.6%	126,623	3.6%
Ուկրաինա	124,620	3.8%	101,791	3.1%	115,217	2.8%	110,106	3.1%
Վրաստան	66,801	2.1%	98,305	3.0%	91,846	2.2%	51,973	1.5%
Շվեյցարիա	51,592	1.6%	47,365	1.4%	96,719	2.3%	104,284	2.9%

Արտահանման աճը բարձր հավանականություն ունի այն ոլորտներում և դեպի այն երկրներ, որտեղ գոյացել է տվյալ ապրանքների պահանջարկ, որը հնարավոր մակարդակի չի հասնում նաև առայժմ ոչ բավարար չափով համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության, մասնավորապես՝ ԵԱՏՄ-ում ազգային արժույթի փոխարժեքների չհամաձայնեցվածության պատճառով: Հայաստանի համար արտահանական պոտենցիալ ունեն գյուղատնտեսական և գինու-կոնյակի արտադրանքը, թեթև և քիմիական արդյունաբերությունը, զուևավոր մետաղների վերամշակումը, թանկարժեք քարերի և մետաղների մշակումը: Բավական կարևոր է գտնել մեր տեղը պաշտպանական արտադրանքի, նանոտեխնոլոգիաների, հաստոցաշինության արտադրությունում:

Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտուն արդյունավետորեն շաղկապվելու համար ԵԱՏՄ երկրները պետք է, ԵԱՏՄ-ի մասին պայմանագրին համապատասխան, ճշգրտեն և համաձայնեցնեն ԵԱՏՄ երկրների տնտեսական քաղաքականության գերակայությունները, հստակ սահմանեն նրա նպատակները, ձևակերպեն տնտեսության զարգացման նոր մոդելը, կանխատեսեն ակնկալվող արդյունքները: Չափազանց կարևոր է տնտեսական քաղաքականության, մանավանդ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության արձագանքը տնտեսական անվտանգության խախտման արձանագրվող ազդակներին՝ ՀՆԱ անկում, առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի մեծացում, գնաճ: Արտաքին բացասական ներգործություններին դիմակայելու ունակությունը կարևոր նշանակություն ունի ներդրումների, այդ թվում, իհարկե, նաև չինական ներդրումների ներգրավման համար: Հայաստանի տնտեսության ներդրումների կառուցվածքում, չնայած չինական ներդրումների հսկայական պոտենցիալին, Չինաստանն առայժմ առաջավոր դիրքեր չի զբաղեցնում (տե՛ս *Աղյուսակ 4*): Հաշվի առնելով ԵԱՏՄ հնարավորությունները ՄՃՏԳ-ին միանալու

Ներդրումները ՀՀ տնտեսությանում 2015-2017թթ. (\$ հազ.)

	Համախառն հոսքեր			
	Ընդամենը	Այդ թվում ուղղակի ներդրումներ	Տեսակարար կշիռ, %	
			Ընդամենը	Ուղղակի ներդրումներ
Ընդամենը	3,062,688	993,420	100.0%	100.0%
1 Ռուսաստան	973,719	504,048	31.8%	50.7%
2 Գերմանիա	539,687	13,264	17.6%	1.3%
3 Կիպրոս	346,410	43,306	11.3%	4.4%
4 Միացյալ Թագավորություն	204,280	40,317	6.7%	4.1%
5 Լյուքսեմբուրգ	171,682	80,746	5.6%	8.1%
6 Կանադա	170,175	481	5.6%	0.0%
7 Ջերսի	118,007	118,007	3.9%	11.9%
8 Նիդեռլանդներ	86,306	1,593	2.8%	0.2%
9 Արգենտինա	80,734	18,951	2.6%	1.9%
10 Լիբանան	69,664	21,907	2.3%	2.2%
11 Ֆրանսիա	65,860	43,279	2.2%	4.4%
12 Եվելցարիա	64,708	41,444	2.1%	4.2%

ուլորտում՝ բավական հեռանկարային է թվում պղնձաձուլական գործարանների կառուցումը, մասնավանդ որ պղնձի խտանյութի մոտ 20%-ը արտահանվում է Չինաստան: Հատկանշական է, որ մշակվում է ՀՀ-ում մաքուր պղնձի արտադրության ձեռնարկություն կառուցելու տեխնիկատնտեսական հիմնավորումը: Նախագծի արժեքը կազմում է մոտավորապես \$500 մլն: Չինական կողմից հիմնավորման մշակմանը մասնակցում է *CITIC* պետական կորպորացիան, ՀՀ-ի կողմից՝ «Վալեքս գրուփ» ընկերությունը: Մշակվում է նաև «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու շինարարությունում չինական ընկերությունների մասնակցության հնարավորության տեխնիկատնտեսական հիմնավորումը, ինչը, նկատի ունենալով Մեդրիի ազատ տնտեսական գոտու հեռանկարը, կարող է հետաքրքրություն ներկայացնել չինացի ներդրողների համար: Սակայն հայկական կողմը, չինացի ներդրողների հետ համաձայնության գալիս, անպայման պետք է ներկայացնի համապատասխան բիզնես ծրագիր՝ հստակ նշելով ներդրումային նախագծերի առավելությունները, դրանց հնարավոր շահութաբերությունը՝ տարածաշրջանում քաղաքական-տնտեսական իրավիճակի տարբեր սցենարների պարագայում: Դրա համար նպատակահարմար է կազմել փորձագետների համատեղ խումբ: Հարկ է նշել, որ կան նաև պղնձաձուլական, շինանյութերի արտադրության գործարանների համատեղ կառուցման, զբոսաշրջության զարգացման, գյուղատնտեսության, նանոտեխնոլոգիաների, քիմիական արդյունաբերության, դեղամիջոցների արտադրության ոլորտներում ներդրումներ անելու հեռանկարներ:

Ցավոք, վերջին 3 տարիներին Չինաստանից Հայաստան ներդրումներ չեն արվել: Հաշվի առնելով ՄՃՏԳ-ին ԵՄՏՄ միանալու հսկայական պոտենցիալը՝ ոչ միայն ԵՄՏՄ երկրների տնտեսական քաղաքականության համաձայնեցումը, այլև Չինաստանի հետ տնտեսական քաղաքականության կոորդինացումը, մասնավորապես ներդրումների նախագծերի հետ՝ կարևոր խնդիր են դառնում:

Անհրաժեշտ է նաև հստակ պատկերացնել և գնահատել ԵԱՏՄ երկրների, այդ թվում և Հայաստանի՝ Մետաքսի ճանապարհին միանալու հնարավորությունները և արդյունավետությունը: Հայաստանը, արևմուտքից արևելք ճանապարհների խաչմերուկ հանդիսանալով, բավական բարձր կրթական մակարդակ ունի, նախաձեռնող և միևնույն ժամանակ էժան աշխատուժ, բիզնեսի գրանցման և սերտիֆիկատների ստացման հեշտացված ընթացակարգ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացած կառուցվածք: Հայաստանում նկատվում է ենթակառուցվածքի, մասնավորապես՝ ճանապարհային և տրանսպորտային ենթակառուցվածքների արագ զարգացում: ԵԱՏՄ-ին անդամակցությունը, բարեկամական դիվանագիտական հարաբերությունները Չինաստանի հետ, ինչպես նաև ԵՄ-ի, Իրանի, Վրաստանի հետ դրական դիվանագիտական հարաբերությունները, հայկական մեծ համայնքի առկայությունը Ռուսաստանում, Եվրոպայում, Իրանում և Վրաստանում էապես մեծացնում են Հայաստանի տնտեսության արդիականացման հնարավորությունները, այդ թվում և Չինաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման միջոցով:



ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*«Նորավանք» ԳԿՀ
գործադիր տնօրեն*

«ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ», ԴԵՆ ՍՅԱՈՊԻՆ ԵՎ «ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՏՐԻԱԴԱ»

«Նորավանք» հիմնադրամում կատարվում են միջդիսցիպլինար հետազոտություններ՝ ուղղված ինչպես հայաստանյան, այնպես էլ այլ երկրների «կրիտիկական ենթակառուցվածքների և ոլորտների» վերհանմանը և դրանց կարևորության գնահատմանը: Արդյունքում՝ մենք եկանք եզրահանգման, որ ազգային անվտանգության տեսանկյունից որոշիչ է հանդիսանում գիտատեխնոլոգիական-հոգևոր ոլորտը, որը կարելի է «անվանել կրիտիկական ոլորտների կրիտիկական ոլորտ», քանի որ պայմանավորում է մնացյալ բոլոր ուղղությունների զարգացումը: Նման մոտեցման շրջանակներում մեր ուշադրությունը գրավեց «չինական հրաշք» կոչվող ֆենոմենը, երբ ազգ-պետությունը պատմական կարճ ժամանակում՝ 40 տարում, զարգացման թռիչք կատարեց, և մենք եկանք այն եզրահանգման, որ իրականում «հրաշք» տեղի չի ունեցել, այդ գործընթացն օրինաչափ էր և պայմանավորված էր չինական քաղաքակրթական ներուժով: Այդ առումով պատմական էքսկուրս կատարենք:

Մեր թվարկությունից առաջ Չինաստանի և Հունաստանի բնակչության թիվը գրեթե հավասար էր՝ մոտ 10-12 մլն: Հույների թիվն այսօր գրեթե նույնքան է, մինչդեռ արդի Չինաստանում ապրում է շուրջ 1.5 մլրդ մարդ: Այս ֆենոմենը երբեմն մեկնաբանում են այլ գործոններով, սակայն այն պայմանավորված է չինացիներին բնորոշ հոգևոր-մտավոր և ռազմավարական մտքի բարձր մակարդակով: Այս համատեքստում կարելի է խոսել Սուն Յզիի «Ռազմարվեստի տրակտատի մասին»՝ հիշելով չինական ասացվածքը, թե «ռազմավարությունը դա ապագայի զավթումն է», չինական պոեզիայի մասին: Եվ նկատենք, որ բարդ հիերոգլիֆային գրի պահպանումը իրենք՝ չինացիները, մեկնաբանում են նաև նրանով, որ կարդալով, օրինակ, Լի Բոի կամ Դու Ֆուի պոեզիան հիերոգլիֆներով այսօր, այն ընկալում են այնպես, ինչպես Լի դինաստիայի (մ.թ. 7-10-րդ դարեր) ժամանակակիցները: Նման բարձր մշակույթի արտահայտությունն են մեծ ստրատեգ Ու Տիի խոսքերն այն մասին, որ **«հոգաստարությունը պետության նկատմամբ պետք է արտահայտվի ժողովրդի լուսավորումով և մարդկանց սիրելով»** (նկատեմ, որ «մարդկանց սիրել» արտահայտությանը պետության համատեքստում այդ դարաշրջանում այլ ազգերի աղբյուրներում առնվազն ես երբևէ չեմ հանդիպել): Այս ամենը վկայում է չինական քաղաքակրթությունում «ժամանակային տրիադայի»՝ անցյալի, ներկայի և ապագայի միասնության, փիլիսոփայական ընկալման և կիրառման մասին, որն արտահայտվում է «պատմության մոռացությունը դավաճանությունն է» կամ «ռազմավարությունը դա ապագայի զավթումն է» ձևակերպումներում: Վերադառնալով մեր դարաշրջան՝ նկատենք, որ «ժամանակային տրիադայի» միասնական ընկալումը մեծ բարդություններ է ստեղծում Չինաստանի մրցակիցների համար, և պատահական չէ, որ մի հայտնի քաղաքական գործիչ գանգատվում էր, թե՛ «մեր և չինացիների մոտեցումները ժամանակի հանդեպ միանգամայն այլ են»:

Ինչպես տեսնում ենք, չինական ստրատեգները «Նորավանքի» փորձագետներից մի փոքր ավելի վաղ հանգել էին այն հետևություններ, որ ամենակրիտիկական ոլորտը գիտական – հոգևորն է, և պատահական չէ, որ ռուս ականավոր չինագետ Վլ. Մայլավինն այդ երկիրն անվանում է «Գիտնականների կայսրություն»: Այդ համատեքստում անդրադառնանք որոշ քանակական ցուցիչների:

Ինչպես հայտնի է, Գիտահետազոտական փորձակոնստրուկտորական մշակումների (ԳՓՄ) ոլորտի ծախսերը 2016թ. հավասար էին \$1.9 տրիլիոնի, ինչը կազմում էր համաշխարհային ՀՆԱ-ի (ըստ գնողունակության պարիտետի) 1.74%-ը: Այդ բնագավառում ամենամեծ ծախսերն առայժմ կատարում է ԱՄՆ-ը՝ \$514 մլրդ (համաշխարհային ԳՓՄ ծախսերի 26.4%-ը), երկրորդ տեղում է Չինաստանը՝ \$396 մլրդ (համաշխարհային ԳՓՄ ծախսերի 20.3%-ը): Մինևույն ժամանակ, ԱՄՆ ցուցանիշը 2012թ. կազմել է \$447 մլրդ և 4 տարում աճել է \$67 մլրդ-ով, մինչդեռ ՉԺՀ ծախսերը 2012թ. կազմել են \$232 մլրդ, այսինքն՝ 4 տարում ավելացել են \$164 մլրդ-ով, ինչը 2.4 անգամ ավելի շատ է 4 տարում, քան ԱՄՆ ծախսերը: Այս միտումները վկայում են այն մասին, որ մոտ ապագայում ԳՓՄ ոլորտում ՉԺՀ ներդրումները կգերազանցեն ամերիկյան ցուցանիշները: Ի հաստատումն նշենք, որ արդեն իսկ պատենտների հայտերի քանակով Չինաստանը գերազանցում է ԱՄՆ-ին, իսկ բլոկչեյն տեխնոլոգիաների ոլորտում Մտավոր սեփականության համաշարհային կազմակերպության ստացված հայտերից 56%-ը Չինաստանից է և միայն 22%-ը՝ ԱՄՆ-ից:

Սակայն այս խնդրում առկա է նաև աշխարհաքաղաքական հանգամանք: Եթե դիտարկում ենք պայմանական *Հիերոգլիֆների աշխարհը*՝ Չինաստան, Ճապոնիա, Հարավ. Կորեա, Թայվան, Սինգապուր (հաշվի չի առնված Հյուսիսային Կորեան, որի բավական մեծ ռեսուրսների մասին վկայում են միջուկային-հրթիռային բնագավառում ունեցած հաջողությունները), ապա տեսնում ենք, որ այդ *աշխարհի* ՀՆԱ-ն ըստ գնողունակության կազմում է \$28,4 տրիլիոն,

ԳՓՄ ներդրումները՝ \$678,3 մլրդ, իսկ ԳՓՄ-ի մասը ՀՆԱ-ում կազմում է 2.87%: Մինչդեռ համաշխարհային առաջատար համարվող *Անգլոսաքսոնյան աշխարհի*՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի համապատասխան ցուցանիշներն են՝ ՀՆԱ - \$24.1 տրիլիոն, ԳՓՄ - \$618,7 մլրդ, ԳՓՄ-ի մասը՝ 1.98%: Այսինքն՝ անգլոսաքսերն արդեն իսկ զիջում են Հիերոգլիֆների աշխարհին: Այսպիսով, արձանագրենք, որ գլոբալ աշխարհաքաղաքական կենտրոնը տեղափոխվում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, որտեղ Չինաստանը, չնայած տարածաշրջանային երկրների միջև առկա տարածայնություններին, որոշ սցենարներում կարող է իր շուրջը համախմբել ինչպես տարածաշրջանը, այնպես էլ այլ երկրներ՝ այստեղից բխող հետևություններով: Հիշենք նաև, որ 1978թ., երբ իր ակտիվ գործունեությունն սկսեց Դեն Սյաոպինը, ՉԺՀ ՀՆԱ-ն ընդամենը \$215 մլրդ էր, մինչդեռ այսօր այն կազմում է շուրջ \$12 տրլն, այսինքն՝ աճել է շուրջ 55 անգամ: Դեն Սյաոպինի դերակատարումը տնտեսական ոլորտում, անշուշտ, հսկայական է, սակայն մենք կփորձենք նրա բարեփոխումները մեկնաբանել գաղափարախոսական տեսանկյունից:

Ինչպես գիտենք, նախորդ դարի 70-80-ականներին ղեկավարման միակուսակցական համակարգ ունեցող երկրներում նկատվում էր որոշակի ճգնաժամ: Եվ եթե ԽՍՀՄ-ում ծագած խնդիրների լուծման փորձն ընդունեց գորբաչովյան «պերեստրոյկայի» բնույթ և ավարտվեց շատ ծանր հետևանքներով ու երկրի փլուզմամբ, ապա զարգացումները միանգամայն այլ էին ՉԺՀ-ում: 1977թ. Դեն Սյաոպինի ղեկավարությամբ սկսվեց «Պեկինյան գարունը», որը բերեց պետության ամրապնդման և խոշոր ձեռքբերումների հասարակական-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Ի դեպ, հենց այդ ժամանակաշրջանում Պեկինում բարձր մակարդակով ստեղծվեց մի հանձնաժողով, որն ուսումնասիրում էր խորհրդային փորձը՝ կատարված սխալներից խուսափելու նպատակով:

Հատկանշական է նաև, որ նոր ձևավորված ՌԴ սահմանադրությունում արգելվեց պետական գաղափարախոսություն հասկացությունը և զարկ տրվեց համատարած լիբերալիզմին՝ հաշվի չառնելով, որ «շուկայի տոտալ հաղթանակը ավելի վտանգավոր է, քան մենատիրական սոցիալիստական գաղափարախոսության հաստատումը»: Մինչդեռ, ըստ Դենի, «Չարժե կաշկանդվել գաղափարախոսական և վերացական վեճերով, թե ինչ անուն է տրվում այս ամենին՝ սոցիալիզմ, թե՞ կապիտալիզմ»: Այդպիսով, Դեն Սյաոպինն առաջ էր անցել գաղափարախոսության այն ժամանակաշրջանի պատկերացումներից և, փաստորեն, տվել էր այդ հասկացությունը սահմանող՝ Վյաչեսլավ Յանկոյին պատկանող արդիական բանաձևը, համաձայն որի՝ «գաղափարախոսությունը հրահանգների համալիր է, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմը և փոխկապակցվածությունը»: Այս ալգորիթմը թույլ է տալիս լուծել գրեթե բոլոր հիմնախնդիրները և ենթադրում է բազմագաղափարախոսական համակարգ, որն ամենաարդյունավետն է:

Համարվում է, որ գոյություն ունեն երկու ունիվերսալ գաղափարախոսություններ՝ սոցիալիստական (գլխավոր դրույթը հասարակությունում սոցիալական հավասարության սկզբունքներն են) և ազատական (հենքում ընկած է անձի ազատության գերակայությունը): Դրանք ունիվերսալ են, քանի որ նշված դրույթները կարող են օգտագործվել բոլոր հանրությունների կողմից, անկախ նրանց էթնո-կրոնադավանական պատկանելությունից: Ի տարբերություն նշված երկուսի, ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունները հենվում են կոնկրետ հանրությանը բնորոշ ազգային-քաղաքակրթական արժեքային համակարգի և ավանդույթների վրա:

Ժամանակի ընթացքում գաղափարախոսությունները փոփոխությունների են ենթարկվում: Սակայն փորձությունները սկիզբ

են առնում այն ժամանակ, երբ հանրությունում որևէ գաղափարախոսություն մենաշնորհի և բացարձակ գերակայություն է ձեռք բերում: Որպես կանոն, դա ծանր հետևանքներ է ունենում տվյալ երկրի համար. հիշենք, օրինակ, Խորհրդային Միությունը: Մինչդեռ, այն հանրությունները, որոնք կարողանում են մտածված չափաբաժիններով համատեղ կիրառել ազատական, սոցիալիստական և ազգային-պահպանողական գաղափարախոսությունները, զգալի զարգացում և առաջընթաց են ցուցաբերում: Այս օրինաչափությանը ենթարկվող *«բազմագաղափարախոսական»* համակարգը ստացել է *«գաղափարախոսական տրիադա»* անվանումը, այն մեծացնում է հանրության տարաբնույթ և, առաջին հերթին, հոգևոր ու մտավոր ռեսուրսները, իսկ քաղաքական համակարգը դարձնում է ավելի ճկուն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարաբերություններում: Օրինակ, արդյունավետ *«բազմագաղափարախոսական»* համակարգ է բրիտանական մոդելը, որն այս կամ այն չափով ներդրվել է նաև մնացյալ անգլիախոս երկրներում: Այդ երկրների հանրություններին բնորոշ է գաղափարախոսական լայնախոհություն. կոնսերվատիվ (ազգային-պահպանողական) և լեյբորիստական (սոցիալիստական ուղղվածություն) գաղափարների կրողները մշակել են միմյանց փոխլրացնող մեխանիզմներ և համատեղ գործում են ազատական գաղափարախոսական դաշտում, որը հարազատ է անգլոսաքսոնյան հոգեկերտվածքին: Այս գործոնով է, որ պետք է պայմանավորել Անգլոսաքսոնյան աշխարհի ռազմավարական ձեռքբերումները և այն, որ վերջին մի քանի հարյուր տարում այդ հանրությունը կարողանում է պահպանել առաջատարի կարգավիճակը:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը, փոխառելով բրիտանական քաղաքական տրամաբանությունը, իր պատմական զարգացման յուրահատկության պատճառով անտեսել է սոցիալիստական գաղափարախոսության կարևորությունը: Արդյունքում՝ այդ երկրում ա-

զատականության բացարձակացումը լուրջ խնդիրներ է առաջացրել, և ԱՄՆ-ը սկսել է զիջել համաշխարհային առաջատարի դիրքերը:

Մակայն վերադառնանք Չինաստան: Ընդամենը երեք տասնամյակ առաջ միագաղափարախոսական Չինաստանը բոլոր չափանիշներով հետ էր առաջատար երկրներից: Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ Դեն Սյաոպինը միակուսակցական համակարգում ներդրեց ազատականության և ազգային պահպանողական (կոնֆուցիոնիստական) գաղափարախոսությունների դրույթները: Հատկանշական է, որ այդ ամենին զուգահեռ՝ պահպանվեցին «ղեկավար» սոցիալիստական գաղափարախոսությունից բխող բոլոր առավելությունները: Մակայն անգամ այդ ունիվերսալ ուսմունքում օգտագործվում են մ.թ.ա. V դարի փիլիսոփա և մտածող Մո Ցզիի դրույթները, որը համարվում է չինական սոցիալիզմի հիմնադիրը: Այլ խոսքով՝ սոցիալիզմն ադապտացվեց չինական ավանդույթներին և հոգեկերտվածքին: Արդյունքում՝ Չինաստանը դարձավ գերտերություն և առաջատար ինչպես տնտեսական, ռազմական, այնպես էլ տեխնոլոգիաների ոլորտներում: ՉԺՀ ձեռքբերումները պայմանավորված են նաև նրանով, որ վարչաքաղաքական համակարգում գործում են *մերիտոկրատիայի* (արժանապատիվների իշխանության) սկզբունքները, համաձայն որոնց՝ ղեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեն առավել ընդունակ և պատրաստված անձինք:

ՌՈՒԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ նախկին
փոխարտգործնախարար*



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. ԶԻՆԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ-չինական տարբեր մակարդակի հանդիպումներն առանձնահատուկ կարևորություն ունեն ինչպես քաղաքական և աշխարհաքաղաքական, այնպես էլ երկու երկրների տնտեսական փոխշահավետ համագործակցության զարգացման տեսանկյունից:

Այս համատեքստում արժե ընդգծել Հայաստանում տնտեսական դիվանագիտության համակարգի կայացման կարևորությունը՝ համեմատականներ անցկացնելով Զինաստանի կողմից այս ուղղությամբ իրականացված գործունեության և Հայաստանի արդի խնդիրների միջև:

Վերջին ժամանակաշրջանում մենք բոլորս ականատես ենք լինում համաշխարհային մի շարք զարգացումների, որոնք կարևորագույն ազդեցություն են թողնում ազգային տնտեսությունների վրա: Առաջին հերթին դա վերաբերում է գլոբալիզացիային և վերջինիս հետ կապված մի շարք խնդիրների: Տվյալ դեպքում նկա-

տի ունենք նոր գլոբալ տնտեսական համակարգի ձևավորումը, որը ենթադրում է ազգային տնտեսությունների ինտեգրման և փոխկապակցման նոր մակարդակ: Ակնհայտ է, որ համաշխարհային տնտեսական համակարգում կարելի է առանձնացնել առաջատար երկրները, որոնք ձևավորում են այդ համակարգը, և մնացածը, որոնք փորձում են գտնել իրենց դերը և ինչ-որ առումով պաշտպանել ազգային տնտեսությունները՝ դառնալով վերոնշյալ համակարգի արժեշոթայի կարևոր անբաժանելի օղակ:

Սակայն, իրավիճակն ավելի է բարդանում, եթե հաշվի առնենք գիտատեխնիկական զարգացման արդի տեմպերը, որոնք մեծացնում են համաշխարհային տնտեսական համակարգի ավանգարդ համարվող և մնացած երկրների տնտեսական բարեկեցության մակարդակների միջև տարբերությունը: Այս պարագայում զարգացող երկրներից շատերը փորձում են հասցնել առաջատարների հետևից, սակայն հաճախ ավելի են հետ մնում, քանի որ չեն գտնում ժամանակ և անհրաժեշտ միջոցներ՝ սեփական տնտեսության վերագինման և բարեփոխման համար:

Վերոնշյալ իրավիճակից դուրս գալու համար տնտեսագիտական համայնքը որպես լավագույն տարբերակ համարում է այսպես կոչված առաջանցիկ կամ թռիչքաձև տնտեսական զարգացման մոդելի կիրառումը: Դրա իմաստն այն է, որ ոչ թե փորձել հասնել առաջատարներին, այլ կանխատեսել համաշխարհային տնտեսության զարգացման հետագիծը և գտնել ճանապարհ՝ թռիչք կատարելու ցանկալի կետին: Դրա համար անհրաժեշտ են մի շարք պայմաններ: Մասնավորապես, պետք է հստակ պատկերացումներ ունենալ համաշխարհային տնտեսության արդի զարգացումների և միտումների, առկա խնդիրների, վերջինիս համեմատ ազգային տնտեսության ուժեղ և թույլ կողմերի մասին: Այս ամենը հնարավորություն կտա ազգային կառավարությանը նախագծել այն ռազմավարությունը, որը կապահովի առաջանցիկ զարգացման մոդելի կիրառումը:

Վերոնշյալ գործընթացի կազմակերպման տեսանկյունից կարևոր նշանակություն է ստանում արտաքին տնտեսական քաղաքականության համակարգի բարեփոխումը: Եթե դիտարկենք ազգային տնտեսությունը որպես գլոբալ տնտեսական համակարգի մաս, ապա արտաքին տնտեսական քաղաքականությունը և գործունեությունն աջակցում են գլոբալ համակարգում երկրի դիրքավորմանը:

Արտաքին տնտեսական քաղաքականությունը մշտապես պետք է հաշվի առնի օրեցօր փոփոխվող զարգացումները՝ ադապտացվելու և ձևափոխվելու նպատակով, ինչը հնարավորություն կտա ապահովել երկրի ռազմավարական նպատակները: Այս տեսանկյունից տնտեսական բաղադրիչը պետք է դառնա երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից: Այլ կերպ ասած, արդի զարգացման փուլում արտաքին քաղաքականությունը պետք է հիմնականում ուշադրությունը սևեռի տնտեսական խնդիրների կարգավորմանը, որը կապահովի պետության կայուն զարգացումը և անվտանգությունը: Տվյալ քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմ է համարվում տնտեսական դիվանագիտության ինստիտուտը:

Տնտեսական դիվանագիտության ինստիտուտն ընդհանուր առմամբ կոչված է լուծելու հետևյալ խնդիրները.

- ապահովել երկրի իշխանություններին համաշխարհային տնտեսությունում, տարբեր երկրներում առկա իրավիճակի, այլ պետությունների արտաքին տնտեսական քաղաքականության, միջազգային տնտեսական կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության, պետությունների շահերի և այլնի մասին արդիական, արդյունավետ տեղեկատվությամբ,
- ձևավորել գլոբալ տնտեսության համակարգում ազգային տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմաններ և հնարավորություններ,

- դիվանագիտական և այլ խողովակների աջակցությամբ օժանդակել միջազգային իրավական այնպիսի հենքերի ձևավորմանը, որոնք հնարավորություն կտան ապահովել կառավարության արտաքին տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացումը,
- աջակցել և պաշտպանել ազգային բիզնեսի շահերն արտերկրում, իրականացնել համապատասխան աշխատանքներ օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով, աջակցել արտահանմանը և նոր շուկաների ձևավորմանը,
- անհրաժեշտության դեպքում համագործակցել արտաքին ֆինանսական կառույցների հետ՝ երկրի զարգացման համար ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում տնտեսական դիվանագիտության կարևորության մասին առաջին անգամ խոսվել է դեռևս քառասուն տարի առաջ, երբ սկսվեց տնտեսական բարեփոխումների իրականացումը, որի արդյունքում այսօր մենք տեսնում ենք կայուն զարգացող, համաշխարհային տնտեսական համակարգում առաջատար դիրք գրաված երկիր:

Ժոու Յունշենը, որն, ի թիվս այլ հանրահայտ չինացի տնտեսագետների, նույնպես մեծ նշանակություն էր տալիս տնտեսական դիվանագիտությանը, սահմանում է, որ վերջինս, գտնվելով դիվանագիտության և տնտեսագիտության խաչմերուկում, ներկայացնում է այնպիսի գործունեություն, որի շրջանակներում դիվանագիտական մեթոդներով և միջոցներով ապահովվում է տնտեսական նպատակների իրականացումը, իսկ տնտեսական մեթոդներով և միջոցներով՝ քաղաքական նպատակների իրականացումը:

Անշուշտ, Չինաստանի տնտեսական դիվանագիտության գաղափարախոսության հիմքում ընկած են Դեն Սյաոպինի գաղափարները, որը գտնում էր, որ այն ժամանակվա Չինաստանի զարգացումը գործընթաց է, որը պետք է ընթանա ամբողջ աշխարհի

զարգացմանը զուգընթաց: Դրա համար անհրաժեշտ է ապահովել ներքին կայունություն և միջազգային համերաշխություն: Այս տեսանկյունից կարելի է ընդգծել Դեն Սյաոպինի հետևյալ գաղափարները. Անհրաժեշտ է.

- ուսումնասիրել այլ երկրների առաջատար և դրական փորձը՝ տնտեսական, գիտատեխնիկական, բարձրտեխնոլոգիական ոլորտի զարգացումների, արտադրության կազմակերպման տեսանկյունից, ձեռք բերել նորագույն տեխնոլոգիաներ, հրավիրել օտարերկրյա մասնագետների Չինաստանում աշխատելու նպատակով,
- փոխադարձ հարգանքի և վստահության հիման վրա զարգացնել տնտեսական փոխգործակցությունն այլ երկրների հետ,
- ներգրավել օտարերկրյա կապիտալ,
- զարգացնել արտաքին առևտուրը, գրավել նոր շուկաներ, բարձրացնել չինական արտադրանքի որակը,
- զարգացնել սեփական բարձր տեխնոլոգիաները:

Հարկ է նշել, որ իր զարգացման պատմության մեջ Չինաստանն անցել է տնտեսական դիվանագիտության կայացման գրեթե բոլոր փուլերով՝ աստիճանաբար ձևավորելով և ժամանակին ձևափոխելով տնտեսական դիվանագիտության ոլորտում ներգրավված կառույցների ռազմավարությունները և գործունեությունը: Այս ոլորտում առաջատար դեր ունեն Չինաստանի Արտաքին գործերի և Առևտրի նախարարությունները: Արտաքին գործերի նախարարությունը համակարգում է ընդհանուր արտաքին քաղաքականության իրականացումը և որպես դրա բաղադրիչ՝ արտաքին տնտեսական քաղաքականությունը, իսկ Առևտրի նախարարությունն ապահովում է այն անհրաժեշտ գործիքակազմը, որը հնարավորություն է տալիս արդյունավետ իրականացնել տնտեսական դիվանագիտության առջև դրված խնդիրները: Ակնհայտ է, որ տվյալ բնագավառում կարևոր դերակատարում է հատկացվում նաև տնտեսվարող սու-

բյեկտներին, որոնք հանդիսանում են տնտեսական դիվանագիտության հիմնական շահառուները: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ Չինաստանում ձևավորված են պետական և մասնավոր հատվածների համագործակցության մի շարք հարթակներ, որտեղ կողմերը հնարավորություն են ստանում փոխանակել տեղեկատվություն և միմյանց իրազեկել առկա խնդիրների մասին:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական դիվանագիտության՝ որպես առանձին ինստիտուտի, ձևավորման կարևորության մասին առաջին անգամ խոսվեց երկու տարի առաջ: Դա ամեննկին չի նշանակում, թե մինչ այդ Հայաստանը չէր իրականացնում արտաքին տնտեսական քաղաքականություն, սակայն ամբողջական չէին դրա ինստիտուցիոնալ և իրավական կարգավորման հիմքերը: Մասնավորապես, հստակ ձևակերպման կարիք ունեին դիվանագիտական ներկայացուցչությունների առջև տնտեսական բաղադրիչի մասով դրված խնդիրները, ակնկալվող գործառույթները և արդյունքները: Առաջին անգամ փորձ արվեց կանոնակարգել արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները, սահմանվեցին դիվանագիտական ներկայացուցչությունների կատարողականի գնահատման համակարգը, թիրախային երկրները և այլն: Մշակվեցին 2018 թվականի համար նախատեսվող արդյունքներն ըստ երկրների և ըստ գործառույթների, այն է՝ ներդրումների ներգրավումը, արտահանման զարգացումը և զբոսաշրջության խթանումը:

Փորձեմ ընդհանուր առմամբ ներկայացնել իմ մոտեցումներն այս հարցերի շուրջ:

Տնտեսական դիվանագիտությունը սահմանվում է որպես գործընթաց, որի միջոցով երկրներն ազդում են արտաքին աշխարհի վրա՝ գրեթե բոլոր, այդ թվում՝ առևտրի, ներդրումների և երկրի մրցակցային առավելություն հանդիսացող այլ տնտեսական փոխգործակցության ոլորտներում՝ ազգային շահն առավելագույնի հասցնելու համար: Ընդ որում, այդ գործընթացը տեղի է ունենում

ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հավասարապես կարևոր ձևաչափերի ներքո:

Տնտեսական դիվանագիտությունը ենթադրում է դիվանագիտական մեխանիզմների կիրառմամբ բիզնես գործունեությանն այնպիսի աջակցություն, որի արդյունքում ապահովվում են երկրի տնտեսական կայունությունը, բարեկեցությունը և ազգի համեմատական մրցունակությունը:

Բիզնես գործունեության աջակցության կարևոր ուղղություններից է տարբեր միջազգային կառույցներում, բազմակողմ ձևաչափով գործող միավորումներում ազգային տնտեսական օրակարգի առաջնդման գործընթացը:

Ինչպես արդեն նշեցինք, տնտեսական զարգացման ներկայիս մակարդակը ենթադրում է երկրների բավական խոր ինտեգրման գործընթաց, որը տեղի է ունենում ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային ինտեգրացիոն ձևաչափերով: Հայաստանը 2003 թվականից անդամակցում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, որի նպատակն է սահմանել միջազգային ազատ առևտրի պայմաններ անդամ երկրների համար: Չինաստանը անդամակցել է ԱՀԿ-ին 2001 թվականին՝ տասնհինգ տարվա երկարատև բանակցություններից հետո: Հարկ է նշել, որ ազատ առևտրի առկայությունն ըստ արդի տնտեսագիտական կարծիքի՝ դրական ազդեցություն ունի զարգացած երկրների համար, որոնք հասել են տնտեսական արդյունավետության բարձր մակարդակի, տեխնոլոգիապես առաջ են այլ երկրներից, և կարող է բացասական լինել զարգացող երկրների համար, որոնք չունեն բավարար հնարավորություններ սեփական տնտեսության արդիականացման համար ու հավակնում են դառնալ զուտ նյութական ռեսուրսների մատակարար: Այդ տեսանկյունից առավել դժվար վիճակում կարող են հայտնվել այն երկրները, որոնք չունեն նույնիսկ օգտակար հանածոների նյութական բազա:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այլ միջազգային կառույցների գործունեությունը, որոնք այս կամ այն կերպ կարգավորում են միջազգային տնտեսական հարաբերությունները, սահմանում են միջազգային առևտրի, ներդրումների, էներգետիկ ոլորտի և այլ տնտեսական փոխհարաբերությունների կանոնները, տնտեսական դիվանագիտության գործառույթներից կարևոր նշանակություն է ստանում այդ կառույցների հետ համագործակցության շրջանակներում երկրի համար նպաստավոր պայմանների ձևավորումը:

Գաղտնիք չէ, որ ազատ առևտրի պայմաններում նույնիսկ առաջատար երկրներն են փորձում պաշտպանել իրենց տնտեսությունները ոչ տարիֆային կարգավորումներով և սահմանափակումներով: Դրա լայն շրջանառվող գործիքներից են արտադրանքի որակի նկատմամբ պահանջների խստացումը, տեխնիկական պահանջների մակարդակի բարձրացումը: Տնտեսական դիվանագիտության պատասխանատուների առջև կանգնած են նաև նման խնդիրների կարգավորման հարցերը, որպեսզի ազգային արտադրողները հնարավորինս հեշտ հաղթահարեն շուկա մուտք գործելու գործընթացը:

Բազմակողմ ձևաչափով համագործակցության օրինակ է նաև Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին, ինչը ենթադրում է ապրանքների, կապիտալի, ծառայությունների և աշխատուժի ազատ տեղաշարժման ընդհանուր կանոնների սահմանում:

Սակայն ներկայում առավել կարևորվում է տնտեսական դիվանագիտության այսպես կոչված միկրոմակարդակը, որը ենթադրում է երկկողմ ձևաչափում ազգային ընկերություններին անհրաժեշտ աջակցության տրամադրում:

Այդ տեսանկյունից, տնտեսական դիվանագիտության անհրաժեշտությունը բացատրվում է այսպես կոչված «չերևացող շուկաների» փաստարկով: Վերջինս ենթադրում է, որ շուկաների իմացության գործառույթը պատվիրակվում է համապատասխան

պաշտոնյաներին, քանի որ որոշ տեղեկատվություն կամ գիտելիքներ հնարավոր չէ ստանալ տեսանելի շուկայից: Դրանք ներառում են յուրահատուկ, վստահելի և անաչառ տեղեկություններ, որոնք ձեռք են բերվում միայն պետական և դիվանագիտական խողովակներով՝ շուկաներում կառավարության երկարաժամկետ ներկայության և ոչ առևտրային գործողությունների արդյունքում:

Հարկ է նշել, սակայն, որ ընկերությունները, որոնք գործում են կամ ցանկանում են մտնել միջազգային շուկաներ, հայտնվում են մի շարք սահմանափակումների և խոչընդոտների առջև ոչ միայն դրանց կարգավորման դաշտի բարդ լինելու պատճառով, այլև հանդիպելով աստիճանաբար մեծացող տնտեսական մրցակցությանը: Օտար շուկաների պայմանները հաճախ տարբեր են լինում ինչպես միմյանցից, այնպես էլ տեղական շուկայի պայմաններից: Կարելի է առնվազն նշել մշակութային, տեխնոլոգիական, քաղաքական, իրավական, բնապահպանական և այլ տարբերություններ, որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ ընկերությունների գործունեության վրա: Տվյալ խնդիրների հաղթահարմանն է ուղղված նաև տնտեսական դիվանագիտությունը:

Տնտեսական դիվանագիտությունը նպատակ ունի լավագույնս ներկայացնել ազգային արտադրությունն արտերկրում, պատրաստել համապատասխան հիմք բիզնես գործարքների համար, ինչպես նաև իրազեկել երկրի մրցակցային առավելությունների և գործարար հնարավորությունների մասին՝ օգտագործելով դիվանագիտական խողովակները:

Ինչպես նաև մենք պատկերացնում ՀՀ տնտեսական դիվանագիտության համակարգի գործունեությունը:

Տնտեսական շահերից ելնելով և մրցակցային առավելությունները գնահատելով՝ կառավարությունը սահմանում է ոլորտային առաջնահերթությունները, որոնք արտացոլվում են ոլորտային զարգացման ռազմավարություններում, նշում է թիրախները և ժամկետները: Վերջիններս պետք է հիմք հանդիսանան այսպես կոչված

շուկայի հնարավորությունների ուսումնասիրման և գնահատման համար: Ներքին շուկայի գնահատականը՝ արտադրական, արտահանման, աշխատուժի, ուժեղ և թույլ կողմերի տեսանկյունից, պետք է իրականացվի համապատասխան նախարարությունների և կառույցների կողմից, ներառյալ ՀՀ ԱԳՆ-ն՝ իր իրավասությունների սահմաններում: Դեսպանությունների առջև պետք է դրվեն արտաքին շուկայի հնարավորությունների ուսումնասիրման և գնահատման խնդիրները: Մասնավորապես, դիվանագիտական ներկայացուցչությունները դեսպանընկալ երկրի վերաբերյալ գիտելիքների ձևավորման միջոցով պետք է գնահատեն և ներկայացնեն հայկական ընկերությունների համար առկա հնարավորությունները: Իրականացված ուսումնասիրությունների հիման վրա պետք է մշակվեն արտահանման և/կամ ներդրումային ծրագրեր/գաղափարներ, որոնց առաջնդման համար պետք է որոշվեն առանձնահատուկ գործիքներ: Ներդրումային ծրագրի գործիքները կարող են ներառել գովազդային արշավ, հնարավորությունների ներկայացում, երկկողմ և բազմակողմ ձևաչափով աշխատանքներ, միջկառավարական հանձնաժողովների հարթակի օգտագործում, կապերի հաստատում և այլն: Արտահանման տեսանկյունից աշխատանքները կարող են ներառել նաև առևտրային առաքելությունների կազմակերպում: Նախանշված աշխատանքների իրականացման համար պետք է մշակվի մարտավարություն՝ դեսպանությունների ներգրավվածությամբ:

Իրականացված աշխատանքների արդյունքների գնահատումն արժեզրթայի կարևոր մասն է: Այն պետք է հիմնված լինի դեսպանություններից ստացվող հետադարձ կապի, հետազոտությունների և հատուկ չափորոշիչների գնահատման վրա: Արդյունքների գնահատումը կարևորվում է սահմանված ռազմավարություններում համապատասխան փոփոխությունների իրականացման տեսանկյունից, որոնք կարող են հանգեցնել նույնիսկ ոլորտային առաջնահերթությունների և թիրախների փոփոխությանը, ինչն իր

հերթին կհանգեցնի համապատասխան փոփոխությունների տնտեսական դիվանագիտության արժեզրթայի ամբողջ երկայնքով:

Վերոնշյալ համակարգի տեսանկյունից ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից պետք է իրականացվեն հետևյալ գործառնությունները, որոնք, ի դեպ, չեն սահմանափակում այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացումը.

- դեսպանընկալ երկրի տնտեսական քաղաքականության դիտարկում և համապատասխան առաջարկությունների ներկայացում մայրաքաղաքին,
- շուկա մուտք գործելու իրական հնարավորությունների, գործընթացների և հնարավոր խոչընդոտների ներկայացում,
- արտահանման վրա հնարավոր ազդեցություն ունեցող կարգավորման դաշտի փոփոխությունների ուսումնասիրում և ներկայացում, դրանց իրական նպատակի ներկայացում,
- հայկական արտադրության արտահանման հնարավորության գնահատման իրականացում,
- խորացված գիտելիքներ ներմուծողների/դիստրիբյուտորների և հնարավոր գնորդների վերաբերյալ,
- տվյալ երկրի արդյունաբերական ընկերությունների կողմից պահանջարկի, առկա արժեզրթայի մեջ ներգրավվելու հնարավորությունների ուսումնասիրում և գնահատում,
- ներդրումների ներգրավման տեսանկյունից հնարավոր գործընկեր ընկերությունների գործունեության մշտադիտարկում,
- տվյալ երկրում գործող հնարավոր ներդրողների ցանկի պատրաստում, կապերի ձևավորում,
- հայ գործարարների համար գործընկերոջ որոնում և համագործակցության ուղղորդում,
- բանակցությունների նախապատրաստում, կազմակերպում, անհրաժեշտության դեպքում՝ մասնակցություն բանակցային գործընթացին,

- տեխնիկական աջակցություն, օրինակ՝ իրավական խորհրդատվություն, հարկային հարցեր, կապեր բանկերի հետ և այլն,
- աջակցություն հայկական ընկերությունների այցերի կազմակերպմանը՝ մասնագիտացված ցուցահանդեսներին, համաժողովներին մասնակցելու նպատակով,
- առաջացող խնդիրների շտկմանը և հայկական ընկերություն-օտարերկրյա պետություն հարաբերությունների կարգավորմանն ուղղված աջակցություն՝ հաճախ ուղղակի ներգրավվելով տվյալ գործընթացում: Խնդիրները հիմնականում առաջանում են մտավոր սեփականության պաշտպանության, հարկային հարցերի, ինչպես նաև տվյալ երկրի կողմից իր ընկերությունների համար ոչ մրցակցային առավելությունների ապահովման շուրջ (տվյալ հարցերից շատերը դեսպան-ընկալ երկրի կառավարության հետ քննարկվում են պարբերաբար տեղի ունեցող երկկողմ խորհրդակցությունների շրջանակներում: Կարևոր է դիվանագետի դերակատարումը ծագած վեճի բարիդրացիական կարգավորման համար՝ խուսափելով իրավական դաշտում երկարատև քաջջուկներից),
- երկրի գովազդում, դրական իմիջի ձևավորում պետական մակարդակում, ինչպես նաև խոշոր ընկերությունների շրջանում՝ երկրի նկատմամբ վստահության բարձրացման և ներդրումների ներգրավման նպատակով,
- ներդրումային հնարավորությունների ներկայացում հնարավոր գործընկերներին:

Ակնհայտ է, որ դիվանագետի անձնական ունակությունները և գործելաոճը կարևոր են իր կողմից տնտեսական դիվանագիտության ոլորտում իրականացվող աշխատանքների որակի համար: Ակնհայտ է նաև, որ մասնավոր ընկերություններն ավելի հետաքրքրված են տեսնելու դիվանագետի, որը զբաղվում է ոչ միայն

քաղաքական հարցերով, այլև գործարարներին վերաբերող խնդիրներով: Սա նշանակում է գործարար մտածելակերպ և գործնական աշխատանք, ավելի փորձառու աշխատակազմ և ձեռնարկատիրական տեսանկյունից ավելի պրոակտիվ, նախաձեռնող տնտեսական դիվանագիտության իրականացում: Գործարար աշխարհին ակնկալում է դիվանագետներից առավել ակտիվ ներգրավվածություն համայնքի շահերի պաշտպանության և գործարքների կնքմանն աջակցության գործում:

Ցավոք, ներկայում Հայաստանի Հանրապետությունը չի տիրապետում անհրաժեշտ հնարավորությունների՝ տնտեսական դիվանագիտության ամբողջական համակարգ ներդնելու համար: Սակայն ես հեռու եմ այն մտքից, որ պրոակտիվ գործելակերպի որդեգրման պարագայում մեր դիվանագիտական ներկայացուցչությունները չեն կարողանա իրականացնել առնվազն անհրաժեշտ քանակի գործառույթներ, որոնք կաջակցեն տնտեսական առաջանցիկ աճի ապահովմանը:



ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Արևելագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՉԺՀ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԼՈՒԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՋՍՈՒՄ**

Անհավանական տնտեսական վերելքի շնորհիվ Չինաստանը XXI դարում ոչ միայն դարձավ նշանակալի դերակատար համաշխարհային ասպարեզում, այլև երկիր, որը կարող է նյութապես ապահովել մասշտաբային արտաքին քաղաքական նախաձեռնություններ: Ընդհանուր առմամբ, շարունակելով հետևել այն դրույթին, որ հարկավոր է «թաքնվել ստվերում» (*թաղգուան յանհուեյ*), չինացի քաղաքական գործիչների ներկայիս սերունդը որդեգրեց միջազգային գործերում ավելի ակտիվ դեր ունենալու գիծ: Մասնավորապես, «փափուկ ուժը» սկսեց դիտարկվել որպես համալիր ազգային հզորության (*ձունհե գուի*) պարտադիր բաղադրիչներից մեկը, իսկ արդյունավետ դիվանագիտության զարգացումը՝ որպես քաղաքականության գերակա ուղղություն:

Չինաստանի ղեկավարությունն առաջ քաշեց Չինաստանի «խաղաղ զարգացման» (*հեյիին ֆաչժան*) հայեցակարգը: Ձևա-

կերպվեց նաև «ներդաշնակ աշխարհի» (*հետև շիճէ*) տեսությունը, որի հիմնական գաղափարներն են՝ հարցերի լուծում խաղաղ գոյակցության, մեկ երկրի հեգեմոնիային դիմակայության սկզբունքների հիման վրա, ՄԱԿ դերի բարձրացումը և դրանով իսկ՝ նոր աշխարհակարգի ստեղծումը: Հանրագումարելով այս հայեցակարգերը՝ կարելի է առանձնացնել Չինաստանի քաղաքականության հիմնական ուղղությունները դրանց շրջանակներում. բազմաբևեռություն, փոխշահավետ տնտեսական և քաղաքական համագործակցություն, հավաքական անվտանգության արդյունավետ համակարգի զարգացում և տարբեր մշակույթների երկխոսության հաստատում¹:

Որպես ՉԺՀ արդի դիվանագիտության տարբերակիչ գիծ կարելի է անվանել դրա ռեակտիվ բնույթը. այն ուղղված է, առաջին հերթին, «չինական սպառնալիքի» մասին առասպելը ցրելուն և պատասխանատու համաաշխարհային տերության իմիջի ստեղծմանը: Չինաստանը չի ձգտել անվերապահորեն պարտադրել իր տեսակետն այլ երկրների, առավել ևս՝ միջամտել նրանց ներքին գործերին հանուն իր արտաքին քաղաքական նպատակներին հասնելու: Այս առնչությամբ հարկ է հիշատակել, որ հետխորհրդային երկրների վերին շրջանակներում հատուկ համակրանք է առաջացնում այն, որ Չինաստանը, ի տարբերություն արևմտյան վարկատուների մեծ մասի, իր օգնության դիմաց «դասախոսություններ չի կարդում ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին...»²: Նրա միակ պայմանը «մեկ Չինաստանի» սկզբունքի ընդունումն է³: Այսպիսով, Չինաստանի դիվանագիտությունը

¹ *Кривохиж С.В.*, Публичная дипломатия Китайской Народной Республики: становление и развитие (պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցորդի ատենախոսություն, մասնագիտությունը՝ 07.00.15), История международных отношений и внешней политики. Санкт-Петербург, 2014, с. 85-86.

² *Kurlantzick, J.* Charm Offensive. How China's Soft Power is Transforming the World / J. Kurlantzick, Yale University Press, 2008, p. 136.

³ Принцип одного Китая и тайваньский вопрос // Китайский информационный интернет-центр. URL: <http://russian.china.org.cn/russian/32178.htm> (դիտվել է՝ 4.10.2018).

կոչված է ցույց տալու, որ եկել է գլոբալ մտածելու և մշակույթների երկխոսությունը որպես համատեղ ներդաշնակ զարգացման միակ հնարավոր ուղի գնահատելու ժամանակը: Միևնույն ժամանակ, կարևոր խնդիր է Չինաստանի ցանկությունը՝ փոխել այսպես կոչված «սառը պատերազմի մենթալիտետը», որը ենթադրում է աշխարհի բաժանում հակամարտող ճամբարների, և երկրների միջև հարաբերություններ կառուցել փոխշահավետ համագործակցության ոգով:

«Բարեփոխումների և բաց քաղաքականության» շրջանի կուտակված փորձը թույլ տվեց պաշտոնական Պեկինին անել կարևոր եզրահանգում, որ տնտեսական ներթափանցումն ավելի կարևոր է անմիջական քաղաքական վերահսկողությունը: Չինական ռազմավարության հնագույն սկզբունքն է՝ «հաղթել չպատերազմելով», գործել ճկուն, ճիշտ չափորոշել և ուղղորդել ազդեցությունը դեպի տարբեր տարածաշրջանների և երկրների կարևոր կետեր: Այս ռազմավարության իրականացման մեթոդը «ու վեյ» հնագույն ուսմունքն է: Դրա բովանդակությունը ոչ թե թելադրանքն է, այլ համագործակցությունը: Իր վիթխարի տնտեսական բարեփոխումների հաջող իրականացման համար այս մեծ արևելյան երկիրը կարիք ունի երկարատև ու ամուր աշխարհակարգի՝ հիմնված հարաբերությունների կայունության վրա: Չինաստանի նման խաղաղ և կառուցողական դիրքորոշումը, հասկանալի է, թույլ կտա նրան ձեռք բերել բարեկամներ ինչպես այժմ, այնպես էլ պահպանել նրանց ապագայում:

Եվրասիական տարածքն, ամենայն հավանականությամբ, այսօր գտնվում է բոլորովին նոր աշխարհաքաղաքակրթական և աշխարհատնտեսական մոդելների ձևավորման գործընթացում, ինչն, անշուշտ, պահանջում է միանգամայն այլ աշխարհաքաղաքական պարագծեր և փոխգործակցության սկզբունքներ: Չինաստանի հարաբերությունները Հարավկովկասյան երկրների, այդ թվում և Վրաստանի հետ, հարյուրամյակներ շարունակ կրել են բացառապես միջնորդավորված բնույթ և արտահայտվել են

խիստ դրվագային առևտրատնտեսական ու մշակութային կապերով: Իսկ Չինաստանի աշխարհաքաղաքական շահերի ոլորտ տարածաշրջանը նախկինում երբեք չի մտել: Բայց ասել, թե հիմա այն արդեն դարձել է ՉԺՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը՝ նույնպես այնքան էլ ճիշտ չէր լինի: Այնուամենայնիվ, վրաց-չինական շփումների սրընթաց աճը ստիպում է դրանք դիտարկել ամենաուշադիր ձևով:

Չինաստանն այն պետությունների թվում էր, որոնք առաջինն ընդունեցին Վրաստանի անկախությունը և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին: ՉԺՀ-ի և Վրաստանի միջև դրանք պաշտոնապես հաստատվել են 1992թ. հունիսին՝ համապատասխան արձանագրության ստորագրմամբ: Հաջորդ բոլոր տարիներին այս երկու երկրների քաղաքական կապերը կայուն զարգացել են: Երկու պետություններն էլ ՄԱԿ և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում փորձում են հնարավորինս սերտ կապեր հաստատել և փոխադարձ խորհրդատվություններ անցկացնել: Վրաստանն, անշուշտ, պաշտպանում է «մեկ Չինաստանի» քաղաքականությունը և Չինաստանի դիրքորոշումը Թայվանի, Տիբեթի, Սինցյանի հարցերում⁴: Իսկ Չինաստանում, իրենց հերթին, հանդես են գալիս Վրաստանի ամբողջականության օգտին, Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ հարաբերությունները համարում են նրա ներքին գործը⁵: Չինաստանի և Վրաստանի միջև հարաբերություններին նվիրված իր հրապարակման մեջ ՉԺՀ ԱԳՆ ղեկավար Յան Չեչին հատուկ ընդգծել է, որ չինական կողմը մտադիր է հետագայում ևս մշտական ջանքեր գործադրել Պեկինի և Թբիլիսիի միջև կայուն համագործակցության զարգաց-

⁴ Грузия подтвердила позицию противодействия “независимости Тайваня” // Информационное агентство «Синьхуа».

URL: <http://kz.chineseembassy.org/rus/ztbd/zgtw/t246114.htm> (նիսվել է՝ 4.09.2018).

⁵ Ван Цзиньго, Ван Чжицзунь, ГУАМ и КНР // Центральная Азия и Кавказ (հատուկ թողարկում), 2008. № 3-4, с. 208.

ման համար⁶: Վրաց-չինական հիրավի անամպ քաղաքական հարաբերությունների ֆոնին 1999թ. Թբիլիսիում ստեղծվեց Չին-վրացական առևտրատնտեսական հանձնաժողով: 2005թ. կողմերն արդեն արձանագրեցին փոխադարձ շփումների բավական բարձր մակարդակ, ինչն արտահայտվեց երկակի հարկման չեղարկման մասին համաձայնագրի ստորագրմամբ: Աստիճանաբար, բայց և վստահորեն սկսեց մեծանալ երկկողմանի ապրանքաշրջանառությունը: 2010թ. երկու կողմերը ստորագրեցին միջկառավարական համաձայնագիր տեխնիկատնտեսական համագործակցության մասին⁷:

Չինացի և վրացի գործարարները և ձեռներեցները կանոնավորապես համատեղ առևտրային համաժողովներ են անցկացնում, որոնցում քննարկվում են երկու երկրների միջև գործնական համագործակցության հեռանկարները: 2013թ. ապրիլին Թբիլիսիում տեղի ունեցավ վրաց-չինական բիզնես-համաժողով, որին մասնակցեց չինական ընկերությունների մոտ 40 ներկայացուցիչ: Նրանք ծանոթացան Վրաստանում առկա ներդրումային միջավայրին և բիզնեսի վարման հնարավորություններին: Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի առևտրային պալատը, Բիզնեսի աջակցության միջազգային միությունը և Չինաստանի միջազգային առևտրի աջակցության խորհուրդը: Համաժողովում նշվեց, որ չինական ընկերությունների համար Վրաստանում ստեղծվել է նպաստավոր միջավայր գործարարության զարգացման համար, ինչը կարևոր պայման է երկրում ներդրումներ կատարելու համար⁸: Չինական

⁶Традиционная дружба между Китаем и Грузией укрепляется - 15-я годовщина установления дипломатических отношений между странами.

URL: <http://russian.people.com.cn/31521/5840911.html> (ղիտվել է՝ 4.06.2015).

⁷ *Маилян Б.В.*, Основные тенденции внешнеполитического курса Грузии и некоторые аспекты ее сотрудничества с Китайской Народной Республикой // Вестник Российского университета дружбы народов. Серия «Международные отношения», 2016, № 2, с. 129-140.

⁸ В Тбилиси состоится грузино-китайский бизнес форум // Информационный портал «Грузия Online». URL: <http://www.apsny.ge/2013/eco/1366737911.php> (ղիտվել է՝ 24.06.2018).

կողմը կիսեց իր փորձը և պատրաստակամություն հայտնեց մասնակցել Վրաստանում Ջարգացման բանկի ստեղծմանը, ինչպես նաև ֆինանսապես աջակցել նրա տնտեսական զարգացման հիմնական ուղղություններին, խոշոր նախագծերին, որոնք կիրականացնի այդ բանկը: Չինաստանի Ջարգացման բանկի ղեկավարությունը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց Վրաստանում ենթակառուցվածքային նախագծերի⁹, մասնավորապես՝ «թբիլիսյան ծովի» մոտակա տարածքում 420 հա մակերեսով օլիմպիական քաղաքի շինարարության հանդեպ՝ 2015թ. Երիտասարդական օլիմպիական փառատոնի համար. շինարարությունը պետք է իրականացնե՞ր չինական ներդրումային «Հաուլինգ գրուփ» ընկերությունը: Նախագիծը նպատակ ուներ նպաստելու քաղաքի այդ հատվածի քաղաքաշինական աճին և տնտեսական զարգացմանը: Փախստականների հարցերով նախարարությունը չինական արդյունաբերա-առևտրային «Հաուլինգ գրուփ» ընկերության հետ կնքեց պայմանագիր երեք բնակելի շենք գնելու մասին՝ Վրաստանի կոնֆլիկտային գոտիներից փախստականների 200 ընտանիքի բնակեցնելու համար: Առաջին փուլի արժեքը կազմում էր մոտ 130 մլն լարի¹⁰: «Հաուլինգ գրուփը» 2006 թվականից ակտիվ գործունեություն է իրականացնում Վրաստանում. փայտամշակման բիզնեսում ներդրել է ավելի քան \$100 մլն: 2006թ. Արևմտյան Վրաստանի Ծալենջիսայի և Ճխորոցկուի շրջաններում ընկերությունը 20 տարի ժամկետով անտառներ է գնել: Ընկերությունը ձեռք է բերել նաև վրացական «Բազիսբանկի» բաժնետոմսերի 90%-ը \$100 մլն-ով և ներկայումս տնօրինում է այդ վարկային հաստատության 92,98%-ին, որը

⁹ Վրացական «Նյուսդեյ» տեղեկատվական գործակալությանը Չինաստանում Վրաստանի Արտակարգ և լիազոր դեսպան Դավիթ Ափցիաուրու «Ի՛նչ ապագա ունեն վրաց-չինական հարաբերությունները» հարցազրույցից // Информационное агентство «Ньюсдэй». URL: <http://newsday.ge/index.php?newsid=6374> (ղիտվել է՝ 24.06.2018).

¹⁰ Правительство Грузии выкупит у китайской Hualing 200 квартир для расселения беженцев // Информационный портал «Грузия Online». URL: <http://www.apsny.ge/2014/soc/1416092115.php> (ղիտվել է՝ 24.06.2018).

մտնում է Վրաստանի խոշոր բանկերի տասնյակի մեջ¹¹: 2014թ. հոկտեմբերին Չենգու քաղաքում, առևտրատնտեսական կապերի գծով միջկառավարական հանձնաժողովի նիստում, քննարկվեց վրացյինական համագործակցության լայն շրջանակ, ընդ որում՝ գլխավոր ուղղություններից մեկը համարվեց գործընկերությունը գյուղատնտեսության և էներգետիկայի զարգացման ոլորտում: Դիտարկվեցին չինական ներդրումների ավելի ինտենսիվ ներգրավման հնարավորությունները, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ներդրումը Վրաստանում գյուղտնտապրանքների արտադրությունում: Հանձնաժողովի նիստի ընթացքում ստորագրվեց համաձայնագիր ՉՏՀ-ի և Վրաստանի միջև, որի համաձայն՝ մելիորատիվ-ռոռզման աշխատանքների համար ՉՏՀ-ն Վրաստանին նվիրել է 26 անուն 225 միավոր հատուկ շինարարական տեխնիկա՝ \$10 մլն ընդհանուր արժեքով: Չինաստանն արտադրում է բավական բարձրորակ տուրբիններ էներգասեկտորի և սարքավորումներ էլեկտրակայանների համար, որոնք ոչնչով չեն զիջում եվրոպականներին: Արժեք/որակ հարաբերակցությունը չինական արտադրանքը դարձնում է բարձր մրցունակ, ինչը շատ կարևոր է Վրաստանի համար: Այսպիսով, արդեն 2014թ. վերջին Չինաստանը Վրաստանի առևտրային երրորդ խոշոր գործընկերն էր¹²:

Վրաստանում նկատվում է հետաքրքրության աճ չինարեն սովորելու հարցում: Կոնֆուցիուսի ինստիտուտը ստեղծվել է չինական Լանչժոուի համալսարանի և Թբիլիսիի Ազատ համալսարանի միջև գործընկերային կապերի հիմքի վրա: Այն բացվել է Չինաստանի կրթության նախարարության և Վրաստանում չինական

¹¹ Китайская международная компания «Промышленно-торговая группа Синьцзян Хуалин» приобрела 90 проц. акций грузинского коммерческого банка «Базис Банк» // Китайский информационный интернет-центр — russian.china.org.cn. URL: http://polpred.com/?ns=1&ns_id=589716 (դիտվել է՝ 24.06.2018).

¹² В январе-феврале 2015 года объем экспорта из Грузии в Китай повысился на 271%. URL: <http://sputnik-georgia.ru/economy/20150331/217493960.html> (դիտվել է՝ 24.06.2018).

դեսպանության աջակցության շնորհիվ: Չինական կողմն ինստիտուտին նվիրել է ավելի քան 2 հազար հատոր դասագիրք և գեղարվեստական գրականություն: Վրաստանում Չինաստանի դեսպան Յուե Բինի խոսքերով՝ ավելի քան 600 ուսանող սովորում է չինարեն, նրանցից ամենահաջողակները պարգևատրվում են թոշակներով: Բացի այդ, վրացի ուսանողների ուսումը չինական բուհերում լիովին ֆինանսավորվում է Չինաստանի կառավարության կողմից¹³: Չինարենի հանդեպ աճող հետաքրքրությունը պայմանավորված է ՉԺՆ տնտեսության բարձր մակարդակով: Վրաստանում բացվում են չինական մի շարք խոշոր ընկերությունների ներկայացուցչություններ և, հետևաբար, չինարենը դառնում է ամենապահանջվածներից մեկը¹⁴:

Վրաստանը ներառված է արտասահմանյան զբոսաշրջության թիրախային երկրների ցուցակում չինացի քաղաքացիների համար, ինչը նշանակում է փոխանակումների և համագործակցության նոր փուլ երկու երկրների միջև: Երկու երկրների միջև գործնական կապերի և հումանիտար շփումների ակտիվացման նպատակներով 2011թ. հունիսի 11-ից իրականացվում են ուղիղ չվերթեր Չինաստանի և Վրաստանի միջև¹⁵: 2014թ. հոկտեմբերին Չինաստանի խոշոր քաղաքներից մեկում՝ Գուանչժոուում, բացվեց քաղաքաշինական նորարարությունների Երկրորդ միջազգային համաժողովը, որտեղ զեկուցմամբ հանդես եկավ Թբիլիսիի քաղաքապետ Դ.Նարմանիան: Նա պատմեց վրաց-չինական կոնսոր-

¹³ Վրաստանում Չինաստանի դեսպան Յուե Բինի հարցազրույցը վրացական «Նյուսդեյ» տեղեկատվական գործակալությանը // Информационное агентство «Ньюсдэй». URL: <http://newsday.ge/index.php?newsid=16483> (դիտվել է՝ 2.06.2018).

¹⁴ В Грузии растёт интерес к изучению китайского языка // Информационное агентство «Синьхуа». URL: http://russian.china.org.cn/international/txt/2013-03/28/content_28380580.htm (դիտվել է՝ 24.06.2018).

¹⁵ Прямым авиасообщением между Китаем и Грузией воспользовались 46 тыс. пассажиров // Информационное агентство «Синьхуа». URL: <http://www.aviaport.ru/digest/2014/06/23/292795.html> (դիտվել է՝ 24.09.2018).

ցիումի կողմից կառուցվող՝ քաղաքը շրջանցող երկաթուղու մասին, կոնսորցիումի մեջ ընդգրկված են վրացական «Կամուրջշին» ԲԸ-ն և չինական երկաթուղային շինընկերությունը: Թբիլիսիի քաղաքապետը պատմեց նաև կենտրոնական Վրաստանում չինական «*China Nuclear Industry*» ընկերության կողմից արագընթաց ավտոմայրուղու կառուցման մասին¹⁶: Թբիլիսիի և Գուանչժոուի միջև ստորագրվեց հուշագիր բարեկամության մասին: Գուանչժոուն իր մասշտաբով, արտադրությամբ և տնտեսական զարգացմամբ հասել և անցել է Սինգապուրից: Ուստի, ինչպես հույս ունի Վրաստանի մայրաքաղաքի աշխատակազմը, երկկողմանի շահավետությունը կնպաստի նրա տնտեսական վերելքին¹⁷:

Այսպիսով, հարկ է հատուկ նշել ՉԺՀ-ի և Վրաստանի հաջողությունները միմյանց միջև տնտեսական շփումների ինստիտուցիոնալացման հարցում, որոնց առանցքում է պաշտոնական Պեկինի «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտի» նախաձեռնությունը:

ՉԺՀ նախագահ Սի Չինփինը, ինչպես հայտնի է, 2013թ. առաջ քաշեց «Մետաքսի ճանապարհի» վերածնման և դրա երկայնքով տեղակայված երկրների՝ միասնական տնտեսական գոտում միավորվելու նոր ռազմավարական գաղափարը: Այս նախաձեռնության հիմքում դրված է այն գաղափարը, որ հանրահայտ հնագույն առևտրային միջանցքը ցայժմ չօգտագործված հնարավորություններ ունի: «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտի» հայեցակարգը հենվում է մի շարք կարևոր կետերի վրա՝ քաղաքական համագործակցություն, ճանապարհային ցանցի համատեղ օգտա-

¹⁶ Давид Нармания выступил на втором международном форуме урбанистических инноваций // Информационное агентство «Ньюсдэй».

URL: <http://newsday.ge/index.php?newsid=14125> (ղիսվել է՝ 4.08.2018).

¹⁷ Между Грузией и Китаем оформлено соглашение о сотрудничестве // Информационно-аналитический портал «Взгляд в бизнес и политику».

URL: http://bpi.ge/index.php?option=com_content&view=article&id=30749%3A2014-11-30-18-23-45&catid=1%3Alatest&lang=ka (ղիսվել է՝ 4.07.2018).

գործում, առևտրի ազատ զարգացում, անսահմանափակ դրամաշրջանառություն և տարբեր ժողովուրդների շահերի միավորում: Ընդգծվում է, որ նրանց գործողությունների կոորդինացումը տեղի է ունենալու նրանց միջև առկա բնական տարբերությունների անվերապահ պահպանմամբ: Եթե այդ ամենը ստացվի այնպես, ինչպես մտածել են «Նոր Մետաքսի ճանապարհ» նախագծի նախաձեռնողները, ապա աշխարհի խոշորագույն տնտեսություններից մեկը, հնարավոր է, երկրների գոտին իր երկայնքով վերածի գլոբալ համաշխարհային ներդրումների ձգողական կենտրոնի:

Չինաստանը վարում է լայնամասշտաբ տնտեսական եքսպանսիա դեպի համաշխարհային ապրանքաշուկաներ: Սպառման շուկաների փնտրտուքում Չինաստանը մտադիր է Վրաստանն օգտագործել որպես տարանցման միջանցք իր արտադրանքի համար: Ներկայումս Վրաստանում գործող կառավարությունը ևս համաձայն է իր երկրի՝ որպես տարանցիկ պետության դերի էլ ավելի մեծացման անհրաժեշտության մասին կարծիքին, ինչը նշված է որպես հիմնական գերակայություն «Վրաստան-2020» տնտեսական զարգացման ազգային ռազմավարությունում¹⁸: Այսպիսով, նախկին պատկերացումը վրացական միջանցքի մասին՝ որպես միջանցք, որը նախատեսված է բացառապես դեպի Արևմուտք էներգակիրներ տարանցելու համար, այսօր արդեն միանգամայն այլ նշանակություն է ստանում:

Միևնույն ժամանակ, ընդգծվում է, որ վրացական և չինական կողմերի միջև փոխգործակցության պոտենցիալը դեռ նոր է սկսել դրական թափ հավաքել: Տնտեսական ինքնիշխանության ապահովման այլ ռեսուրսների բացակայությունը, ինչպես հայտնի է, հանգեցրել են այն բանին, որ Վրաստանը վերածվել է տարանցիկ պետության: Բայթում նավահանգիստը, ամենայն հավանականությամբ, Եվրասիական տարանցման միջանցքի շրջանակներում որոշ ժամա-

¹⁸ Новый великий шелковый путь — какую он пользу принесет Грузии?
URL: <http://commerciant.ge/old1/?menuid=91&id=14365&lang=3> (դիտվել է՝ 12.01.2015).

նակներից ի վեր Չինաստանում դիտարկվում է որպես դեպի Եվրոպա նրա «պատուհաններից» մեկը: Ի դեպ, վրաց-չինական համագործակցությունն այսօր ավելի շուտ հայտնի է որպես «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտի» բիզնես նախագծի մի մաս: Չինական ղեկավարությունն, ընդ որում, մշտապես ընդգծում է, որ Պեկինի այդ նախաձեռնությունն իր հիմքում ենթադրում է բացառապես տնտեսական կոոպերացիա և մասնակից երկրների քաղաքական ինտեգրման որևէ նպատակ չունի:

Վրաստանի ներկայիս իշխանությունը, որն արտահայտում է «Վրացական երազանք» կոալիցիայի շահերը, իր արտաքին քաղաքականությունում համակողմանիորեն աջակցում է չինական նոր ուղղությանը, ինչն ուժեղացնում է ՉԺՀ-ի հետ բազմակողմանի կապերի հաստատման ուղեգիծը: Չինաստանի ղեկավարության առաջ քաշած նախագծին մասնակցելու Վրաստանի պատրաստակամությունը հաստատեց փոխվարչապետ և էկոնոմիկայի նախարար Գեորգի Կվիրիկաշվիլու պաշտոնական այցելությունը ՉԺՀ 2015թ. մարտին: Երկու երկրների պաշտոնական ներկայացուցիչները համատեղ աշխատանքի համաձայնագիր կնքեցին «Տնտեսական գոտի – նոր Մետաքսի ճանապարհ» նախագծի կենսագործման մասին: Վրաց նախարարն այցելեց նաև 2015թ. հիմնադրված «Մետաքսի ճանապարհի հիմնադրամ»: Այդ կառույցի անմիջական տնօրինման տակ է գտնվում \$40 մլրդ: Այդ միջոցներից Չինաստանը մտադիր է ֆինանսավորել այն պետություններին, որոնք արդեն ցանկություն են հայտնել մասնակցել չինական նախագծին: Այսպիսով, Թբիլիսիից եկած պատվիրակությունը դարձավ առաջինը Հարավային Կովկասի երկրներից, որը գործնական հանդիպում ունեցավ այդ հիմնադրամի ղեկավարության հետ¹⁹: Կառավարու-

¹⁹ Министр экономики и устойчивого развития Грузии Георгий Квирикашвили в рамках рабочего визита в Китай встретился с руководителем Фонда шелкового пути Вангом Янцзы. URL: <http://sputnik-georgia.ru/economy/20150309/217434851.html> (դիտվել է՝ 24.06.2015).

թյան ղեկավար Իրակլի Ղարիբաշվիլին 2015թ. մայիսին վերստին նշեց, որ Չինաստանի և Վրաստանի միջև սկսվում է հարաբերությունների միանգամայն նոր փուլ, որն իր երկրին կվերադարձնի, վարչապետի կարծիքով, պատմական ֆունկցիան՝ լինել կապող օղակ Եվրոպայի և Ասիայի միջև²⁰: Ըստ երևույթին, վրաց պաշտոնական անձինք բավական մեծ ջանքեր են գործադրել՝ համոզելու համար չինական կողմին իրենց մտադրությունների լրջության հարցում: Այս մասին է վկայում Թբիլիսիում ՉՏՀ դեսպան Յուե Բինի հայտարարությունը, որի կարծիքով՝ կովկասյան այդ երկիրն ակներև աշխարհագրական առավելություններ ունի: «Ես քանիցս վրաց քաղաքական գործիչների հետ զրուցել եմ «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտի» հայեցակարգի մասին, և նրանց տրամադրվածությունը միշտ դրական է եղել»²¹, - ասում է չինացի դիվանագետը: Սակայն չինական նախաձեռնությանն ընդգրկվել ցանկացող երկրների ուրվագծերը դեռևս չափազանց ամորֆ են և հայեցակարգային հստակեցում չունեն, և դրանց մասին առայժմ կարելի է լոկ կռահել ըստ պաշտոնական այցելությունների, արդեն ստորագրված մի շարք առևտրատնտեսական համաձայնագրերի և համատեղ հռչակագրերի:

2015թ. փետրվարին Թբիլիսիում ընդունեցին առաջին ապրանքախմբաքանակը Չինաստանից: Վրացական մամուլն շտապեց սա անվանել պատմական իրադարձություն: Գրեթե 6 հազ. կմ ճանապարհը բեռնատար գնացքը հաղթահարել էր ընդամենը 9 օրում: Ենթադրվում է, որ Վրաստանը կդառնա ինքնատիպ տարանցման հանգույց: Հենց վրացական նավահանգիստներից են բեռները շարունակելու իրենց ճանապարհը դեպի Եվրոպայի երկրներ: Առաջին փուլում ակնկալվում է, որ այս երթուղով ամեն

²⁰ Шелковый путь Грузии.

URL: <http://newcaucasus.com/?newsid=7267> (ղիտվել է՝ 24.06.2015).

²¹ Юэ Бин: Концепция экономического пояса Шелкового пути Китая совпадает с национальной стратегией развития Грузии.

URL: <http://newcaucasus.com/index.php?newsid=6895> (ղիտվել է՝ 24.06.2015).

տարի Վրաստանից դուրս կկրվի 50-60 հազար կոնտեյներ՝ տարբեր ապրանքներով²²: Սակայն դեռևս վաղ է խոսել Տրանսկասպյան երթուղու լիաժամվալ աշխատանքի մասին, քանի որ Վրաստանի ներկայիս աշխարհագրական դիրքի օգտագործումը սահմանափակված է հուսալի ճանապարհային ենթակառուցվածքի բացակայության պատճառով²³:

2015թ. մայիսին «Anaklia Eco Park and Port» կոնսորցիումի ղեկավար Թեյմուրազ Կարչավան աշխատանքային այցով մեկնեց Պեկին, որտեղ ռազմավարական գործընկերության համաձայնագիր կնքեց «POWERCHINA» կորպորացիայի հետ:

Համատեղ խորհրդակցություններ տեղի ունեցան նաև «Մետաքսի ճանապարհի հիմնադրամի» ղեկավարության հետ, պայմանավորվածություն ձեռք բերվեց չինական կողմից խոշոր տարածաշրջանային հարի՝ Անակլիա խորջրյա նավահանգստի, արդյունաբերական էկոպարկի, օդանավակայանի և ազատ տնտեսական գոտու, ինչպես նաև այլ տրանսպորտային ենթակառուցվածքի ֆինանսավորման հարցերի շուրջ²⁴:

Հաշվի առնելով այն, որ թե՛ քաղաքականապես, թե՛ տնտեսապես Վրաստանը գտնվում է դեռևս ոչ բավարար նպաստավոր իրավիճակում, «Վրացական երազանքի» ներկայացուցիչները որոշեցին հարցը լուծել նոր դոնորից առավելություններ ստանալու ճանապարհով, որի դերում այսօր ընտրված է Չինաստանը: Մանավանդ որ Վրաստանի մասնակի վերակողմնորոշումը դեպի Արևելք օրեցօր դառնում է էլ ավելի տեսանելի: Մինևույն ժամանակ, կարելի է ընդգծել, որ փոխգործակցության պոտենցիալը վրացական և չինա-

²² Грузия встретила первый грузовой поезд из Китая.

URL: <http://mir24.tv/news/economy/12137548> (նիսովել է՝ 12.05.2015).

²³ *Майлян Б.В.*, КНР и страны Южного Кавказа в 2015 году: обзор динамики политико-экономических отношений // Конфуцианские чтения в РАУ: материалы 2-й международной конференции, т. 2, Ер., 2017, с. 35-53.

²⁴ Глава Anaklia Eco Park ведет переговоры в Китае по вопросу порта Анаклиа.

URL: <http://sputnik-georgia.ru/economy/20150530/227732058.html#ixzz3fzG6SVq2> (նիսովել է՝ 24.06.2015).

կան կողմերի միջև նոր է սկսում դրական ինտերգիա հավաքել: Դրա սրընթաց զարգացումը խոստանում է շուտով փոքր-ինչ փոխել նաև Վրաստանի արտաքին քաղաքական դոկտրինը, որում հիմա ամրագրված է բացառապես արևմտյան կողմնորոշումը²⁵:

Վրաստանի մայրաքաղաքը երկու անգամ՝ 2015թ. հոկտեմբերին և 2017թ. նոյեմբերին ընդունել է «Մեծ Մետաքսի ճանապարհ» միջազգային ներդրումային համաժողովին: Վրաստանի իշխանությունները շտապեցին հայտարարել, որ արդեն ձեռք է բերվել սկզբունքային պայմանավորվածություն շահագրգիռ կողմերի միջև՝ Չինաստանից Եվրոպա Հարավային Կովկասով ամենակարճ տրանսպորտային միջանցքի նախագծի մասին²⁶:

Որպես հետևանք՝ Վրաստանը դարձավ տարածաշրջանում առաջին երկիրը, որը Չինաստանի հետ ազատ առևտրի համաձայնագիր կնքեց: 2018թ. հունվարի 1-ից այն մտավ ուժի մեջ: Պայմանագրի համաձայն՝ վրացական արտադրանքի և ծառայությունների 94%-ը կարտահանվի չինական շուկա առանց մաքսատուրքի, գրոյական սակագնով²⁷:

«Ոսկե գեղմի» երկիրն ամենայն հավանականությամբ իր համար փնտրում է Չինաստանի գլխավոր գործընկերոջ կարգավիճակը հարավկովկասյան տարածաշրջանում: Մանավանդ որ հիմա բոլորին արդեն բավականաչափ պարզ է, որ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հնարավորությունը բավական անորոշ է և աղոտ: Վրաստանի քաղաքական գործիչների մեծ մասն ընդունում է, որ ՆԱՏՕ մտնելու խնդիրն իրենց երկրի համար այսօր մղվել է բավական հետին պլան, բայց այդ նպատակը դեռևս վերջնականապես հանված չէ օրակարգից: Ի դեպ, Վրաստանը,

²⁵ Ministry of Foreign Affairs. Foreign Policy Strategy 2006—2009. P. 3. Available at: http://www.mfa.gov.ge/index.php?lang_id=GEO&sec_id=562 (ղիտվել է 12.01.2015).

²⁶ В Тбилиси завершился международный Форум «Великий шелковый путь» URL: http://russian.news.cn/2015-10/17/c_134721820.htm (ղիտվել է 5.11.2018).

²⁷ Грузинский рывок в Китай. URL: <http://newcaucasus.com/economy/16761-gruzinskiy-ryivok-v-kitay.html> (ղիտվել է 7.11.2018).

որն առայժմ ոչ մի կերպ չի հրաժարվում իր սկզբունքային եվրոպական ընտրությունից, ՉԺՀ-ի հետ սերտ համագործակցության գուգահեռ գիծ ընտրելով՝ դրանով իսկ հույս ունի Արևմուտքի աչքին իր համար էլ ավելի մեծ արժեք ձեռք բերել՝ որպես կարևոր կապող օղակ Արևելքի հետ:

Ինչևէ, Չինաստանի հետ Վրաստանի տնտեսական համագործակցության խորացման հեռանկարը Արևմուտքին խելամիտ այլընտրանքի ստեղծման փորձ է թվում: Հույս կա, որ դա դրականապես կանդրադառնա նաև ռուս-վրացական հարաբերությունների վրա և կկարողանա դրանք հանգեցնել կառուցողական բանակցային գործընթաց սկսելուն: Արդյունքում՝ վրաց-չինական համակողմանի համագործակցության հաստատումն, ամենայն հավանականությամբ, պոտենցիալ առումով նոր հնարավորություններ է ստեղծում նաև ռուսական դիվանագիտության համար²⁸:

Մոսկվան քանիցս հասկանալ է տվել, որ կցանկանար Վրաստանը տեսնել որպես չեզոք պետություն²⁹: Իսկ Վրաստանի չեզոքությունը՝ նրա կայունության նպատակով, ըստ էության պետք է հենվի շահագրգիռ բոլոր կողմերի (այդ թվում հարավկովկասյան տարածաշրջանում ազդեցության համար մրցակցող կողմերի) հավասարակշռության և գուպման փոխադարձ մեխանիզմների վրա: Նշենք, որ ոչ հավաքական Արևմուտքը, ոչ Մոսկվան առանձին վերցրած ի վիճակի չգտնվեցին ստեղծելու վստահություններ շնչող անվտանգության համալիր համակարգ հետխորհրդային տարածքի այս բավական պայթյունավտանգ հատվածում: Այստեղ պարբերաբար կրկնվող ճգնաժամերը պայմանավորվում են ոչ միայն Ռուսաստանի և Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի

²⁸ *Маилян Б.В.*, Перспективы урегулирования российско-грузинских отношений в контексте сотрудничества с КНР // Новая идентичность и конфликтный потенциал постсоветского пространства. Сборник научных статей, Москва: изд. «РУДН», 2017, с. 68-73.

²⁹ *Россия и Грузия: в поисках выхода. Документы общественной политики*, разработанные российскими и грузинскими экспертами. Тбилиси: Грузинский фонд стратегических и международных исследований, 2011, с. 22.

հարաբերություններով, այլ նաև տարածաշրջանային անվտանգության համակարգի էական բացթողումներով, համակարգ, որը բավական արդյունավետ չգտնվեց հակամարտությունները կանխելու համար:

Այսօր իրավիճակը թելադրում է ճշտել տարիներով կուտակված խնդիրների լուծման այն մեթոդները, որոնք սպառել են իրենց հնարավորությունները: Ի դեպ, խոսքը լոկ այն մեթոդների մասին է, որոնք ազատված կլինեն հնարավոր քաղաքական-դիվանագիտական նորարարությունների հանդեպ Մոսկվայում և Թբիլիսիում, Թեհրանում և Անկարայում, Երևանում և Բաքվում կանխատեսելի ակերգիկ ռեակցիայից: Նման նոր մոտեցումներից մեկը կարող է դառնալ տարածաշրջանի գործերում ազդեցիկ, սակայն «հավասար չափով հեռու» կողմի ներգրավումը: Նկատի ունենք այն, որ որպես Վրաստանի չեզոք կարգավիճակի երաշխավոր, ՌԴ-ի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողքին, կարող է հանդես գալ նաև ՉԺՀ-ն: Այս երկրի բիզնես կառույցների սրընթաց տնտեսական ներթափանցումը Վրաստան կարող է պաշտոնական Պեկինին հանգեցնել այն կարևոր մտքին, որ նա, հենվելով իր ոչ փոքր միջազգային հեղինակության վրա, կարող է անհրաժեշտ և անգամ էական երաշխիքներ տալ իր վրացի գործընկերներին իրենց երկրի անվտանգության ոլորտում: Չինաստանն իր հեղինակությամբ կարող է ազդել նոր տարածաշրջանային աշխարհաքաղաքական դասավորության ձևավորման վրա: Այսպիսով, կվերանա արևմտյան հանրույթի կառույցներում Թբիլիսիի ինտեգրվելու անհրաժեշտությունը, մանավանդ Հյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության ձևաչափով: Նշենք, որ Վրաստանի անվտանգության բավական հուսալի երաշխիքները կարող են կայանալ միայն նրա արտաքին քաղաքականության բազմավեկտորությամբ և տարբեր գործընկերների հետ հաղորդակցություն կառուցելու նրա պատմականորեն պայմանավորված կարողությամբ:

Չինաստանի լայն տնտեսական ներկայությունը «Ոսկե գեղմի երկրում» կարող է որոշ չափով չեղարկել վրացական իսթերիշմենթի վախերն իր անվտանգության հետ կապված՝ միաժամանակ չվնասելով Ռուսաստանի սկզբունքային շահերն այդ նուրբ հարցում: Նման փոխզիջումային լուծումը, ըստ մեզ, կարող է բավարարել ռուսական կողմին՝ հաշվի առնելով Չինաստանի հետ նրա ներկայիս հարաբերությունների դրական դինամիկան: Վրացչինական համագործակցության ընդլայնումը կարող է ժամանակի ընթացքում նպաստել Թբիլիսիի մասնակցությանը նաև միջազգային այնպիսի կազմակերպություններում, որոնցում ներկայացված են Մոսկվայի և Պեկինի շահերը: Օրինակ, կարող է խոսք լինել, մասնավորապես, կովկասյան այդ երկրի՝ ՇՀԿ կառույցում ինտեգրվելու մասին³⁰: Այս հանգամանքը, իր հերթին, կօգնի արմատական հանգուցալուծումներ գտնել այն խնդիրների համար, որոնք ծանր բեռի պես ընկած են ռուս-վրացական հարաբերությունների վրա: Մանավանդ որ Վրաստանի և Ռուսաստանի միջև հարաբերությունների կարգավորումը միայն երկկողմանի ձևաչափով պակաս հեռանկարային է դառնում: Չինաստանի հետ մերձեցումը Թբիլիսիին թույլ կտա իրեն ավելի վստահ զգալ՝ մինևույն ժամանակ այնքան էլ չվրդովեցնելով Կրեմլին: Իրադարձությունների նման զարգացումը երկխոսության նոր հնարավորություններ է բացում, որն այս փուլում կողմերից չի պահանջի վերանայել իրենց հիմնարար սկզբունքները կամ կատարել զիջումներ, որոնք անընդունելի են ներքաղաքական պատճառներով: Չնայած հասկանալի օբյեկտիվ դժվարություններին, որոնք դեռ պիտի ծագեն, ռուս-վրացական հարաբերություններում, մեր պատկերացմամբ, հնարավորությունների պատուհան կբացվի, իսկ դրանց հեռանկարների քննարկումը կարող է վարվել ավելի ազատ և անկանխակալ: Ավելին, որոշակի պահի չինական կողմը, դիցուք, չի

³⁰ Пекин согласен, чтобы Грузия стала членом Шанхайской Организации Сотрудничества? URL: <https://inosmi.ru/world/20060628/228450.html> (դիտվել է՝ 7.11.2018).

կարողանա այլևս խուսափել ռուս-վրացական հարաբերությունների քննարկումից, քանի որ սկզբունքային երաշխիքների անհրաժեշտության կարիք կունենա Վրաստանում իր իսկ ոչ փոքր ներդրումների համար:

Այսպիսով, կարելի է նպատակյին հասնելու նոր միջոց սահմանել. Չինաստանի հետ Մոսկվայի և Թբիլիսիի մերձեցումը դրական ճանապարհ կդառնա նաև Վրաստանի և Ռուսաստանի հարաբերությունների կարգավորման համար: Այս հիմքի վրա կարելի է ձևավորել ընդունելի մոդուս-վիվենդի, որի մոդերատոր, թերևս, կարող է հանդես գալ Պեկինը, որն այսօր գործընկերային հարաբերություններ է կառուցում բոլոր ուղղություններով: Չինաստանն այսօր հանդես է գալիս ոչ թե որպես իր կարճաժամկետ շահերի վրա սևեռված խաղացող, այլ որպես ուժ, որը երկարաժամկետ և իր բոլոր գործընկերների համար շահավետ հարաբերություններ է հաստատում:

Եվրասիայում իր շահերի ռացիոնալ պաշտպանությունը Չինաստանին թույլ է տալիս իրականացնել դրական և ներառական քաղաքականություն: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ Հարավային Կովկասում նույնպես Չինաստանին առայժմ հաջողվում է հետևել բոլորի համար ընդունելի ուղեգծի: Եվ դա իսկապես այդպես է: Պեկինն ամրապնդում է կապերը հարավկովկասյան երեք երկրների հետ՝ խուսափելով դասական աշխարհաքաղաքականության ծուղակներից: Այնուամենայնիվ, չինական մասնակցության չափի մեծացումը Հարավային Կովկասի տնտեսությունում անխուսափելիորեն հանգեցնելու է նաև այստեղ նրա աշխարհաքաղաքական ազդեցության ուժեղացմանը: Ընդ որում՝ ոչ թե առանձին վերցրած երկրում, այլ ամբողջ տարածաշրջանում: Այսպիսով, ամենայն որոշակիությամբ կարելի է ասել, որ հետագայում ևս արժե ուշադիր հետևել Չինաստանի «Մետաքսի ճանապարհի» դիվանագիտությանը, որն, անշուշտ, ավելի շատ հետաքրքիր նորարարություններ է խոստանում:



ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*«Նորավանք» ԳԿՀ
փորձագետ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Ներկայում իրենց արտերկրյա համայնքների հանդեպ Հայաստանի և Չինաստանի սփյուռքյան քաղաքականության հայեցակարգային հիմքերն արդեն ձևավորվել և կայուն բնույթ են ստացել՝ երկու պետությունների քաղաքականության կարևոր բաղկացուցիչ դառնալով: Հայաստանում հայկական սփյուռքի դերի մասին սկսեցին ակտիվորեն խոսել դեռևս խորհրդային տարիներին (1940-1950-ական թթ.), երբ հայ ժողովուրդը, որը Համաշխարհային երկրորդ պատերազմի ռազմաճակատներ էր ուղարկել Հայկական ԽՍՀ բնակչության ավելի քան 1/3-ին (մոտ 500 հազար մարդ), պատերազմի ավարտից հետո մարդկային ռեսուրսների կարիք ուներ, որոնք ակտիվ մասնակցություն կունենային իրենց հայրենիքի կայացման և զարգացման գործին: 1970-ական թթ. պատմական հայրենիքի կայացման և զարգացման գործընթացում սփյուռքի դերի նշանակալիության մասին սկսեցին խոսել ՉԺՀ-ում: Սույն գաղափարը ներկայացվեց Դեն Սյաոպինի տնտեսական բարեփոխումների ծրա-

գրում («Բարեփոխումների և բաց քաղաքականություն»), որոնք սկսվեցին 1978թ. և շարունակվում են ցայսօր: 2007թ. ՉԿԿ ԿԿ նախկին գլխավոր քարտուղար Հու Ջինթաոն Արտերկրի չինացիների ասոցիացիայի 4-րդ համաշխարհային բարեկամական կոնֆերանսում ասաց. «Դաժան պայմաններում բազմաթիվ սերունդների անդադրում աշխատանքով արտերկրի չինացիները հասել են ակնառու հաջողությունների մի շարք բնագավառներում և անզնահատելի ավանդ են ունեցել չինական ազգի անկախության և վերածննդի գործում, Չինաստանի բարեփոխումների, բաց քաղաքականության և արդիականացման, չինացի ժողովրդի և ողջ աշխարհի ժողովուրդների միջև փոխըմբռնման ու բարեկամության ամրապնդման գործում»¹: Միյուրքի նշանակալի դերն իրենց ելույթներում բազմիցս ընդգծել են նաև Հայաստանի Հանրապետության ղեկավարները: Իր ելույթներից մեկում ՀՀ նախկին վարչապետ Մերժ Սարգսյանը նշել է. «Մեր ընդհանուր նպատակը զարգացած, ուժեղ տնտեսություն և ժողովուրդ ունենալն է՝ միավորված լավ Հայաստանի կերտման գաղափարով: Միյուրքն ուժեղ է Հայաստանով, իսկ Հայաստանը՝ սփյուռքով»²:

Արդի փուլում չինական և հայկական սփյուռքը, իրենց հնարավորությունների սահմաններում, անում են ամեն ինչ, որպեսզի նպաստեն ոչ միայն կեցության երկրի զարգացմանն ու առաջընթացին, այլև ակտիվ մասնակցություն ունենան իրենց էթնիկ հայրենիքների արդիականացմանը: Ավելին, նրանք յուրատեսակ «կամուրջ» են հանդիսանում, որոնք միավորում և օժանդակում են էթնիկ հայրենիքների և կեցության երկրների միջև վստահելի և բարեկամական հարաբերությունների հաստատմանը: Դրանով իսկ սփյուռքերն անզնահատելի ներդրում են ունենում ողջ աշ-

¹ ՉԿԿ ԿԿ նախկին գլխավոր քարտուղար Հու Ջինթաոյի զեկուցումը Արտերկրի չինացիների ասոցիացիայի IV համաշխարհային բարեկամական կոնֆերանսում, <http://md.china-embassy.org/eng/gdxw/t1507416.htm>, 10.10.2018թ.:

² ՀՀ նախկին վարչապետի զեկուցումը «Հայաստան-Միյուրք» համահայկական IV համաժողովում, <https://www.mfa.am/ru/paforum/>, 10.10.2018թ.:

խարհում խաղաղության պահպանման և զարգացման գործում: Կարծում ենք, որ Չինաստանի արդի սփյուռքյան քաղաքականության հիմք են հանդիսացել Դեն Սյաոպինի՝ 1970-ականների վերջին «Բարեփոխումների և բաց քաղաքականության» մեջ տեղ գտած գաղափարները: Այս համատեքստում հատուկ ուշադրության է արժանի Դեն Սյաոպինի հետևյալ թեզը. «Եթե խոսում ենք Չինաստանի մասին, զգալի զարգացման նրա հնարավորություններն այնքան էլ շատ չեն: Բայց, ի տարբերություն աշխարհի մյուս երկրների, այն ունի իր հատուկ հնարավորությունները: Օրինակ, մենք մի քանի տասնյակ միլիոն հայրենասեր հայրենակիցներ ունենք ծովից այն կողմ, նրանք արդեն մեծ ավանդ են ներդրել երկրի զարգացման մեջ» [1, p. 168]: Երբ մենք խոսում ենք իր սփյուռքի հետ Չինաստանի համագործակցության կոնկրետ ուղղությունների մասին, ինչպիսին են, օրինակ՝ ներդրումների ներգրավման քաղաքականությունը, չինացի ուսանողների ուսումնառությունն արտասահմանում, հայրենադարձության քաղաքականությունը և այլն, պետք է նշենք, որ Դեն Սյաոպինը, ըստ էության, սկզբունքորեն նոր բան չէր բացահայտում, քանի որ այդ ամենն արդեն գոյություն ունեցել էր Չինաստանի պատմության մեջ: Բայց Դեն Սյաոպինի մոտեցման սկզբունքային նորարարությունն այն էր, որ նա հուսցյառն՝ ՉԺՀ-ի համար այդքան անհրաժեշտ ֆինանսատնտեսական և մտավոր իր ներուժով հանդերձ, ներառեց երկրի վերածննդի ռազմավարական ծրագրում: Նա սփյուռքի հետ համագործակցությունը բարձրացրեց պետական առաջնահերթ խնդիրների մակարդակի՝ պետության կարևորագույն գործառույթ հռչակելով չինացի ողջ ժողովրդին ծառայելը:

Հանուն արդարության նշենք, որ իր սփյուռքի հետ հարաբերությունների նման քաղաքականություն մի փոքր ավելի վաղ (1940-1950-ական թթ.) փորձեց իրականացնել Խորհրդային Հայաստանի բարձրագույն իշխանությունը, սակայն սփյուռքում կարծիքները զատվեցին: Օրինակ, Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կու-

սակցության ներկայացուցիչները բարեկամական փոխհարաբերություններ էին հաստատում ԽՍՀՄ-ի, հետևաբար և Հայաստանի հետ, իսկ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները սփյուռքում հակախորհրդային քաղաքականություն էին իրականացնում: Դրա հետևանքով հայկական սփյուռքը մասնատվեց և ամուր ու միասնական վստահելի հարաբերություններ չկարողացավ հաստատել Խորհրդային Հայաստանի հետ: 1991թ. հետո, երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը և նախկին խորհրդային 15 հանրապետությունները (այդ թվում և Հայաստանը) դարձան միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտներ, սփյուռքն սկսեց ակտիվորեն օգնել էթնիկ հայրենիքին: Սփյուռքահայերը զգալի ավանդ ներդրեցին արցախահայերի՝ Արցախի անկախությունը նվաճելու գործում, ինչպես նաև օգնեցին Հայաստանի Հանրապետությանը հետխորհրդային շրջանում, երբ երկրի տնտեսությունը չափազանց ցածր մակարդակի էր, իսկ ժողովրդին պարզապես չէին բավականացնում առաջին անհրաժեշտության ապրանքները: Առանց սփյուռքի տնտեսական օգնության Հայաստանի համար անհամեմատ ավելի դժվար կլինեք հաղթահարել 1990-ականների ծանրագույն հետխորհրդային շրջանը և ապահովել տնտեսության բնականոն գործունեությունը:

Հայաստանը և ՉԺՀ-ն մեծ պատասխանատվությամբ և եռանդով կատարում են, եթե կարելի է այսպես ասել, համայն հայության և, համապատասխանաբար, չինացիների կամ, համենայնդեպս, նրանց մշակութային կենտրոնների հովանավորի դերը: Ամեն տարի երկու պետություններում տեղի են ունենում միջոցառումներ, որոնք նպաստում են սփյուռքի հետ համախմբմանը («Չինացիների համաշխարհային կոնֆերանսը» և «Համաշխարհային հայկական կոնգրեսը»): Ամեն տարի ՀՀ-ից և ՉԺՀ-ից այս կամ այն երկիր են մեկնում պատվիրակություններ՝ այնտեղ գտնվող ազգային համայնքների պատմությանն ու արդի վիճակին ծանոթանալու նպատակով: Օրինակ, չինական պատվիրակությունները կոչ են անում

իրենց սփյուռքի ներկայացուցիչներին «նպաստել հայրենիքի միավորման մեծ գործին»: Ինչպես հայտնի է, ՉԺՀ ղեկավարները Թայվանի հետ անհաշտ պայքար են մղում սփյուռքում ազդեցության համար, որպեսզի այն լիովին մեկուսացնեն արտաքին աշխարհից: Իսկ հայկական պատվիրակություններն իրենց սփյուռքի ներկայացուցիչներին կոչ են անում ակտիվորեն մասնակցել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, ինչպես նաև նպաստել հայկական երկրորդ պետության՝ Արցախի Հանրապետության (ԼՂՀ) անկախության ճանաչմանը:

Հայաստանի և ՉԺՀ սփյուռքյան քաղաքականության անբաժանելի մասն է ազգային մշակույթին իրենց սփյուռքերի ներկայացուցիչներին առնչակցելը, ընդ որում՝ մշակույթին՝ այդ բառի լայն իմաստով, ներառյալ և՛ պատմությունը, և՛ հայրենիքի ներկա վիճակի, և՛ մայրենի լեզվի իմացությունը: Երկու պետությունների կառավարությունները կարևոր են համարում, որպեսզի սփյուռքի իրենց հայրենակիցները մշտապես զգան կենդանի կապն իրենց էթնիկ հայրենիքի հետ, հպարտանան էթնիկ հայրենիքների մեծ քաղաքակրթությամբ և նոր վերելքով, ջանան սեփական ավանդը ներդնել հայրենիքի արդիականացման գործում: Հայաստանի և ՉԺՀ սփյուռքերի հետ մշակութային կապերն իրականացվում են ամենատարբեր ձևերով: Երևանը և Պեկինը հրատարակում են մայրենի լեզվի, հայրենական պատմության, մշակույթի և աշխարհագրության դասագրքեր՝ մեծ խմբաքանակներով: Իրենց սփյուռքերի պաշտոնական ներկայացուցիչների ակտիվ օգնությամբ նրանք այդ դասագրքերն ուղարկում են արտասահման: Հայկական և չինական մեծ համայնքներ ունեցող երկրներում բացվում են դպրոցներ, եկեղեցիներ, տաճարներ և մայրենիի ուսուցման կենտրոններ (կոնֆուցիական կենտրոններ, կիրակնօրյա դպրոցներ և այլն), իսկ այնտեղ աշխատող ուսուցիչների համար՝ կատարելագործման դասընթացներ, ուղևորություններ պատմական հայրենիք՝ մասնակցելու համար կոնֆերանսների և փորձի փոխանակման խորհրդակցություն-

ների: Երեխաների համար ստեղծվում են ամառային ճամբարներ, որտեղ նրանք հնարավորություն են ունենում ծանոթանալու պատմական հայրենիքին, նրա մշակույթին և պատմությանը և միաժամանակ սովորելու մայրենի լեզուն: Օրինակ, իրենց երկրից դուրս ապրող չինացի երիտասարդների ուսուցման համար ՉԺՀ-ում հատուկ ստեղծվել են մի քանի բուհեր, որոնք տնօրինվում են Պետխորհրդի Էմիգրացիոն ծառայության կողմից (օրինակ՝ Գուանչժոուի Չինանի համալսարանը): Նման բուհեր կան նաև Հայաստանում. մասնավորապես, այդպիսին է Հայ-ռուսական համալսարանը, որտեղ ուսանողների և աշխատակազմի ավելի քան 40%-ը հայկական սփյուռքի ներկայացուցիչներ են³: Գիտակրթականից բացի, իրականացվում են նաև մշակութային-զբոսաշրջային միջոցառումներ՝ ուղղված իրենց պատմական հայրենիքի հետ սփյուռքի ներկայացուցիչների մերձեցմանը: Սփյուռքի երիտասարդության համար կազմակերպվում են զբոսաշրջային տարբեր ճամփորդություններ երկրով մեկ: Չինաստանում նման ուղևորություններն անվանվում են «Խորանանք չինական արմատների մեջ»: 2017թ. դրանց մասնակցել է ավելի քան 5 հազար մարդ, դրա արդյունքում նրանց մեջ սաստկացել է ազգային հպարտության զգացումը, ավելացել հետաքրքրությունը չինական մշակույթի հանդեպ⁴: Հայաստանը նույնպես նման միջոցառումներ է իրականացնում: 2009 թվականից երկրում հաջողությամբ մեկնարկել է «Արի տուն» ծրագիրը, որին կարող են մասնակցել 13-17 տարեկան սփյուռքահայ երիտասարդները: Այս ծրագրի հիմնական նպատակներն են՝ երիտասարդ սփյուռքահայերի ծանոթացումը Հայաստանի պատմությանը, մշակույթին և հանրային կյանքին, ընտանեկան և հոգևոր ավանդույթներին, աջակցությունը հայրենիքի հետ ամուր կապի ձևավորմանը, նրանց մեջ ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը և հայաստանցի տարեկիցների հետ ջերմ հարաբերությունների հաստատմանը⁵:

³ Հայ-ռուսական համալսարանի պաշտոնական կայք, <http://rau.am/rus/>, 14.10.2018թ.:

⁴ *Տուրիզմը Չինաստանում*, <http://www.cnto.org/news/>, 14.10.2018թ.:

⁵ <http://aritun.am/ru/about-the-project-2/>, 16.10.2018թ.:

Բնականաբար, սփյուռքյան քաղաքականության մեջ ևս, ինչպես ցանկացած այլ ոլորտում, առկա են խառնաշփոթ, ֆորմալիզմ և բացասական կողմեր: Ամենանկատելի բացասական կողմերից է չինացի սփյուռքագետ մի շարք գիտնականների քննադատությունը ՉԺՀ վարած սփյուռքյան քաղաքականության հանդեպ: Մասնավորապես, չինացի հայտնի գործիչ Ֆե Չյամենը նախագգուշացնում է, որ չինական ծագում ունեցող օտարերկրյա քաղաքացիների հանդեպ քաղաքականությունը պետք է լինի շրջահայաց, կոռեկտ, որպեսզի հանկարծ անգիտակցաբար նրանք չդրվեն հարվածի տակ: «Ոմանք այսպես են կարծում. եթե քո երակներում չինական արյուն է հոսում, դու պարտավոր ես հայրենասեր լինել: Թե ինչպես է դասավորվում արտասահմանյան չինացիների ճակատագիրը՝ մենք, պարզվում է, կարող ենք չանհանգստանալ, և չենք էլ անհանգստանում. իբր, եթե նրանց վնաս պատճառենք, այդ ոչինչ: Նրանք՝ «ղեղին նախնիների» զավակներն ու թոռները, պետք է սիրեն երկիրը, ավանդ ներդնեն չորս մոդեռնիզացիաներում, և նրանք այդպես էլ անելու են: Նման մտայնությունը իդեալիստական է և վնասակար» [2, c. 265]: Հայրենիքի հետ սփյուռքյան ներկայացուցիչների կապի ամրապնդմանը փոքր-ինչ այլ կերպ է նպաստում կառավարության ուշադրությունը վերահայրենադարձվողների հանդեպ: ՉԺՀ-ում այն բնավ չի հանգեցվում առևտրային նախագծերում գործարարների կամ որակյալ մասնագետների ներգրավմանը: ՉԺՀ ղեկավարները հովանավորում են բոլոր վերահայրենադարձվողներին, որոնց մեջ կան նաև բազմաթիվ փախստականներ, որոնք ժամանակին ստիպված են եղել հապճեպ վերադառնալ հայրենիք՝ փախչելով տարաձայնություններից և վտանգներից: Նման վիճակում հայտնված հայրենակիցների համար երկրում ստեղծված են հատուկ պայմաններ⁶: Սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունների սույն փուլում այս կապը շատ թույլ է: Հայրենադարձների ադապտացման գործըն-

⁶ *Стратегия национальной безопасности КНР*, http://www.ciis.org.cn/chinese/2018-02/26/content_40232263.htm, 18.10.2018г.

թացն այնքան էլ դյուրին չի անցնում, քանի որ օգնությունը պետության կողմից այնքան էլ ակտիվ չէ, ինչպես, օրինակ, ՉԺՀ-ում: 1990-ական թթ. սկզբին Հայաստանը տասնյակ հազարավոր հայ փախստականներ ընդունեց Ադրբեջանի Հանրապետությունից, որոնք, կարճ ժամանակ ապրելով Հայաստանում, հիմնականում վերաբնակություն հաստատեցին այլ պետություններում (ՌԴ, ԱՄՆ, ԵՄ): Եթե սա կարելի է արդարացնել այդ ժամանակ օգնություն տրամադրելու՝ երկրի տնտեսական անկարողությամբ, ապա ի՞նչ պատճառով է, որ վերջին մի քանի տարիներին հազարավոր հայ փախստականներն Իրաքից և Սիրիայից նույնպես երկար ժամանակով չեն մնում էթնիկ հայրենիքում: Կարծում ենք՝ պատճառն այն է, որ անկախության տարիներին երկրում այդպես էլ չի ստեղծվել «Աբսորբցիայի նախարարություն», որը պատասխանատու կլիներ պետության կողմից ներգաղթյալներին, սփյուռքից հայրենիք վերադարձողներին ցուցաբերվելիք օգնության համար:

Հայաստանի և Չինաստանի սփյուռքերը մասնակցում են տարբեր բարեգործական ակցիաների: Պարբերական բնույթ են կրում սփյուռքի ներկայացուցիչների նվիրատվություններն իրենց էթնիկ հայրենիքների զարգացման համար: Չինաստանում նման նվիրատվությունների 70%-ը բաժին է ընկնում Գուանդուն նահանգին, որտեղ բազմաթիվ «ցյաոսյաններ» (այս վայրերից բազմաթիվ արտագաղթողներ են լինում) կան: Իսկ հայկական սփյուռքի պարագայում՝ ամեն տարի անցկացվում են «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տելեթոններ և Հեռուստամարաթոններ: Երկու դեպքում էլ հավաքված միջոցներն ուղղվում են դպրոցների, գրադարանների, թատրոնների և կինոթատրոնների, մշակույթի տների, ինչպես նաև կամուրջների, ճանապարհների, ջրամբարների և հիդրոէլեկտրակայանների նորոգմանն ու կառուցմանը: Ավելորդ չէ նշել, որ հայկական և չինական սփյուռքերի ներկայացուցիչները լուրջ ավանդ են ներդնում իրենց ծննդավայրերի բարեկեցության գործում՝ արտասահմանից իրենց հարազատներ-

րին դրամական միջոցներ փոխանցելով: ՀՀ ԿԲ տվյալներով՝ Հայաստանում ընդհանուր առմամբ 2016թ. դրամական փոխանցումների ներոսքը կազմել է \$1 մլն 532,8: *Աղյուսակ 1*-ում ներկայացված է այն պետությունների ցանկը, որտեղից ՀՀ-ն ամենաշատ դրամական միջոցներն (տրանսֆերտներ) է ստանում:

Աղյուսակ 1

Տրանսֆերտների ներհոսքը Հայաստան 2017թ., \$)⁷

Երկիրը	Փոխանցման գումարը (մլն)
Ռուսաստանի Դաշնություն	853,1
ԱՄՆ	144,7
Ղազախստան	32, 1
Գերմանիա	32
ԱՄԷ	21,7
Ֆրանսիա	20,5
Այլ	273,8

Անկասկած, էթնիկ հայրենիքի հետ սփյուռքի միավորման ճանապարհն անցնում է նաև տարատեսակ և բազմաթիվ հասարակական կազմակերպությունների և հայրենակցական միությունների ստեղծման միջով, որոնք նպաստում են պատմական հայրենիքի հետ սփյուռքի կապերի ամրապնդմանը: Սփյուռքի համախմբման կարևոր գործիք են տեղի հայալեզու և չինալեզու լրատվամիջոցները: Օրինակ, Չինաստանում նման ՋԼՄ-ին տրվում են հետևյալ հանձնարարականները. «Ավելի շատ գրել, ավելի շատ խոսել, ավելի շատ տեղեկացնել այն ամենի մասին, ինչն օգտակար է չինական համայնքներում ներդաշնակության հաստատման համար, և չգրել, չխոսել, չտեղեկացնել այն մասին, ինչն օգուտ չի բերում ներդաշնակության հաստատմանը» [3, p. 248]: Հարկ է նշել, որ չափազանց դժվար է ճիշտ որոշել, թե որքանով են այդ հանձնարարականները կատարվում, բայց դրանք ինքնին արդեն վկայում են սփյուռքի

⁷ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, <https://www.cba.am/>, 20.10.2018թ.:

կյանքի վրա ազդելու պաշտոնական Պեկինի մեծ հնարավորությունների մասին: Հայաստանը նույնպես օգտագործում է սփյուռքի վրա ազդեցության այս մեթոդը, մասնավորապես՝ հայկական թերթերի միջոցով, որոնք լայնորեն տարածված են համայնքներում: Մեր օրերում մեծ ուշադրություն է հատկացվում նաև ինտերնետ-պորտալների հատուկ կայքերին, որոնք նույնպես սփյուռքի վրա պատմական հայրենիքի ազդեցության գործիք են ծառայում:

Իրենց սփյուռքերի հետ Հայաստանի և Չինաստանի աշխատանքի գլխավոր ուղղություններից մեկը ներդրումների և տեխնոլոգիաների ներգրավումն է: Էժան աշխատուժը և պոտենցիալ առումով անսահմանափակ շուկան Չինաստանի գլխավոր հաղթաթուղթն են այս հարցում, սակայն դրանց հասանելիության համար պետք է ստեղծվեն համապատասխան պայմաններ, առաջին հերթին՝ օրենսդրական բազա: Հիմնարար փաստաթուղթը Պետխորհրդի 1999թ. օգոստոսի 19-ի որոշումն է «Հուացյառների և Սյանգանի (Հոնկոնգ) ու Աոմենի (Մակաո) հայրենակիցների ներդրումների խրախուսման մասին»⁸, ինչպես նաև 1986թ. հոկտեմբերի 11-ի Պետխորհրդի որոշումը «Օտարերկրյա ներդրումների խրախուսման մասին»: Դրանց լրացնելու են գալիս նաև իշխանության կենտրոնական և տեղական մարմինների այլ որոշումներ: Հայաստանի պարագայում փոքր-ինչ այլ է: Նախ՝ դա փոքր շուկան է (3 մլն-ից քիչ մարդ), երկրորդ՝ երկիրը գտնվում է շրջափակման մեջ իրեն սահմանակից չորս պետություններից երկուսի (Թուրքիա և Ադրբեջան) կողմից, երրորդ՝ կայունության և անվտանգության, ավելի ճիշտ՝ Ադրբեջանի Հանրապետության կողմից պոտենցիալ ռազմական սպառնալիքի հարց կա («ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» արդեն քանի տարվա վաղեմության կարգավիճակ) և, իհարկե, չորրորդ՝ կոռուպցիայի բարձր մակարդակը երկրում (107-րդ տեղ 2017թ.)⁹:

⁸ ՉԺՀ Պետական խորհրդի պաշտոնական կայք, <http://www.gov.cn/>, 22.10.2018թ.:

⁹ Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2017թ. հրապարակված «*Transparency International*»-ի կողմից, <https://www.transparency.org/>, 27.10.2018թ.:

Կարծում ենք, որ այս և այլ փաստեր հիմնարար պատճառներ են հանդիսանում, որոնք բացասական ազդեցություն են գործում երկրի ներդրումային քաղաքականության վրա անգամ սփյուռքահայերի շրջանում: Իսկ Չինաստանում ստեղծված են պոտենցիալ ներդրողների հետ կապերի տարատեսակ խողովակներ, գործարկվում են ներդրումների տարբեր ձևեր, խրախուսվում են տեխնոլոգիաների ներկրումը և պատրաստի արտադրանքի արտահանումը: Ընդ որում՝ օտարերկրյա քաղաքացիություն ունեցող էմիգրանտները ներդրումների հարցերում փաստորեն հավասարեցված են չինական քաղաքացիություն ունեցող էմիգրանտներին: Մակայն առանձին դեպքերում երկրորդներն առավելություն ունեն առաջինների հանդեպ: Հուսացատների գերակա վիճակն ամրագրված է «Որոշման» 5-րդ հոդվածում, որտեղ ասվում է. «Եթե ներդրողը հուսացատ է կամ հայրենակից Սյանգանից կամ Աոմենից, և կապիտալ է ներդնում ու ստեղծում է ամբողջովին իրեն պատկանող կամ համատեղ ձեռնարկություն, նման ներդրողը, սույն «Որոշմամբ» տրամադրվող արտոնություններից բացի, օգտվում է այն բոլոր արտոնություններից, որոնք տրամադրվում են օտարերկրյա կապիտալով ձեռնարկություններին՝ համապատասխան օրենքներով և պետության որոշումներով»¹⁰: ՉԺՀ իշխանությունների այս ներդրումային քաղաքականությունն արդարացնում է իրեն: Երկրում կատարված ներդրումների ավելի քան 80%-ը կատարվում է չինական սփյուռքի կողմից, հիմնականում՝ Հարավարևելյան Ասիայից:

Վերջին ժամանակներս իր առջև խնդիր դնելով երկրի արևմտյան շրջանների (Մինցզյան-ույդուրական ինքնավար շրջան) յուրացումը՝ ՉԺՀ ղեկավարությունն ավելի մեծ ուշադրություն է հատկացնում այդ աշխատանքին սփյուռքում գտնվող չինացի գործարարների մասնակցությանը: Պետխորհրդի՝ հարցով զբաղվող գրասենյակն օգնում է չինական սփյուռքի ներկայացուցիչներին

¹⁰ Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2017թ.՝ հրատարակված «*Transparency International*»-ի կողմից, <https://www.transparency.org/>, 27.10.2018թ.:

տեղական իշխանությունների հետ միասին ստեղծել համատեղ կառույցներ արևմտյան նահանգներում՝ գյուղատնտեսության և արդյունաբերական տեխնոլոգիաների զարգացման համար: Հարկ է նշել նաև, որ ՉԺՀ այս շրջանը մեկնակետ կդառնա XXI դարի խոշոր տնտեսական նախագծերից մեկի՝ «Նոր Մեծ Մետաքսի ճանապարհի» համար, որը կմիացնի Արևմտյան Եվրոպայի Արևմտյան Չինաստանի հետ: Բնականաբար, սույն նախագծում կարևոր դեր է խաղում նաև չինական սփյուռքը, որն օժանդակում է Չինաստանի և կեցության երկրների միջև վստահելի և բարեկամական հարաբերությունների հաստատմանը: Հայաստանի կարգավիճակը՝ որպես այս նախագծում տարանցիկ երկրի, մինչև այժմ որոշված չէ, նախագիծն արդեն գործում է, իսկ առաջին բեռնափոխադրումները Եվրոպա են հասցվել ՀՀ-ի շրջանցմամբ: Նախագծի շրջանակներում կարող է գործադրվել Բաքու-Թբիլիսի-Կարս (Չինաստան-Ղազախստան-Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա-Եվրոպա) երկաթուղին, իսկ Իրան-Հայաստան երկաթուղային մայրուղին, որը դրական դեր կունենար սույն նախագծին Հայաստանի ինտեգրման համար, այդպես էլ չի կառուցված: Մակայն կա նաև դրական դինամիկա: Ակտիվորեն կառուցվում է Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին, որտեղ որոշակի ավանդ ունեն նաև սփյուռքահայերը: Սփյուռքի ջանքերի շնորհիվ առաջիկայում քարտեզին կհայտնվի երրորդ ուղին, որն Արցախը կկապի Հայաստանի հետ (Արաքս գետի ափով):

Ամփոփում

Ամփոփելով՝ նշենք, որ հարկ է ընդգծել սփյուռքին հատկացվող դերի կարևորությունը՝ այն ընկալելով որպես Հայաստանի և Չինաստանի ինքնատիպ «շարունակություն»: Այս պետությունների բարձրագույն ղեկավարները մշտապես մասնակցում են իրենց սփյուռքերին նվիրված համագգային միջոցառումներին, իսկ արտասահմանյան ուղևորությունների ժամանակ պարտադիր ծրա-

գրում ընդգրկում են հանդիպումներ տեղի համայնքների ներկայացուցիչների հետ: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ հայկական և չինական սփյուռքերի հետ փոխգործակցության խնդիրները լուծելիս գործի են դրվում ՀՀ և ՉԺՀ պետական և հասարակական ինստիտուտների, նախարարությունների և գերատեսչությունների կառուցվածքային ստորաբաժանումների լայն շրջանակ, դեսպանությունները և ներգործության ու փոխգործակցության այլ մեխանիզմներ: Սփյուռքի հետ համագործակցության հարցերով հիմնական գործառույթները դրված են ՀՀ և ՉԺՀ արտաքին գործերի նախարարությունների վրա: Սփյուռքահայերի և չինական սփյուռքի ներկայացուցիչների իրավական պաշտպանության հարցերը դրված են Հայաստանի Հանրապետության և ՉԺՀ մի շարք օրենսդրական ակտերի հիմքում, ինչպես նաև կեցության երկրների հետ միջկառավարական համաձայնագրերում (քաղաքացիների երկկողմանի պաշտպանության և աշխատանքով փոխադարձ ապահովման հնարավորության վերաբերյալ): Այս ամբողջ համալիրը դարձել է հիմք սփյուռքահայերի և չինական սփյուռքի ներկայացուցիչների հանդեպ նոր պետական քաղաքականության պատմական, քաղաքական, իրավաբանական և բարոյահոգեբանական ձևավորման համար: Վերոնշյալ միջոցառումները և օրենքները վկայում են ՀՀ և ՉԺՀ ձգտման մասին՝ պաշտպանելու իրենց հայրենակիցների իրավունքներն ու շահերը, ինչպես նաև ամրապնդելու սոցիոմշակութային կապերը սփյուռքի հետ ողջ աշխարհում:

Գրականություն

1. *Ma L., Cartier C. Lanham*, The Chinese Diaspora: Space, Place, Mobility, and Identity, N.Y.: ASQ, 2013.
2. *Бирюков В.*, Китайцы в США и американо-китайские отношения на современном этапе, Москва: Проспект, 1983.

3. *Purcell V.*, The Chinese in Southeast Asia, London: Kelmscott Press, 2003.
4. *Hong L.*, The Chinese Overseas, N.Y.: ASQ, 2006. Vol. 1.
5. *Redding G.*, The spirit of Chinese capitalism, Berlin: Suhrkamp Verlag, 1990.
6. *Wei Z.*, Why Is Foreign Investment in China Concentrated in the Coastal Areas? // N.Y.: Harvard Asia Quarterly, 2015.
7. *Ларин А.*, Китай и зарубежные китайцы, Москва: Просвещение, 2014.
8. ՉԿԿ ԿԿ նախկին գլխավոր քարտուղար Հու Ջինթաոյի զեկուցումը Արտերկրի չինացիների ստացիացիայի IV համաշխարհային բարեկամական կոնֆերանսում, <http://md.china-embassy.org/eng/gdxw/t1507416.htm>, 10.10.2018թ.:
9. ՀՀ նախկին վարչապետի զեկուցումը «Հայաստան-Սփյուռք» IV համահայկական համաժողովում, <https://www.mfa.am/ru/paforum/>, 10.10.2018թ.:
10. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2017թ.՝ հրապարակված Transparency International»-ի կողմից, <https://www.transparency.org/>, 27.10.2018թ.:
11. ՉԺՀ Պետական խորհրդի պաշտոնական կայք, <http://www.gov.cn/>, 22.10.2018թ.:
12. «Արի տուն» ծրագրի պաշտոնական կայք, <http://ariton.am/ru/about-the-project-2/>, 16.10.2018թ.:
13. Հայ-ռուսական համալսարանի պաշտոնական կայք, <http://rau.am/rus/>, 14.10.2018թ.:
14. ՉԺՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, http://www.ciis.org.cn/chinese/2018-02/26/content_40232263.htm, 18.10.2018թ.:
15. Տուրիզմը Չինաստանում, <http://www.cnto.org/news/>, 14.10.2018թ.:

**40 ЛЕТ ПОЛИТИКИ РЕФОРМ И ОТКРЫТОСТИ КИТАЯ:
РАЗВИТИЕ И ВОЗМОЖНОСТИ**
материалы международной
научной конференции

Технические редакторы
Лилит МЕЛИКСЕТАН
Хонарик КАРАУГЛАНЯН
Лусине БАГРАМЯН

**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՓՈՒՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲԱՅ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 40 ՏԱՐԻ.
ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
միջազգային գիտաժողովի նյութեր**

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լիլիթ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսետ, ծավալը՝ պայմ. 14 տպ.մամուլ:
Տպաքանակը՝ 300: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Հայկարվի» ՍՊԸ տպարանում: